ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2008

Զարգացումը
Վերահսկողությունը
Կարգավորումը

2009

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Ֆինանսական համակարգի վերահսկողությունը և կարգավորումը 5

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները 2008 թվականին 22

Վերահսկողությունը 2008 թվականին 34

Կադրերի վերապատրաստումը և համագործակցությունը այլ երկրների վերահսկողների հետ 38

ՀՀ ֆինանսական համակարգը 2008 թվականին 41

Առևտրային բանկեր 41

Բանկային համակարգի կապիտալը 43

Բանկային համակարգի պարտավորությունները 45

Բանկային համակարգի ակտիվները 48

Բանկային համակարգի ֆինանսական արդյունքները 53

Բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը 56

Վարկային կազմակերպություններ 60

Ապահովագրական ընկերություններ 62

Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներ 71

Գրավատներ 74

Արտարժույթի առք ու վաճառքի փոխանակման կետեր, արժութային դիլերներ 75

Վճարահաշվարկային կազմակերպություններ 75

Վճարահաշվարկային համակարգ 77

Վերահսկողության զարգացման հեռանկարները 90

Հավելվածներ 97

ՆԱԽԱԲԱՆ

2008 թվականին ՀՀ ֆինանսական համակարգը պահպանել է զարգացման ու աճի միտումները և տարվա վերջին ծագած դժվարությունների պայմաններում դրսևորել բարձր ճկունություն:

Չնայած համաշխարհային ֆինանսական շուկայի խառնաշփոթին, տարվա առաջին երեք եռամսյակների ընթացքում ֆինանսական համակարգը շարունակել է զարգանալ նախորդ տարի գրանցված աճի տեմպերով: Համաշխարհային ճգնաժամի բացասական ազդեցությունները Հայաստանի ֆինանսական համակարգ են ներթափանցել միայն տարվա չորրորդ եռամսյակում, երբ տնտեսական աճի տեմպերը զգալի նվազել են իրական հատվածի գրեթե բոլոր ճյուղերում:

Տարվա ընթացքում ՀՀ մակրոտնտեսական զարգացումները փոքր-ինչ տարբեր են եղել՝ առաջին 3 եռամսյակներում պահպանվել են երկնիշ տնտեսական աճի՝ նախորդ տարիներին դրսևորված միտումները, բնակչության եկամուտների աճի մակարդակը, արտաքին առևտրի ծավալները, իսկ չորրորդ եռամսյակում տնտեսական աճը դանդաղել է: Արդյունքում՝ 2008 թվականի տնտեսական աճը կազմել է 6.8%՝ կրկնակի զիջելով նախորդ տարվա երկնիշ՝ 13.7%, ցուցանիշը: Կտրուկ նվազել է շինարարության ծավալների աճը՝ հիմնականում պայմանավորված մասնավոր ֆինանսավորման սահմանափակությամբ և պետական հատկացումների կրճատմամբ: 2008 թվականին նվազել են մասնավոր տրանսֆերտների աճի տեմպերը (հատկապես չորրորդ եռամսյակում), բնակչության եկամուտների աճի տեմպերը և ավելացել են անորոշությունները տնտեսության հետագա զարգացման վերաբերյալ: Բնակչության եկամուտների աճի տեմպերի նվազումը նպաստել է նաև ծառայությունների ոլորտի աճի տեմպի անկմանը:

2008 թվականին դանդաղել են ֆինանսական միջնորդության խորացման՝ նախորդ տարիներին դրսևորված միտումները: Բանկային համակարգի ակտիվների և տրամադրված վարկերի կշիռները ՀՆԱ-ում ավելացել են 3.6 և 3.9 տոկոսային կետերով՝ կազմելով համապատասխանաբար՝ 28.0% և 16.9%: Բանկային համակարգի ավանդներ/ՀՆԱ հարաբերությունը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել 12.3%: Ֆինանսական միջնորդության խորացմանը խոչընդոտել են վերջին եռամսյակում Հայաստան ներթափանցած բացասական սպասումներն ու ճգնաժամի ազդեցությունները:

Բանկային համակարգը շարունակում է գերակա դիրք ունենալ ֆինանսական համակարգում՝ բանկային հաստատությունների ակտիվները կազմում են ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 92%-ը:

2008 թվականին բանկային համակարգի հատկանշական դրսևորումներից են եղել.

- Տնտեսության վարկավորման աճի տեմպը նախորդ տարվա համեմատ նվազել է, սակայն դեռևս շատ բարձր է՝ 51%:
- Բանկային համակարգի զուտ արտաքին ակտիվները, վարկավորման աճի պարագայում, շարունակել են նվազել և տարեվերջին կազմել են բացասական 147 մլրդ դրամ մեծություն:
- Դրամի արժեզրկման սպասումների հետևանքով դոլարայնացման մակարդակը կտրուկ մեծացել է (ընդ որում՝ միայն չորրորդ եռամսյակում). դրամային ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 3.4 տոկոսային կետով, դրամային պարտավորությունների կշիռը՝ 6.8 տոկոսային կետով և կազմել համապատասխանաբար՝ 60.6 % ու 44.9%:

- Հաշվի առնելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հնարավոր ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա և զարգացումների վերաբերյալ անորոշությունները՝ առևտրային բանկերը խստացրել են վարկավորման պայմանները, որը ևս նպաստել է վարկերի աճի տեմպերի նվազմանը:
- Նախորդ տարվա վերջի համեմատ չաշխատող վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերի մեջ աճել է 2.0 տոկոսային կետով և կազմել 4.4%:

Հայաստանի բանկային համակարգը կարողացել է տարվա ընթացքում ավելացնել կապիտալի մեծությունը՝ ի հաշիվ կանոնադրական կապիտալի համալրման և տարվա շահույթի:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Կենտրոնական բանկի կարևորագույն խնդիրներից է ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության ապահովումը, վճարահաշվարկային համակարգի անխափան գործունեության ու զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության ու հետագա զարգացման համապատասխան պայմանների ապահովումը, ինչպես նաև ներդրողների և ֆինանսական ծառայությունների սպառողների շահերի պաշտպանությունը:

Վերը նշված խնդիրների լուծման նպատակով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» և ֆինանսական համակարգը կարգավորող մի շարք այլ օրենքներով Կենտրոնական բանկին վերապահվել են կարգավորման և վերահսկողության գործառույթներ:

Ֆինանսական համակարգի վերահսկողության և կարգավորման կազմակերպումը Կենտրոնական բանկում

Կենտրոնական բանկում ֆինանսական համակարգի վերահսկողության ու կարգավորման գործառույթները իրականացվում են հիմնականում հետևյալ աստիճանակարգով (ներքևից վերև).

1. Կենտրոնական բանկի կառուցվածքային ստորաբաժանումներ,
2. Կենտրոնական բանկի մշտական գործող հանձնաժողովներ,
3. Կենտրոնական բանկի նախագահ,
4. Կենտրոնական բանկի խորհուրդ:

1. Ֆինանսական վերահսկողություն և կարգավորում իրականացնող ստորաբաժանումների խնդիրներն ու գործառույթները

Ֆինանսական վերահսկողության և կարգավորման համար պատասխանատու և աջակցող ԿԲ հիմնական ստորաբաժանումներն են՝ Ֆինանսական վերահսկողության, Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների, Վիճակագրության, Իրավաբանական վարչությունները:

Ֆինանսական վերահսկողության վարչության հիմնական խնդիրներն են.

- ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների (բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և միջնորդների, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի, արժեթղթերի շուկայում մասնագիտացված մասնակիցների, գրավատների, արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձանց), իսկ օրենքով

նախատեսված դեպքերում նաև արժեթղթերի հրապարակային առաջարկություններով հանդես եկող անձանց և հաշվետու թողարկողների գործունեության վերահսկողություն:

- Լուծարվող (ինքնալուծարվող) բանկերի, ապահովագրական ընկերությունների, վարկային կազմակերպությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների գործունեության վերահսկողություն:
- ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրողների, ներդրումային ծառայություններից օգտվող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն:
- Արժեթղթերի արժանահավատ գնագոյացման և արժեթղթերով գործարքների վճարահաշվարկային, ինչպես նաև արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի հաստատագրման և հաշվառման համակարգերի գործունեության ապահովում՝ համակարգում առկա ռիսկերի բացահայտման, գնահատման և կանխարգելման միջոցով:
- Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների և արժեթղթերի թողարկողների գործունեության թափանցիկության ապահովում:

Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչության հիմնական խնդիրներն են.

- Կատարելագործել և/կամ մշակել ու ներդնել ֆինանսական համակարգում ռիսկերի նվազեցման համար արդյունավետ վերահսկողության մեթոդաբանություն:
- Հետևել ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման միտումներին, ախտորոշել և գնահատել ֆինանսական կայունությանը սպառնացող առկա և հնարավոր ռիսկերն ու խնդիրները:
- Կատարելագործել և/կամ ձևավորել բանկերի (նաև այլ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների) ռիսկերի նվազեցման ու կայուն գործունեության համար համարժեք կարգավորման դաշտ և վերջինիս կիրարկումն ապահովող համակարգված մեթոդաբանական բազա:
- Կատարելագործել և/կամ ձևավորել ֆինանսական միջնորդության ընդլայնման, ֆինանսական համակարգի կայուն զարգացման համար նպաստավոր և միջազգային բանկային հանրության (նաև այլ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների) կողմից ընդունված չափանիշներին համապատասխանող գործունեության ինստիտուցիոնալ տարրեր (հարաբերություններ, գործիքներ, մեթոդներ, մոդելներ, մոտեցումներ):
- Հետևել համաշխարհային ֆինանսական շուկայում ձևավորվող միտումներին ու զարգացումներին, նոր ֆինանսական տեխնոլոգիաներին և մշակել համապատասխան առաջարկներ ՀՀ ֆինանսական համակարգում դրանց հնարավոր ներդրման և կիրառման վերաբերյալ:
- Իրականացնել սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:

Իրավաբանական վարչության հիմնական խնդիրներն են.

- Կենտրոնական բանկի կողմից ընդունվող նորմատիվ և անհատական իրավական ակտերի համապատասխանության ապահովումը ՀՀ օրենսդրության նորմերին:
- Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների և կնքվող գործարքների՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովումը:
- Կենտրոնական բանկի շահերի պաշտպանությունը ՀՀ կամ այլ պետությունների դատարաններում:

- ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, օտարերկրյա ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի, արժեթղթերի շուկայում գործող մասնագիտացված անձանց, գրավատների, արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձանց լիցենզավորման, դրանց տարածքային ստորաբաժանումների գրանցման, ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման ու գրանցման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:
- ՀՀ բանկային, արժութային, ապահովագրական, արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, ինչպես նաև Կենտրոնական բանկի գործունեությանը առնչվող այլ օրենքների և իրավական ակտերի ստեղծմանն ու կատարելագործմանը օժանդակելը, Կենտրոնական բանկի ընդունած նորմատիվ իրավական ակտերի համակարգումը և դրանց կանոնակարգման վերաբերյալ առաջարկությունների մշակումը:
- Կենտրոնական բանկի միջազգային կապերի իրավական ապահովումը:

Վիճակագրության վարչության հիմնական խնդիրներն են.
- Տնտեսական վիճակագրության հավաքագրում, մշակում և վիճակագրական վերլուծություն (հարթեցում, դասակարգում, կանխատեսում, տարբեր ինդեքսների հաշվարկ և այլն):
- Տնտեսական վիճակագրության արժանահավատության ապահովում վարչության իրավասության շրջանակներում:
- Հավաքագրված և մշակված վիճակագրության ներկայացում լայն հասարակությանը՝ Կենտրոնական բանկի վիճակագրական և այլ հրապարակումների տեսքով:
- Կենտրոնական բանկի ստորաբաժանումների, Կենտրոնական բանկից դուրս այլ կազմակերպությունների միջև (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև արտասահմանյան երկրների) տեղեկատվության փոխանակման ապահովում և կանոնակարգում:
- Որոշակի երևույթների ուսումնասիրման համար վիճակագրական հարցումների իրականացում (անհրաժեշտության դեպքում՝ պարբերաբար):
- Վարկատուների կողմից Վարկային ռեգիստրին տրամադրվող տվյալների մուտքագրման, մշակման, օգտագործողներին տրամադրման և ստացվող տեղեկատվության արժանահավատության ապահովում, Վարկային ռեգիստրի զարգացում:

Վերոնշյալ վարչությունները իրենց առջև դրված հիմնական խնդիրներից ելնելով՝ իրականացնում են իրենց իսկ կանոնադրությամբ ամրագրված գործառույթները:

2. Կենտրոնական բանկի մշտական գործող հանձնաժողովներ

Ֆինանսական համակարգի վերահսկողության և կարգավորման գործառույթների իրականացմանը աջակցում են ԿԲ-ում գործող մշտական հանձնաժողովներից երկուսը՝
- Կենտրոնական բանկի վարչությունը,
- Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը:

Կենտրոնական բանկի վարչություն

Կենտրոնական բանկի վարչությունը Կենտրոնական բանկի նախագահին առընթեր խորհրդակցական մարմին է: Վարչության հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են երկու շաբաթը մեկ անգամ:

Վարչության անդամներն են՝ ՀՀ ԿԲ նախագահը, ՀՀ ԿԲ նախագահի տեղակալը, ստորաբաժանումների ղեկավարները: Վարչության նիստերը վարում է Կենտրոնական բանկի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալը:

Վարչության նիստերը գումարվում են ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ: Վարչության նիստերին կարող են մասնակցել Կենտրոնական բանկի խորհրդի անդամները: Վարչության անդամների կողմից խորհրդի նիստում քննարկվելիք հարցերը ներկայացվում են Կենտրոնական բանկի վարչություն:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը խորհրդակցական մարմին է և ունի իր իրավասությունների սահմաններում եզրակացություններ տալու իրավունք:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը քննարկում է.

- ✓ ֆինանսական կազմակերպությունների ստեղծմանը նախնական հավանություն տալու, գրանցելու և լիցենզավորելու հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցմանը և դրանց գործունեության դադարեցմանը /այդ թվում ժամանակավոր/ համաձայնություն տալու հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպությունների կանոնադրություններում փոփոխությունների և լրացումների գրանցման հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների (բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների) որակավորման, մասնագիտական համապատասխանության ստուգման և գրանցման հետ կապված հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպություններում նշանակալից և այլ մասնակցության ձեռքբերմանը նախնական համաձայնություն տալու հարցերը,
- ✓ ֆինանսական կազմակերպությունների վերակազմակերպման և լուծարման հարցերը,
- ✓ ազդագրի և առևտրի ազդագրի գրանցման հարցերը,
- ✓ արժեթղթերի տեղաբաշխման կասեցման, արժեթղթերի առևտրի կասեցման և դադարեցման հարցերը,
- ✓ արժեթղթերի կարգավորվող շուկայի և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների, դրանց փոփոխությունների և լրացումների գրանցման հարցերը,
- ✓ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների կամ այլ կերպ կարգավորվող անձանց վերահսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների, նրանց նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարության, ինչպես նաև պատժատեսակի որոշման հարցերը,
- ✓ Կենտրոնական բանկի իրավական ակտերով նախատեսված լիազորություններից բխող այլ հարցեր:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի անդամներն են՝ ՀՀ ԿԲ նախագահը (հանձնաժողովի նախագահն է), ՀՀ ԿԲ նախագահի տեղակալը (հանձնաժողովի նախագահի տեղակալն է), ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչության պետը, ՀՀ ԿԲ ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչության պետը, ՀՀ ԿԲ իրավաբանական վարչության պետը:

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին և նախագահողը: Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը: Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Նիստի արձանագրությունը պատրաստվում է նիստի օրվան հաջորդող վեց աշխատանքային օրերի ընթացքում, որը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Հանձնաժողովի եզրակացությունը տրվում է բաց քվեարկության արդյունքներով՝ նիստին ներկա գտնվող անդամների ձայների 2/3-ով: Հանձնաժողովի կողմից կայացված եզրակացությունը ներկայացվում է Կենտրոնական բանկի նախագահին կամ Կենտրոնական բանկի խորհրդին՝ ելնելով նրանց համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված իրավասությունների շրջանակից:

3. ՀՀ կենտրոնական բանկի նախագահը

Կենտրոնական բանկի նախագահը Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձն է: Կենտրոնական բանկի նախագահը պատասխանատու է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված ԿԲ խնդիրների իրագործման համար:

Կենտրոնական բանկի նախագահը՝

- կոորդինացնում և ապահովում է Կենտրոնական բանկի, նրա խորհրդի և խորհրդի անդամների բնականոն աշխատանքը,
- նախագահում է Կենտրոնական բանկի խորհրդի նիստերը, ստորագրում է Կենտրոնական բանկի խորհրդի նիստերի ակտերը և խորհրդի նիստերի արձանագրությունները,
- կազմակերպում է Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ ակտերի կատարումը,
- ներկայացնում է Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,
- տալիս է լիազորագրեր,
- հաստատում է Կենտրոնական բանկի կառուցվածքը, աշխատակիցների հաստիքացուցակը,
- բացառությամբ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի, նշանակում և ազատում է աշխատանքից Կենտրոնական բանկի ստորաբաժանումների ղեկավարներին և մյուս աշխատակիցներին,
- ընդունում է անհատական և ներքին որոշումներ ու կարգադրություններ, այդ թվում՝ վերստուգվող անձանց ստուգումներ նշանակելու մասին որոշումներ,
- իրականացնում է օրենքով Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ:

4. ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը

Կենտրոնական բանկի խորհուրդը ԿԲ կառավարման բարձրագույն մարմինն է: Խորհուրդը ընդունում է նորմատիվ և անհատական որոշումներ:

Խորհուրդը կազմված է ԿԲ նախագահից, նրա տեղակալից և հինգ անդամներից: Խորհրդի անդամը պատասխանատվություն է կրում ԿԲ խորհրդի կողմից գործունեության կոնկրետ ոլորտներում իրեն վերապահված պարտականությունների իրականացման համար: ԿԲ խորհրդի իրավասություններից[1] է նաև.

- բանկային գործունեության և այլ լիցենզիաների տրամադրումը, դրանց ուժը կորցրած կամ անվավեր ճանաչումը, բանկերի և այլ անձանց լիցենզավորման կարգի սահմանումը,
- օրենքով սահմանված կարգով բանկին, վարկային կազմակերպությանը կամ ապահովագրական ընկերությանն անվճարունակ ճանաչումը, դրանց նկատմամբ սնանկության վարույթի հարուցումը, բանկերի, վարկային կազմակերպությունների կամ ապահովագրական ընկերությունների վերակազմակերպման հետ կապված որոշումների ընդունումը,
- բանկերի գործունեությունը կարգավորող նորմատիվների և դրանց հաշվարկման կարգի հաստատումը,
- բանկերի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը նախնական համաձայնություն տալը կամ մերժելը,
- բանկերում և ապահովագրական ընկերություններում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների սահմանումը,
- բանկերի և ԿԲ կողմից լիցենզավորվող և վերահսկվող այլ անձանց կողմից ԿԲ ներկայացվող հաշվետվությունների ձևերի հաստատումը,
- պետական արժեթղթերով կատարվող գործառնությունների իրականացման կարգերի հաստատումը՝ համաձայնեցված ՀՀ Կառավարության լիազորված մարմնի հետ,
- «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը:

ԿԲ խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ նախագահի, նրա տեղակալի կամ խորհրդի առնվազն երեք անդամի պահանջով, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: ԿԲ խորհրդի նիստերն արձանագրվում են: ԿԲ խորհուրդը իրավասու է որոշումներ ընդունել, եթե նիստին ներկա են խորհրդի անդամներից առնվազն հինգը, այդ թվում՝ ԿԲ նախագահը կամ նրա տեղակալը: Որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկել նիստին ներկա գտնվող անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկման և կարգավորման գործընթացները

Բանկերի և վարկային կազմակերպությունների լիցենզավորումը

Բանկերի և վարկային կազմակերպությունների լիցենզավորումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզա-

[1] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը:*

վորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի, «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ի հիման վրա:

Բանկային գործունեության լիցենզավորման գործընթացը բաղկացած է երեք փուլից.

Առաջինը լիցենզիա ստանալուն նախնական հավանություն տալու փուլն է, որի ընթացքում նախաձեռնող անձինք Կենտրոնական բանկ են ներկայացնում միջնորդագիր, ստեղծվող բանկի կանոնադրության նախագիծը, ստեղծվող բանկի գործունեության տնտեսական ծրագիրը առաջիկա երեք տարիների համար, ինչպես նաև ստեղծվող բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ տվյալներ:

Կենտրոնական բանկը հավանություն է տալիս այնպիսի ֆինանսական կազմակերպությունների հիմնադիրների միջնորդագրին, որոնց.

- ✓ հիմնադիրները չունեն վատ համբավ և քրեորեն հետապնդելի չեն,
- ✓ կապիտալում կատարված ներդրումներն ունեն օրինական ծագում,
- ✓ գործադիր մարմնի և ղեկավարների մասնագիտական պատրաստվածության մակարդակը բավարարում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջները,
- ✓ տնտեսական ծրագիրը իրատեսական է, համապատասխանում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևին, և գործելով ծրագրին համապատասխան՝ բանկն ի վիճակի կլինի իրականացնել բնականոն բանկային գործունեություն,
- ✓ ներկայացված հիմնադիր փաստաթղթերը արժանահավատ են և չեն պարունակում կեղծ տվյալներ, և այլն:

Երկրորդ փուլը բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցումն է Կենտրոնական բանկի կողմից: Այս փուլում Կենտրոնական բանկ են ներկայացվում գրանցման դիմում, ստեղծվող բանկի կանոնադրությունը, ղեկավարների ցուցակը և նրանց գործունեության մասին տեղեկանք, ստեղծվող բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ ԿԲ սահմանած տվյալները, Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ փաստաթղթեր: Կենտրոնական բանկը որոշում է ընդունում բանկի գրանցման մասին, եթե ներկայացվել են բոլոր պահանջվող փաստաթղթերը և դրանցում արտացոլվել են արժանահավատ տվյալներ, ինչպես նաև բանկի նշանակալից մասնակիցները կամ նրանց հետ փոխկապակցված իրավաբանական անձինք իրենց ֆինանսական վիճակով կամ հեղինակությամբ բացասաբար չեն ազդի բանկի ֆինանսական վիճակի վրա կամ չեն խոչընդոտի Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը, կամ թույլ չեն տա բացահայտել կամ արդյունավետ կառավարել բանկի ռիսկերը:

Երրորդ փուլը լիցենզիա ստանալու փուլն է, որի համար բանկը կարող է դիմել Կենտրոնական բանկի նախնական հավանությունը ստանալու օրվանից մեկ տարվա ընթացքում: Կենտրոնական բանկը գրանցված

բանկին լիցենզիա է շնորհում, եթե բավարարվել են մի շարք պայմաններ, մասնավորապես՝ համալրվել է բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը, բանկային գործունեության համար ստեղծված տեխնիկատնտեսական պայմանները բավարարում են սահմանված չափանիշները, ստեղծվել են բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը և գործառնական համակարգը, բանկի ղեկավարների որակավորումը, մասնագիտական համապատասխանությունը բավարարում է սահմանված պահանջները և այլն:

Եռամսյա ժամկետում Կենտրոնական բանկը լիցենզավորում և գրանցում է առևտրային բանկին, եթե իրականացված են օրենքով սահմանված պահանջները:

Վարկային կազմակերպությունների լիցենզավորումն ու գրանցումն իրականացվում է մեկ փուլով: Լիցենզիա ստանալու նպատակով, նոր ստեղծվող վարկային կազմակերպության հիմնադիրները Կենտրոնական բանկ են ներկայացնում գրանցման և լիցենզավորման դիմում, վարկային կազմակերպության կանոնադրությունը, ղեկավարների գործունեության մասին տեղեկանք, կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ Կենտրոնական բանկի սահմանած ձևով ու կարգով, վարկային կազմակերպության գործունեության կանոնակարգը:

Մեկամսյա ժամկետում Կենտրոնական բանկը լիցենզավորում և գրանցում է վարկային կազմակերպությունը, եթե ամբողջությամբ վճարվել է կանոնադրական կապիտալը, վարկային կազմակերպության գործունեության վայրը համապատասխանում է սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջներին, ղեկավարները համապատասխանում են ներկայացվող որակավորման և մասնագիտական չափանիշներին, վարկային կազմակերպության նշանակալից մասնակիցները ստացել են Կենտրոնական բանկի համաձայնությունը:

Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների լիցենզավորումը

Արժեթղթերի շուկայի մասնակիցների լիցենզավորումը իրականացվում է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի և 2008 թվականին Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգ 4/01-ի[2], կանոնակարգ 5/01-ի[3] և կանոնակարգ 5/02-ի[4] հիման վրա: Ընդհանուր առմամբ, այս փաստաթղթերով սահմանված է հետևյալ կարգը. ընկերության (ներդրումային ընկերության, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի) գրանցումը և լիցենզավորումը իրականացվում է մեկ սուբյեկտի՝ Կենտրոնական բանկի կողմից: Լիցենզավորման և գրանցման գործընթացը իրականացվում է մեկ փուլով և տևում է մեկ ամիս: Լիցենզավորման համար ԿԲ են ներկայացվում հետևյալ հիմնական փաստաթղթերը.

---

[2] *«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01:*

[3] *«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01:*

[4] *Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02:*

ա/ սեփականատերերի մասին՝ նրանց կողմից ընկերության բնականոն գործունեությունը չխաթարելու տեսանկյունից օրենսդրության պահանջներին (պատշաճ որակավորում, հեղինակություն և վարքագիծ) համապատասխանության ստուգման նպատակով և

բ/ ղեկավարների մասին՝ նրանց կողմից ընկերությունը (օպերատորի, դեպոզիտարիայի) պատշաճ կառավարելու տեսանկյունից օրենսդրությամբ սահմանված պահանջներին (պատշաճ որակավորում, հեղինակություն և վարքագիծ) համապատասխանության ստուգման նպատակով,

գ/ գործարար ծրագիր՝ սեփականատերերի մտադրությունների իրատեսականությունը՝ գործունեության բնականոնության հնարավորությունը գնահատելու նպատակով,

դ/ իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթեր,

ե/ գործունեության կանոններ,

զ/ կանոնադրական կապիտալի համալրումը և օրինականությունը հավաստող փաստաթղթեր,

է/ ծառայություններ մատուցող աշխատակիցների մասնագիտական որակավորման համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր,

ը/ տարածքի և տեխնիկական հագեցվածության վերաբերյալ փաստաթղթեր:

Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների լիցենզավորման դաշտում իրականացվել են բարեփոխումներ, մասնավորապես նախատեսվել է «մեկ պատուհանի» սկզբունքով լիցենզավորման և գրանցման ռեժիմ:

Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կազմակերպությունների նշանակվող կամ ընտրվող ղեկավարների թեկնածուների մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարվում է ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի կողմից: Արժեթղթերի շուկայի մասնակիցների ղեկավարների և ներդրումային ծառայություններ մատուցող աշխատակիցների որակավորման պահանջները սահմանվել են 2008 թվականին, «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ով: Որակավորման պահանջները յուրաքանչյուր տարի թարմացվում և արդիականացվում են:

Ապահովագրական ընկերությունների և միջնորդների լիցենզավորումը

Ապահովագրական ընկերությունների և միջնորդների լիցենզավորումը իրականացվում է 2007 թվականին Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգ 3/01-ի համաձայն[5]: Լիցենզավորման

[5] *«Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ը:*

կարգը հնարավորինս համապատասխանեցվել է մյուս ֆինանսական կազմակերպությունների (բանկերի և վարկային կազմակերպությունների) լիցենզավորման կարգերին, ինչպես նաև լիցենզավորման եվրոպական չափանիշներին:

Մասնավորապես, ապահովագրական ընկերությունների համար սահմանված է «մեկ պատուհանի» կարգ, այսինքն՝ ընկերության գրանցումը և լիցենզավորումը իրականացվում է մեկ սուբյեկտի՝ Կենտրոնական բանկի կողմից: Գրանցման և լիցենզավորման գործընթացը իրականացվում է մեկ փուլով և տևում է մեկ ամիս:

Լիցենզավորման նոր կարգը գնահատում է լիցենզավորվող անձի սեփականատերերի և ղեկավարների համապատասխանությունը և նրանց մտադրությունները: Ըստ այդմ էլ, լիցենզավորման համար պահանջվում է հիմնականում երեք խումբ տեղեկատվություն.

ա/ սեփականատերերի մասին՝ նրանց կողմից ընկերության բնականոն գործունեությունը չխաթարելու տեսանկյունից օրենսդրության պահանջներին (պատշաճ որակավորում, հեղինակություն և վարքագիծ) համապատասխանության ստուգման նպատակով և

բ/ ղեկավարների մասին՝ նրանց կողմից ընկերությունը պատշաճ կառավարելու տեսանկյունից օրենսդրությամբ սահմանված պահանջներին (պատշաճ որակավորում, հեղինակություն և վարքագիծ) համապատասխանության ստուգման նպատակով,

գ/ գործարար ծրագիր՝ սեփականատերերի մտադրությունների իրատեսականությունը՝ գործունեության բնականոնության հնարավորությունը գնահատելու նպատակով:

ԿԲ կողմից այլ ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորումը

ԿԲ կողմից իրականացվում է նաև այլ ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորում, որոնց գործընթացների մանրամասները նկարագրված են.

- ✓ «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգում»,
- ✓ «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում,
- ✓ «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ում,
- ✓ «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ում,
- ✓ «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ում,
- ✓ «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ում,
- ✓ «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19-ում,
- ✓ «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ում:

Ֆինանսական կազմակերպությունների կարգավորումը և վերահսկողությունը

Կարգավորման դաշտի բարեփոխումների համար, որպես կանոն, հիմք է հանդիսանում ֆինանսական համակարգի նորանոր զարգացումների արդյունքում ի հայտ եկած մարտահրավերների լուծման անհրաժեշտությունը: Կենտրոնական բանկը բացահայտում է ՀՀ ֆինանսական համակարգի կայունությանը և զարգացմանը խոչընդոտող համակարգային խնդիրները, սպառնացող ռիսկերը, հետազոտում ու առաջարկում դրանց ինստիտուցիոնալ և իրավական լուծումները: Կենտրոնական բանկը հետևում է համաշխարհային ֆինանսական շուկայում ձևավորվող միտումներին ու զարգացումներին, նոր ֆինանսական տեխնոլոգիաներին և ՀՀ ֆինանսական համակարգում դրանց հնարավոր ներդրման ու կիրառման նպատակահարմարության դեպքում առաջարկում լուծումներ:

Կենտրոնական բանկի վերահսկողական մարմինն իրականացնում է ֆինանսական կազմակերպությունների փաստաթղթային (այսուհետ՝ հեռակա) և տեղերում վերահսկողություն:

Հեռակա վերահսկողությունը իրականացվում է ֆինանսական կազմակերպություններից ստացված տեղեկատվության հիման վրա: Յուրաքանչյուր ֆինանսական կազմակերպության հեռակա վերահսկողությունն իրականացվում է կոնկրետ վերահսկողների կողմից, որոնք մասնագիտացված են տվյալ կազմակերպության վերահսկողության գործընթացում: Վերջինս հնարավորություն է տալիս վերահսկողին ավելի ամբողջական պատկերացնելու տվյալ ֆինանսական կազմակերպության գործունեությունը, դրա առանձնահատկությունները և ռիսկերը:

Հեռակա վերահսկողության իրականացման համար, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև համապատասխան կանոնակարգերի պահանջներին համապատասխան, վերահսկվող կազմակերպությունները Կենտրոնական բանկի Վիճակագրության վարչություն են ներկայացնում հաշվետվական ձևեր՝ սահմանված բովանդակությամբ և պարբերականությամբ, որոնք, համապատասխան ստուգումներից հետո, տրամադրվում են Ֆինանսական վերահսկողության և Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչություններին: Նշված վարչությունները վերահսկողական և վերլուծական աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով օգտվում են նաև վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվությունից, նախորդ ժամանակաշրջաններում Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններից, նախորդ և ընթացիկ ժամանակաշրջաններում ֆինանսական կազմակերպություններից ստացված գրություններից, ծանուցումներից, հեռանկարային զարգացման ծրագրերից, հրապարակված ֆինանսական հաշվետվություններից և դրանց կցված աուդիտորական եզրակացություններից, վերստուգվող կազմակերպություններում ստուգումների արդյունքներից և այլ միջոցներով ստացված տեղեկատվությունից:

Բանկերի հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկերի հնարավոր կորուստները կանխատեսելու և/կամ նվազեցնելու համար վերջիններիս ֆինանսական վիճակի շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան վերլուծությունների միջոցով ռիսկերի բացահայտումն ու գնահատումն է: Մեկ վերահսկող կարող է միաժամանակ վերահսկել առավելագույնը երեք բանկ, և յուրաքանչյուր բանկ պետք է սպասարկվի առնվազն երկու վերահսկողի կողմից: Բանկերի նկատմամբ հեռակա վերահսկողությունն իրականացվում է «Հեռակա վերահսկողության իրականացման» ձեռնարկի կանոններին համապատասխան, որով սահմանվում են հեռակա վերահսկողության իրականացման սկզբունքներն ու մեթոդները, կանոնակարգվում հեռակա վերահսկողության գործընթացները, դրանց հաջորդականությունն ու ժամկետները, ինչպես նաև

հեռակա վերահսկողության մեջ ներգրավված անձանց շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Բանկերից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում յուրաքանչյուրի համար կազմվում են ներքին ամփոփ հաշվետվություններ, որոնցում բացահայտվում են բանկի գործունեությունը բնութագրող ցուցանիշների էական փոփոխությունները, ներկայացվում են գործունեության հիմնական միտումներն ու դրանց փոփոխությունները, իրականացվում է բանկերի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի գնահատում, նշվում են բանկի առջև ծառացած հիմնախնդիրները, գործունեության ռիսկային բնագավառները: Հեռակա վերահսկողության ընթացքում բացահայտվում են ոչ միայն բանկի ֆինանսական ցուցանիշների շարժերը, մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվային ակտերով ամրագրված սահմանաչափերից շեղումները, այլ նաև ուսումնասիրվում են դրանց պատճառները, գնահատվում են փոփոխությունները և մշակվում համապատասխան միջոցառումների պլան՝ բացահայտված անթույլատրելի մակարդակում դրսևորվող ռիսկերը կանխելու նպատակով:

Շաբաթական հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկի ընթացիկ գործունեության օպերատիվ մոնիտորինգն է: Շաբաթական հեռակա վերահսկողության հիմնական ուղղություններն են՝ ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին բանկի գործունեության համապատասխանության ստուգումը, բանկի հաշվեկշռի և հետհաշվեկշռի կառուցվածքի, ռիսկային ոլորտների և խնդրահարույց շարժերի վերլուծությունը: Վերլուծության ընթացքում որոշվում են բանկի գործունեության այն բնագավառները, որոնք ձևավորված պայմաններում առավել զգայուն ու խոցելի են ռիսկերի նկատմամբ կամ նախորդ հաշվետու ժամանակաշրջանում խնդրահարույց հարցադրումների պատճառ են դարձել:

Ամսական հեռակա վերահսկողության հիմնական նպատակն ամսվա ընթացքում բանկի գործունեության և ընթացիկ իրական ֆինանսական վիճակի գնահատումն ու վերլուծությունն է: Տրվում է բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ) և կատարվում վերլուծություն: Վերջինս ենթադրում է բանկի ակտիվների որակի, կապիտալի համարժեքության, եկամտաբերության, իրացվելիության, շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունության, կառավարման որակի և ղեկավարության գործունեության գնահատում ու վերլուծություն: Ամսական վերահսկողության ընթացքում տեղեկատվության վերլուծությունը պետք է ունենա հստակ կարգավորման ուղղվածություն այն իմաստով, որ վերահսկողի կողմից պետք է մշակվեն և առաջարկվեն բացահայտված էական խնդիրների վերացման, ազդեցության թուլացման և ապագայում դրանց ի հայտ գալը կանխելու ուղիներ: Նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ ՔԱՄԵԼՍ-ի գնահատականների կտրուկ շեղումների դեպքում վերահսկողի կողմից կատարվում է մանրակրկիտ վերլուծություն՝ շեղումների պատճառները բացահայտելու համար[6]:

Եռամսյակային հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատումն ու վերլուծությունն է: Եռամսյակային հեռակա վերահսկողությունը պետք է ուղղված լինի բանկի՝ շարունակական գործելու հնարավորության գնահատմանը, որը ենթադրում է բանկի գործունեության, ֆինանսական վիճակի փոփոխության, բանկին ներհատուկ ռիսկերի և ֆինանսա-

[6] ՔԱՄԵԼՍ-ի գնահատականը տատանվում է 1-5 միավորանոց սանդղակում, ընդ որում՝ գնահատականի՝ 3 միավորից պակաս արդյունքը ՀՀ կենտրոնական բանկի համար կարող է առավել խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ կամ պատժամիջոցներ սահմանելու, ինչպես նաև որոշ գործարքների իրականացման սահմանափակման հիմք հանդիսանալ: Բանկի ամփոփ գնահատականի՝ 2 միավոր և ցածր լինելու դեպքում բանկը համարվում է անվճարունակ:

կան կայունության գնահատում ու վերլուծություն: Եռամսյակային հեռակա վերահսկողության ընթացքում վերահսկողը պետք է ձեռնամուխ լինի ռիսկերի, մասնավորապես՝ վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, գնային, գործառնական և բարի համբավի ռիսկերի գնահատմանը և վերլուծությանը:

Եռամսյակային պարբերականությամբ անցկացվում են նաև ֆինանսական ընկերությունների կողմից տեղեկությունների հրապարակման դիտարկումներ՝ բացահայտելու համար, թե ընկերությունները ինչպես են ներկայացնում սպառողների համար բացահայտման ենթակա տեղեկատվությունը:

Հեռակա վերահսկողության ընթացքում վերլուծվում են բանկերի վարկային, արտարժութային, տոկոսադրույքի, գնային, իրացվելիության ռիսկերը, որի համար կիրառվում են վարկային ռիսկի միգրացիայի մատրիցի, VAR, դյուրացիայի, GAP մեթոդաբանությունները և սթրես - թեստերը: Ընդ որում, վերլուծելով վերոնշյալ ռիսկերի միտումները, պետք է գնահատել դրանց վարքագիծը՝ աճող, կայուն և նվազող:

Տարեկան հեռակա վերահսկողության նպատակը հաշվետու տարվա ընթացքում բանկի տարեկան գործունեության և ֆինանսական կայունության վերլուծությունն է, որը պետք է ուղղված լինի բանկի երկարաժամկետ գործելու հնարավորության գնահատմանը:

Վերլուծությունների ընթացքում բացահայտված ռիսկերի պարագայում վերահսկողը բանկի վճարունակության, ֆինանսական վիճակի կայունության, երկարաժամկետ գործունության ապահովման նպատակով, անհրաժեշտության դեպքում առաջարկում է վերահսկողական միջոցառումների ցանկ: Հեռակա վերահսկողության արդյունքում բացահայտված խնդիրները կարող են հիմք հանդիսանալ նաև տեղերում ստուգումների իրականացման համար կամ կարող են ներառվել համալիր ստուգման ծրագրերում: Հեռակա վերահսկողությունը կարևորվում է նաև այն առումով, որ, ժամանակին ու ճիշտ բացահայտելով բանկի խնդիրներն ու ռիսկերը, հնարավորություն է տալիս բարձրացնելու ընդհանուր վերահսկողության արդյունավետությունը՝ վերահսկողական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու վերստուգվող անձանց մոտ ստուգումների պլանավորման միջոցով:

Վարկային կազմակերպությունների, գրավատների, արտարժույթի փոխանակման կետերի հեռակա վերահսկողությունն իրականացվում է բանկերի հեռակա վերահսկողության տրամաբանությամբ: Նշված կազմակերպությունների հեռակա վերահսկողության իրականացման համար հիմք են հանդիսանում այս կազմակերպությունների կողմից ԿԲ ներկայացված հաշվետվությունները:

Ապահովագրական գործունեություն իրականացնող ընկերությունների (ապահովագրական ընկերություններ և ապահովագրական բրոքերային ընկերություններ) հեռակա վերահսկողությունն իրականացվում է «Ապահովագրական գործունեություն իրականացնողների մոտ հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկի» համաձայն:

ԿԲ ներկայացվող հաշվետվությունների հեռակա վերահսկողության և վերլուծությունների գործընթացը նույնն է, ինչ որ բանկերինը: Սակայն, ապահովագրական ընկերությունների վերահսկողության ընթացքում վերլուծության շրջանակները և գործիքները դեռևս խիստ սահմանափակ են:

Արժեթղթերի շուկայի մասնակիցների (ներդրումային ընկերություններ, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա և Հայաստանի ֆոնդային բորսա) հեռակա և տեղերում վերահսկողությունն իրականացվում է «Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց, ինքնակարգավորվող կազմակերպությունների և թողարկողների ստուգումների և հեռակա վերահսկողության ընթացակարգերի»

ուղեցույցի համաձայն: Արժեթղթերի ոլորտի բարեփոխումների պատճառով այս ուղեցույցը արդեն կորցրել է իր արդիականությունը: Նախատեսվում է մշակել «Ներդրումային ընկերությունների հեռակա վերահսկողության» և «Ներդրումային ընկերությունների տեղերում ստուգումների իրականացման» ձեռնարկները: Հեռակա ստուգումների համար հիմք են ընդունվում արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների կողմից ներկայացված ընթացիկ և ֆինանսական հաշվետվությունները:

Ընդհանուր առմամբ, հեռակա վերահսկողության ժամանակ իրականացվում է ֆինանսական կազմակերպությունների գործունեության շարունակական վերլուծություն՝ ֆինանսական վիճակի, ռիսկերի մակարդակի գնահատման ու կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանության ստուգման նպատակներով:

Շուկայական վարվելակերպի կանոնների պահպանման վերահսկողության նպատակով հատուկ ուշադրություն է դարձվում բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների կողմից հրապարակվող տեղեկատվությանը: Մասնավորապես, պարբերաբար ուսումնասիրվում են վերոնշյալ կազմակերպությունների ինտերնետային կայքերը, թերթերում հրապարակվող հաշվետվությունները:

Հեռակա վերահսկողության ընթացքում հայտնաբերված ռիսկերի առավել համապարփակ ուսումնասիրության, դրանց առաջացման պատճառների բացահայտման նպատակով, ինչպես նաև Կենտրոնական բանկի նախագահի կարգադրությամբ հաստատված՝ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ստուգումների ժամանակացույցի հիման վրա կազմակերպություններում իրականացվում են տեղերում վերստուգումներ:

Կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում տեղերում վերստուգումներ է իրականացնում համաձայն «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկի»: Բանկի տարբեր ոլորտների վերահսկողությունն իրականացնելիս վերահսկողները գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգի, իրականացվող գործընթացների և այդ ոլորտների գործունեությունը կարգավորող ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կարգերի կիրառելիությունը: Գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը և պարզում՝ արդյոք բանկի աշխատակիցները գործում են բանկի ղեկավարության կողմից սահմանված սկզբունքներին համապատասխան: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բանկի կառավարման համակարգի վերլուծությանը և դրա հետ կապված ռիսկերի բացահայտմանը, մասնավորապես՝ բանկի խորհրդի և գործադիր ղեկավարության միջև իրավունքների և պատասխանատվության սահմանազատմանը:

Էապես կարևորվում է բանկի գործունեության այն բնագավառների բացահայտումը, որոնք առավել խոցելի են և զգայուն ռիսկերի նկատմամբ: Հենց այդ բնագավառները պետք է մանրակրկիտ վերստուգվեն:

Տեղերում վերահսկողությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- Ակտիվների որակ

  Բացահայտվում է բանկի ակտիվների կառուցվածքը՝ շեշտը դնելով վարկային պորտֆելի որակի ու կառավարման մակարդակի գնահատման վրա: Վարկավորման գործունեությունը պետք է իրականացվի բանկի կողմից հաստատված քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխան, ընդ որում՝ դրանցից կատարվող բացառությունները պետք է պատշաճ հիմնավորվեն և փաստաթղթա-

վորվեն: Ստուգման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում վարկային պորտֆելի ընդհանուր որակին, եկամտաբերությանը, վարկերի վերադարձելիության մակարդակին և բավարար ապահովության առկայությանը:

- Պարտավորություններ և կապիտալ

  Բացահայտվում են բանկի պարտավորությունների, մասնավորապես ավանդային պորտֆելի կառուցվածքը, կենտրոնացումները, միջոցների ներգրավման գործընթացի համապատասխանությունը բանկի կողմից սահմանված քաղաքականություններին և ընթացակարգերին: Բանկի փոխառությունները ուսումնասիրելիս կարևոր է ուշադրություն դարձնել պարտադիր պահուստավորման և ավելցուկային իրացվելիության չափերին, ինչպես նաև պարզել փոխառությունների նպատակը, աղբյուրները, միջին գումարային ծավալը, ժամկետը, միջոցների արժեքը և օգտագործման արդյունավետությունը: Ստուգման ընթացքում գնահատվում է բանկի կապիտալի մակարդակի համապատասխանությունն իր ֆինանսական վիճակին, ռիսկերին և գործունեության ծավալներին:

- Եկամտաբերություն

  Եկամուտների և ծախսերի վերլուծությունը հնարավորություն է տալիս վերահսկողին եզրակացություն կատարելու բանկի ֆինանսական վիճակի և իրականացված գործառնությունների արդյունքների վերաբերյալ, պարզելու բանկի եկամուտների և ծախսերի հաշիվներում արտացոլված տվյալների արժանահավատությունը: Ստուգման ընթացքում գնահատվում են շահույթի մակարդակը և միտումները, շահույթի տարրերը և դրանց կայունությունը, բանկի՝ անվնաս աշխատելու հավանականությունը և կապիտալի համարժեքության նորմատիվի պահպանումը, ընդհանուր կապիտալի նվազագույն չափի պահպանումը, ծախսերի և եկամուտների պլանավորումը և ղեկավարության ներգրավվածությունը եկամուտների և ծախսերի պլանավորման գործընթացում:

- Իրացվելիություն

  Ստուգման ընթացքում գնահատվում են բանկի ընթացիկ իրացվելիությունը, միջոցների պահանջը, ընթացիկ և ակնկալվող դրամական հոսքերը, միջոցների ներգրավման աղբյուրները և գինը: Ստուգվում է բանկում իրացվելիության արտահերթ պահանջները բավարարելու ծրագրի առկայությունը, որի անհրաժեշտությունը կարող է ծագել եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացումների, գործառնություններ ընդլայնելու անսպասելի հնարավորության և այլ դեպքերում:

- Կառավարում

  Գնահատվում է բանկի կորպորատիվ կառավարման որակը, բանկի գործադիր ղեկավարների պարտականություններն ու պատասխանատվությունը, ռիսկերի կառավարման համակարգը: Բացահայտվում է, թե որքանով է բանկի կորպորատիվ կառավարման մեխանիզմն աշխատում հօգուտ բաժնետերերի և այլ շահագրգիռ անձանց շահերի: Առաջին հերթին գնահատվում են կառավարման կառուցվածքը և կառավարման գործընթացը: Բանկի կորպորատիվ կառավարման որակի գնահատման նպատակն է՝ պարզել, թե որքանով է արդյունավետ բանկի խորհրդի, գործադիր տնօրենի (տնօրենության), բաժնետերերի, այլ շահագրգիռ անձանց փոխհամագործակցումը: Ռիսկերի կառավարման համակարգի գնահատման ժամանակ բացահայտվում է, բանկի՝ ռիսկերի ճանաչման, չափման, գնահատման, մոնիտորինգի և կառավարման ռազմավարությունը:

- Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում

  Ոլորտի ուսումնասիրության արդյունքում վերահսկողը պարզում է, թե բանկի՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացման քաղաքականությունը, ընթացակարգերը և ներքին հսկողությունը որքանով են բավարարում այս ռիսկերը կառավարելու համար: Ստուգում է իրականացվող գործառնությունների համապատասխանությունը բանկի ընդունած քաղաքականությանը, բանկի կողմից կասկածելի գործառնությունների բացահայտման և ԿԲ լիազոր մարմնին հաշվետվությունների ներկայացման կարգը և պայմանները սահմանող ներքին ակտերի առկայությունը և այլն:
- Շուկայական վարքագծի վերահսկողություն

  Այս ոլորտի ուսումնասիրության արդյունքում վերահսկողը բացահայտում է բանկի գործարար վարվելակերպում առկա հնարավոր բացթողումները և ռիսկերը, որոնք կարող են վտանգել ֆինանսական ծառայությունների սպառողների շահերը: Այս ոլորտը ընդգրկում է բանկի կողմից հրապարակվող տեղեկատվության պատշաճ ներկայացումը, հաճախորդներին խորհրդատվության տրամադրումը, բողոքների, վեճերի լուծման գործընթացը, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը, հաճախորդների սպասարկումը:
- Այլ ոլորտներ

  Շուկայական ռիսկերի կառավարման մակարդակ, գործառնական ռիսկ, բանկի հետ կապված անձինք, համակարգչային և տեղեկատվական համակարգեր, իրավական խնդիրներ, արտահաշվեկշռային գործառնություններ, ներքին աուդիտ և ներքին հսկողություն, Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում, վճարային համակարգերի ռիսկ և միջոցների էլեկտրոնային փոխանցում:
- Բանկի ընդհանուր գնահատումը

  Բանկի ընդհանուր գնահատման արդյունքում վերահսկողը պատկերացում է կազմում բանկի ներկա ֆինանսական վիճակի և հեռանկարների վերաբերյալ՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի առկայությունը և որակը, ՀՀ օրենքների և/կամ այլ իրավական նորմերի խախտումները, բանկի ղեկավարության որակը, բանկի կապիտալի համարժեքությունը, դասակարգված ակտիվների ծավալը, բանկի գործունեությունը բնութագրող կարևոր գործոնների անկայունությունը և այլն:

Ստուգման արդյունքների հիման վրա կազմվում է բանկի ստուգման հաշվետվությունը, որտեղ արտացոլվում են իրականացված ստուգման ուղղությունները, շրջանակը, բանկում բացահայտված խնդիրները, ռիսկերը, բանկի ֆինանսական վիճակը, հիմնական տնտեսական նորմատիվները, բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ), ինչպես նաև ստուգման վերաբերյալ ներկայացվում են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Ապահովագրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների՝ տեղերում ստուգումներն իրականացվում են համաձայն «ՀՀ տարածքում ապահովագրական գործունեություն իրականացնողների մոտ (տեղերում) ստուգումների իրականացման ձեռնարկի»: Տեղերում վերահսկողությունն իրականացվում է

հետևյալ հիմնական ուղղություններով՝ բուն ապահովագրություն (անդերրայթինգ), ակտիվների որակ, կապիտալ և եկամտաբերություն, կառավարում, վերաապահովագրություն, ապահովագրական ապրանքի իրացում, այլ ոլորտներ (ապահովադիրների շահերի պաշտպանություն, շուկայական վարվելակերպի կանոնների պահպանում, համակարգչային և տեղեկատվական համակարգեր, իրավական խնդիրներ, Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում): Ապահովագրական ընկերությունների տարբեր ոլորտների վերահսկողությունն իրականացնելիս վերահսկողները գնահատում են ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգի, իրականացվող գործընթացների և այդ ոլորտների գործունեությունը կարգավորող ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կարգերի կիրառելիությունը: Միաժամանակ գնահատում են ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգը:

Արժեթղթերի շուկայի մասնակիցների՝ տեղերում վերահսկողությունը իրականացվում է համաձայն «Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց ստուգումների և հեռակա վերահսկողության ընթացակարգերի» ուղեցույցի: Արժեթղթերի շուկայի մասնակիցների գործունեության վերահսկողությունը իրականացվում է հետևյալ ուղղություններով՝ շուկայի մասնակցի՝ տվյալ լիցենզիայի շրջանակներում իրականացրած մասնագիտացված գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին շուկայի մասնակցի գործունեության համապատասխանության ստուգում, շուկայի մասնակցի կողմից ներկայացված հաշվետվություններում և այլ տեղեկություններում (անկախ կրիչի ձևից) արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում, շուկայի մասնակցի ֆինանսական վիճակի վերլուծություն, Կենտրոնական բանկի կողմից շուկայի մասնակցին տրված հանձնարարականների ու առաջարկությունների կատարման ընթացքի և արդյունքների ստուգում, շուկայի մասնակցի այլ գործունեությունը (բացառությամբ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության) կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին շուկայի մասնակցի գործունեության համապատասխանության՝ տեղերում ստուգում:

Արժեթղթերի հրապարակային առաջարկությամբ հանդես եկող անձանց և հաշվետու թողարկողների նկատմամբ իրականացվում է վերահսկողություն՝ օրենսդրության պահանջներին վերջիններիս գործունեության համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Գրավատներում, փոխանակման կետերում վերստուգումներն իրականացվում են օրենսդրության պահանջներին այս կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ստուգումների ծրագիրը հաստատում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը: Յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո վերստուգող խմբի կողմից պատրաստվում է ստուգման հաշվետվություն և ներկայացվում է Կենտրոնական բանկի խորհրդին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2008 ԹՎԱԿԱՆԻՆ

Տնտեսության իրական և ֆինանսական հատվածների շարունակական զարգացումների արդյունքում անհրաժեշտություն է առաջանում մշտապես կատարելագործելու ֆինանսական համակարգի կարգավորման դաշտը: 2008 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է ՀՀ ֆինանսական համակարգի գործունեությանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական մի շարք բարեփոխումների իրականացման գործընթացը:

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները

Օրենսդրական փոփոխություններ

1. 2008 թվականին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված **«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» և «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կատարված լրացումներն ու փոփոխությունները:** Փոփոխությունների նպատակը գործող օրենսդրության հստակեցումն է, ինչպես նաև օրենքի համապատասխանեցումը ԵՄ օրենսդրության որոշ պահանջներին: Օրենքով սահմանվում է, որ եթե հաշիվների դրամական մնացորդը պակաս է 1000 ՀՀ դրամից, ապա դրանք չեն երաշխավորվում, նախատեսվում է բանկերի՝ երաշխավորված ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգ ստեղծելու պարտականությունը, հստակեցվում են ավանդների հատուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ հոդվածները, Հիմնադրամի համար սահմանվում է պարտավորություն՝ ավանդատուների հաստատված պահանջներով հատուցումները վճարել պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, նախատեսվում է Հիմնադրամի ծախսերի վերադասակարգում: Օրենքում ներառվել է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում ներդրված ավանդների երաշխավորումը:

2. 2008 թվականին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է նաև **«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:** Նշված օրենքի ընդունումը պայմանավորված էր.

2.1. Վարկային կազմակերպությունների կողմից գործունեության տեսակի փոփոխման՝ բանկային գործունեության լիցենզիա ստանալու, ինչպես նաև վարկային կազմակերպությունների տիպերի փոփոխման հնարավորության ընձեռմամբ, դրա իրագործման առանձնահատկությունների սահմանմամբ և դրա համար անհրաժեշտ մեխանիզմների ներդրմամբ:

2.2. Վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանցից պարտատոմսեր տեղաբաշխելու միջոցով փոխառությունների ներգրավման հնարավորության նախատեսմամբ:

3. 2008 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է նաև արժեթղթերի երկրորդային շուկայի, ինչպես նաև հիփոթեքային արժեթղթերի շուկայի զարգացմանը նպաստող օրենքների փաթեթ, մասնավորապես՝ **«Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքը և «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքը**:

3.1. «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապահովված հիփոթեքային պարտատոմսերը թողարկվում են՝

1. բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից,
2. հիփոթեքային վարկերի պորտֆելի հիման վրա (ակտիվները միայն հիփոթեքային վարկեր են),
3. հիփոթեքային վարկերը մնում են բանկի կամ վարկային կազմակերպության հաշվեկշռում:

Օրենքով սահմանվում են չափանիշներ այն ակտիվների նկատմամբ, որոնք հանդիսանալու են ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցներ: Օրինակ՝ ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցները պետք է ավելին լինեն, քան ապահովված հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունները:

Օրենքով նախատեսվում է նոր՝ հսկողի ինստիտուտ, որի հիմնական գործառույթն է լինելու թողարկողի կողմից ապահովման միջոցների ռեգիստրի վարման գործընթացի, ինչպես նաև ապահովման միջոցների և հիփոթեքային պարտատոմսերով պարտավորությունների համարժեքության հսկողությունը:

Օրենքով նախատեսվում է նաև ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցների ռեգիստր: Այդ ռեգիստրում հաշվառված ակտիվները թողարկողի սնանկության կամ անվճարունակության դեպքում առանձնացվում են թողարկողի այլ ակտիվներից և չեն ներառվում սնանկության վարույթում: Սնանկության դեպքում նշանակվում է Հիփոթեքային կառավարիչ, որի հիմնական գործառույթը ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոց հանդիսացող ակտիվների կառավարումն է և ապահովված հիփոթեքային պարտատոմսերում ներդրողների պահանջների բավարարումը:

3.2. «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ակտիվներով ապահովված արժեթղթեր թողարկողը.

1. հատուկ նշանակության միջնորդ է (ոչ առևտրային հիմնադրամի), որը զբաղվում է միայն արժեթղթավորմամբ,
2. ունի միայն տնօրենների խորհուրդ, իսկ ընթացիկ գործունեությունը կառավարվում է Արժեթղթավորման հիմնադրամի կառավարչի կողմից, որը առևտրային կազմակերպություն է:
3. ունի հարկային արտոնություններ, մասնավորապես՝ Արժեթղթավորման հիմնադրամին ակտիվների օտարման գործարքը ազատվում է ԱԱՀ-ից:

Արժեթղթավորվում են ոչ միայն հիփոթեքային վարկերը, այլ նաև ֆինանսական ակտիվները, որոնք ապահովում են կանխիկի որոշակի հոսքեր: Ակտիվները վաճառվում են Արժեթղթավորման հիմնադրամին, այսինքն՝ դուրս են գալիս դրանք սկզբնավորող բանկի կամ վարկային կազմակերպության, առևտրային կազմակերպության հաշվեկշռից և ներառվում են Արժեթղթավորման հիմնադրամի հաշվեկշռում:

4. 2008 թվականին ՀՀ Ազգային ժողովը քննարկել և ընդունվել է ֆինանսական համակարգում սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված օրենքների փաթեթ: Այդ փաթեթում ներառված էին **«Բանկային ավանդների ներգրավման մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին», «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքները**:

4.1. «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակը ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությունն է, բանկերի կողմից քաղաքացիների դրամական միջոցների ներգրավման միասնական կանոնների սահմանումը: Օրենքը սահմանում է բանկային ավանդների և հաշիվների գովազդին ներկայացվող պահանջները, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնց սպառողները պետք է ծանոթանան մինչև բանկային ավանդի կամ բանկային հաշվի պայմանագրի կնքումը: Այդ տեղեկությունները վերաբերում են տոկոսների չափին, դրանց կապիտալացման և վճարման հաճախականությանը, հաշվի նվազագույն մնացորդին, տարբեր սակագներին և տուգանքներին: Օրենքը նաև կարգավորում է բանկի և ավանդատուի հաղորդակցման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ հաշվի քաղվածքների տրամադրման կարգը և պարբերականությունը:

4.2. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակը ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությունն է, կրեդիտավորման միասնական կանոնների սահմանումը, ֆինանսական միջնորդության ավելացումը: Օրենքը սահմանում է այն տեղեկությունների ցանկը, որոնց պետք է ծանոթանան սպառողները կրեդիտավորման պայմանագրեր կնքելիս: Սպառողներին պետք է տեղեկացվի կրեդիտավորման հետ կապված բոլոր ծախսերի, այդ թվում՝ տոկոսների, սպասարկման վճարների և բոլոր այլ պարտադիր վճարների մասին: Օրենքը սպառողների համար սահմանում է լրացուցիչ իրավունքներ, օրինակ, կրեդիտը վաղաժամկետ մարելու իրավունքը: Ընդ որում՝ կրեդիտի գումարը վաղաժամկետ մարելու դեպքում սպառողից չի պահանջվի որևէ տուգանքի կամ հատուցման վճարում: Ավելին, կրեդիտը վաղաժամկետ մարած քաղաքացին կարող է պահանջել համամասնորեն նվազեցնել կրեդիտավորման ծախսերը: Օրենքը սահմանում է այն դեպքերը, երբ սպառողն իրավունք ունի կրեդիտի միջոցով ձեռք բերած ապրանքի կամ ծառայության թերություններից բխող պահանջները ներկայացնել անմիջապես ֆինանսական կազմակերպությանը: Ապրանքներ վաճառող կամ ծառայություններ մատուցող անձինք կարող են ստանալ սպառողական կրեդիտավորման լիցենզիա և սպառողներին ինքնուրույն տրամադրել կրեդիտներ՝ դրանով իսկ նպաստելով ֆինանսական ոլորտում մրցակցության ավելացմանը:

4.3. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակը ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությունն է, նրանց պահանջների արագ, արդյունավետ և անվճար քննությունը: Ֆինանսական համակարգի հաշտարարը քննում է ֆինանսական կազմակերպությունների ֆիզիկական անձ հաճախորդների կողմից այդ կազմակերպությունների դեմ ներկայացված բողոքները, ընդ որում՝ խոսքը մինչև 10 մլն դրամին առնչվող բողոքների մասին է: Բողոքների քննության համար հաճախորդից որևէ վճար չի գանձվում: Ֆինանսական համակարգի հաշտարարը վեճը լուծում է հնարավորինս կարճ ժամկետում, որն ամեն դեպքում չի կարող գերազանցել 2 ամիսը: Հաշտարարի որոշումը կողմերի համար պարտադիր է դառնում միայն այն դեպքում, երբ հաճախորդը համաձայնվում է այդ որոշմանը: Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ֆինանսավորումն իրականացվում է բոլոր ֆինանսական կազմակերպությունների կողմից՝ օրենքով սահմանված վճարումներ կատարելու միջոցով:

5. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված **«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքը** և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքները:

Օրենքով Հայաստանի Հանրապետությունում ներդրվում է նոր ինստիտուտ, որը նպատակ ունի՝

ա. Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում բարձրացնել ֆինանսական միջնորդային և վարկային գործունեության ծավալները.

բ. լրացուցիչ մեխանիզմներ ստեղծել ֆինանսական շուկայում սպառողների շահերի պաշտպանության համար.

գ. ստեղծել ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկավորման ռիսկերի գնահատման մեխանիզմներ և պաշտպանել վարկատուների շահերը.

դ. ներդնել և զարգացնել սկորինգային համակարգը Հայաստանի Հանրապետությունում.

ե. հնարավորություն ընձեռել սպառողներին վարկային պատմության ստեղծման միջոցով հասնելու մեծ ծավալների վարկերի ստացմանը:

Օրենքը մշակվել է միջազգային լավագույն փորձի հիման վրա և փորձաքննության է ենթարկվել USAID-ի օտարերկրյա փորձագետների կողմից:

Սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից Օրենքը սահմանում է.

ա. Վարկային բյուրոյի կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունը սպառողներին, մասնավորապես՝ վարկային բյուրոյի կողմից վարկային զեկույցի անվճար տրամադրում անձին տարին մեկ անգամ, ինչպես նաև նրա համար անբարենպաստ հետևանքներ առաջացնող վարկային զեկույցների անվճար տրամադրում (օրինակ՝ բանկը մերժել է վարկ տրամադրել, քանի որ անձը ունի վատ վարկային պատմություն).

բ. վարկային տեղեկատվության ճշգրտման, վիճարկման, փոփոխման ընթացակարգերի մանրամասն կարգավորումը. անձը իրավունք է ստանում տեղեկանալու իր վերաբերյալ առկա բոլոր տվյալներին, սխալներ հայտնաբերելու դեպքում ուղղելու սխալ տեղեկատվությունը.

գ. Վարկային բյուրոյի թափանցիկ գործունեությունը (Վարկային բյուրոյի ինտերնետային էջի պարտադիր առկայություն, որտեղ պետք է հրապարակվի ու թարմացվի մատուցվող ծառայությունների, վեճերի լուծման ընթացակարգի, վարկային զեկույցների ստացման վերաբերյալ տեղեկատվությունը).

դ. Վարկային բյուրոյի գործունեության լիցենզավորումն ու վերահսկողությունը. Վարկային բյուրոյի գործունեությանը ներկայացվում են որոշակի պահանջներ և սպառողների շահերի պաշտպանության նպատակով իրականացվում է այդ գործունեության վերահսկողություն:

6. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է նաև «**Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը** և դրա ընդունմամբ պայմանավորված մի շարք օրենքներ: Նշված օրենքներով առաջարկվող փոփոխություններն ու լրացումներն ունեն հետևյալ հիմնական նպատակները.

ա. Ընդլայնել հաշվետվություն տրամադրող անձանց ցանկը:
Հաշվետվություն տրամադրող անձանց ցանկում ներառված ոչ ֆինանսական հաստատությունների և անձանց շրջանակը համապատասխանեցվել է ՖԱԹՖ-ի ստանդարտներին:

բ. Նախատեսել գործարքի իրական շահառուի կամ բենեֆիցիար սեփականատիրոջ պարզման մեխանիզմները:

գ. Ամրագրել «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» հասկացությունը և դրանց մասնակցությամբ գործարքների մոնիտորինգի կարգը:

դ. Հստակեցնել և ընդլայնել կասկածելի գործարքների չափանիշները:

ե. Ամրագրել գործարքների (գործարար հարաբերությունների) լրացուցիչ դիտանցման պահանջը:
զ. Սահմանել Լիազորված մարմնի և պետական այլ մարմինների միջև հարաբերությունների, ինչպես նաև միջազգային համագործակցության բարեփոխված ընթացակարգեր:
է. Ամրագրել Լիազորված մարմնի կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերի և հաշվետվություն տրամադրող անձանց ներքին իրավական ակտերի նվազագույն պահանջները:
ը. Նախատեսել դրամական փոխանցումների հետ կապված պարտավորությունները:
թ. Ապահովել Լիազորված մարմնի, հաշվետվություն տրամադրող անձանց և նրանց աշխատակիցների պաշտպանվածությունն օրենքի շրջանակներում իրենց պարտականությունների կատարման դեպքում:
ժ. Առավել հստակ սահմանել Լիազորված մարմնի լիազորությունները և գործառույթները.
ժա. Սահմանել այն դեպքերը, երբ պահանջվում է հաճախորդի պարտադիր նույնականացում, ինչպես նաև նույնականացման և ինքնության ստուգման տվյալների նվազագույն պահանջները.
ժբ. Սահմանել գործարար հարաբերությունում հաճախորդի գործարար կերպարի պարզման և գործարար հարաբերությունների ընթացիկ մոնիտորինգի կարգը.
ժգ. Սահմանել հաշվետվություն տրամադրող անձանց ներքին դիտարկումների մարմնի գործառույթները.
ժդ. Լրամշակել գործարար հարաբերությունների կամ գործարքների կասեցման և մերժման ընթացակարգերը.
ժե. Նախատեսել ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների սառեցման վերաբերյալ դրույթներ.
ժզ. Փոփոխել ահաբեկչության ֆինանսավորման հանցակազմի դիսպոզիցիան:

ՖԱԹՖ-ի 2-րդ հատուկ ստանդարտով սահմանվում է, որ ահաբեկչության ֆինանսավորումը պետք է տարածվի այն անձանց նկատմամբ, որոնք դիտավորությամբ, ցանկացած ձևով՝ ուղղակի կամ անուղղակի տրամադրում կամ հավաքագրում են միջոցներ՝ այնպիսի հանցավոր մտադրությամբ, որ այդ միջոցները պետք է օգտագործվեն, կամ այնպիսի գիտակցությամբ, որ այդ միջոցները կօգտագործվեն ամբողջովին կամ մասամբ՝

ա. ահաբեկչական գործողություն(ներ) կատարելու համար.

բ. ահաբեկչական կազմակերպության կողմից.

գ. անհատ ահաբեկչի կողմից:

ՀՀ քրեական օրենսգրքում առաջարկվող փոփոխությամբ հանցակազմի նշված բնորոշումը ներառվում է օրենսգրքի 217.1 հոդվածի դիսպոզիցիայում:

ժէ. Ամրագրել օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ընթացակարգերը:
ժը. Սահմանել օրենքով պատասխանատվության միջոցների կիրառելիության առավել արդյունավետ մեխանիզմներ:

7. 2008 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված «**«Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը**: Օրենքը սահմանում է, որ բանկերը, վարկային կազմակերպությունները, վճարահաշվարկային կազմակերպությունները, արժեթղթերի շուկայում հաշվետու թողարկողները, ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, կարգավորվող շուկայի օպերատորը, կենտրոնական դեպոզիտարիան, ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները, ապահովագրական

բրոքերները պարտավոր են ֆինանսական հաշվետվությունները կազմել և ներկայացնել հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան՝ առանց Հայաստանի Հանրապետության կողմից դրանց անմիջական թարգմանության, իսկ այլ կազմակերպությունները պարտավոր են կիրառել հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով հրապարակումից հետո վեցամսյա ժամկետի ավարտին հաջորդող տարվա հունվարի մեկից:

8. ՀՀ Ազգային ժողովը ընդունել է **«Համահայկական բանկի մասին» ՀՀ օրենքը** և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքները:

Օրենքների ընդունման նպատակը Համահայկական բանկի, ինչպես նաև այդ բանկի գործունեության համար իրավական հիմքերի ստեղծումն է:

Օրենքով սահմանվել են բանկի գործունեության նպատակը, գործունեության հիմնական սկզբունքները, կառավարման մարմինների ձևավորման և գործունեության կարգը և այլն: Համահայկական բանկի նպատակն է նպաստել ուժեղ, մրցունակ և գիտելիքահենք ներուժի ձևավորմանը, դա ուղղել ամբողջ հայության մրցունակության ավելացմանը համաշխարհային շուկայում:

Նշված կազմակերպությունը հանդիսանալու է բանկ՝ ստանալով բանկային գործունեության լիցենզիա և իրականացնելու է բանկերին բնորոշ գործառնություններ՝ բացի հրապարակային առաջարկի միջոցով ռեզիդենտներից միջոցներ ներգրավելուց:

Համահայկական բանկի գործունեությունը կարգավորվելու է բանկերի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, եթե Օրենքով այլ բան նախատեսված չէ, կարգավորվելու և վերահսկվելու է Կենտրոնական բանկի կողմից:

Համահայկական բանկը գործելու է որոշակի սկզբունքների հիման վրա, մասնավորապես՝ բանկերի հետ չի մրցակցելու, գործունեության ծրագիր կազմելիս առաջնորդվելու է ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի ռազմավարությամբ և այլն:

2008 թվականի ընթացքում Կենտրոնական բանկի կողմից մշակվել և փոփոխվել են բանկային գործունեությանն առնչվող հետևյալ իրավական ակտերը.

- Բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության ոլորտում իրականացվող մեղմացումների շրջանակներում փոփոխություններ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում, որոնց համաձայն՝ $Ն^3$ և $Ն^4$ նորմատիվների հաշվարկման ընթացքում «Ռիսկ» տարրի մեջ այլևս չեն ընդգրկվելու բարձր ապահովվածություն ունեցող պահանջները, մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական բանկի թողարկած արժեթղթերով, պետական գանձապետական պարտատոմսերով, բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և պետական մարմինների թողարկած արժեթղթերով և երաշխիք/երաշխավորություններով ապահովված պահանջները:

Կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկի ընթացքում կիրառվող Վարկային ռիսկի զսպման մեխանիզմների (ՎՌԶՄ) շրջանակներում նախատեսվել է, որ երաշխիքով կամ երաշխավորությամբ ապահովված պահանջը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում է 0% ռիսկի կշռով, եթե երաշխիք կամ երաշխավորություն տրամադրողը Հայաստանի Հանրապետության Կառավարությունն է կամ Կենտրոնական բանկը:

Բանկերի կողմից իրացվելիության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պարտադիր պահուստավորման ժամանակահատվածը սահմանվել է 28 կամ 35- օրյա՝ ՀՀ կենտրոնական

բանկի խորհրդի կողմից հաստատված պարտադիր պահուստավորման օրացույցին համապատասխան: Տվյալ մոտեցումը կնվազեցնի թղթակցային հաշիվների և տոկոսադրույքների տատանողականությունը, քանի որ այն համահունչ կլինի պետական բյուջեի և տնտեսավարող սուբյեկտների սեզոնայնությանը: Արդյունքում կբարելավվի իրացվելիության կառավարման մակարդակը և թղթակցային հաշիվներում կնվազի ավելցուկային միջոցների ծավալը:

Որպես ընդհանուր կապիտալի համալրման նոր գործիք՝ ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները ներառվել են լրացուցիչ կապիտալի կազմում: Միևնույն ժամանակ, հստակեցվել է ստորադաս փոխառությունների սահմանումը:

- ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատվել է «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը, որի նպատակն է.
  - ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները նորմատիվային դաշտի փոփոխություններին համապատասխանեցնելը,
  - Տվյալների միասնական բազայի ապահովումը, ինչի արդյունքում տվյալների մշակման աշխատանքները կարելի է դարձնել առավել արդյունավետ:

Վերամշակվել է բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների լրացման ուղեցույցը, ինչի արդյունքում այն համապատասխանեցվել է 2008 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի պահանջներին: Ուղեցույցն ընդգրկվել է Կանոնակարգ 3-ում՝ բանկերի համար ավելի պարզ ու օգտավետ դարձնելու նպատակով:

Հաշվի առնելով հաճախորդների և սպառողների շահերի պաշտպանության օրենսդրության պահանջները՝ Կանոնակարգ 3-ով սահմանվել է, որ բանկերը պարտավոր են հաշվարկել և ներկայացնել իրենց կողմից իրական հատվածից ներգրավված և տեղաբաշխված միջոցների արդյունավետ տոկոսադրույքները.

- ցպահանջ միջոցները ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում ընդգրկվում են ակտիվների և պարտավորությունների՝ հաշվետվության օրվա դրությամբ մնացորդային գումարներով, իսկ նրանց տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվում է համաձայնեցված տարեկան տոկոսադրույքի (ՀՏՏ) հաշվարկման (annualized agreed rate, AAR) բանաձևը:
- ժամկետային միջոցների տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվում է մանրամասն սահմանված էֆեկտիվ տոկոսադրույքի (ՄՍԷՏ) հաշվարկման (narrowly defined effective rate, NDER) բանաձևը:

Ձև թիվ 17-ում նախատեսվել է նաև արտացոլել տեղաբաշխված գումարների տարեկան փաստացի տոկոսադրույքները: Նշված տոկոսադրույքը հաշվարկվում է նույն բանաձևով և մեթոդաբանությամբ ինչ ՄՍԷՏ-ը, սակայն ներառում է ինչպես բոլոր տոկոսներն, այնպես էլ այլ վճարումները, որոնք վարկառուն պարտավոր է վճարել տվյալ միջոցը ստանալու համար:

- Ֆինանսական շուկայի մասնակիցների լիցենզավորման և գրանցման, մասնաճյուղերի գրանցման, կազմակերպությունում նշանակալից մասնակցության ձեռք բերման, ղեկավարների որակավորման և գրանցման ընթացակարգերը հնարավորինս նույնականացնելու նպատակով փոփոխություններ են կատարվել բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, կարգավորող շուկայի օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման ու լիցենզավորման, ղեկավարների որակավորման ու գրանցման կանոնակարգերում:

- Հիմք ընդունելով 2008թ. մարտի 18-ին ընդունված ««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքը»՝ Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատել է «Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման և տվյալների պահպանման կարգը»: Այն սահմանում է բանկերի կողմից իրենց ավանդատուների և նրանցից ներգրավված ավանդների վերաբերյալ միասնական էլեկտրոնային բազայի վարման և դրանում արտացոլված տեղեկատվության պահպանման կարգը: Վերոնշյալ կարգի նպատակն է ավանդների հատուցման գործընթացի կազմակերպման և ավանդատուների շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացումը:
- ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ նոր խմբագրությամբ է հաստատվել «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները», որի նպատակն է բարձրացնել բանկերի կողմից ռիսկերի կառավարման, բանկի աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը, ինչպես նաև ապահովել բանկում որոշում կայացնելու համար անհրաժեշտ հաշվապահական, ֆինանսական և այլ հաշվետվությունների հուսալիությունն ու ամբողջականությունը:

Հատկանշական է նաև, որ 2008 թվականից Կենտրոնական բանկի տնային էջում հրապարակվում է բանկի ղեկավար պաշտոններում աշխատելու համար թեկնածուների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման գրավոր քննությունների հարցաշարը, ինչը հնարավորություն կտա թեկնածուներին ավելի պատրաստված ներկայանալու քննությանը:

Ապահովագրական շուկայի կարգավորման նպատակով 2008 թվականի ընթացքում Կենտրոնական բանկի կողմից մշակված և փոփոխված հիմնական իրավական ակտերն են.

- «Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման կարգը» կանոնակարգ 3/09-ը (հաստատված ՀՀ կենտրոնական բանկի 25.03.2008թ. 73 Ն որոշմամբ), որի նպատակը ապահովագրական ընկերությունների ակտիվների արժանահավատ արժեքի ստացման միջոցով հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման համար օգտագործվող ընդհանուր կապիտալի և ակտիվների մեծության վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացման, հաշվետվություններում արժանահավատ տեղեկատվության արտացոլման ապահովումն է:
- «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ը (հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 02.10.2007թ. թիվ 311 Ն որոշմամբ): Ապահովագրական ընկերությունների բնականոն գործունեության և ֆինանսական կայունության ապահովման նպատակով բարձրացվել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափը: 2009թ. հունվարի 1-ին և դրանից հետո ստեղծվող ապահովագրական ընկերությունների համար, ինչպես նաև 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո գործող ապահովագրական ընկերությունների համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվել է 1-ից 1.5 մլրդ դրամ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ապահովագրական ընկերությունը ապահովագրության որ դասերով գործունեություն իրականացնելու իրավունք ունի: Փոփոխվել է մեկ ապահովագրական ռիսկի գծով նորմատիվի հաշվարկման կարգը, որի նպատակն է սահմանափակել ապահովագրական պորտֆելում ռիսկերի կենտրոնացման մակարդակը՝ ըստ մեկ ապահովագրական պատահարի: Ներմուծվել է մեկ փոխառուի գծով

ռիսկի առավելագույն չափի նորմատիվ, որի նպատակն է սահմանափակել մեկ անձի և նրա հետ փոխկապակցված անձանց մոտ ապահովագրական ընկերության ակտիվների կենտրոնացման աստիճանը:

- «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը (հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 16.11.2007թ. թիվ 366Ն որոշմամբ): Կատարված փոփոխությունների նպատակն է ապահովել հեռակա վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ ողջ տեղեկատվության ստացումն ապահովագրական ընկերությունների կողմից:
- «Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ում (հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 30.10.2007թ. թիվ 344 Ն որոշմամբ) կատարվել են փոփոխություններ՝ հնարավորինս նույնականացնելու համար ֆինանսական շուկայի մասնակիցների (ապահովագրական ընկերություններ, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձինք, բանկեր, ներդրումային ընկերություններ, կարգավորող շուկայի օպերատոր, կենտրոնական դեպոզիտարիա) լիցենզավորման և գրանցման, ընկերությունում նշանակալից մասնակցության ձեռքբերման, ղեկավարների որակավորման և գրանցման ընթացակարգերը:
- «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» (հաստատված՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 02.10.2007թ. թիվ 314 Ն որոշմամբ): Կատարված փոփոխությունն ուղղված է ապահովագրական ընկերությունների կողմից իրականացվող էական գործառնությունների բովանդակությունն առավել մանրամասն ներկայացնելու նպատակով հաշվառման հաշիվների և դրանց կիրառման ցուցումների ավելացմանը:
- Վերանայվել է և իրավական դաշտի փոփոխություններին է համապատասխանեցվել ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերային ընկերությունների պատասխանատու անձանց մասնագիտական որակավորման գնահատման հարցաշարը:

Արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակով 2008 թվականին Կենտրոնական բանկը մշակել և փոփոխել է մի շարք նորմատիվային ու իրավական ակտեր.

- Ներդրումային ընկերությունների գրանցման և լիցենզավորման հստակ ընթացակարգ սահմանելու, այն բանկերի և ապահովագրական ընկերությունների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին համապատասխանեցնելու նպատակով մշակվել է «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու

լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը:

- Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը: Այս կանոնակարգով ներդրումային ընկերությունների համար սահմանվել են կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափեր, ինչպես նաև ընդհանուր նորմատիվային կապիտալի հաշվարկման կարգը:
- «Ազդագրի և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը, որով, ելնելով գործնական անհրաժեշտությունից, և վերահսկողության ընթացքում բացահայտված խնդիրներից, սահմանվել է տեղեկատվության կազմ՝ ածանցյալ արժեթղթերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի համար, հստակեցվել ներդրողների ներդրումային որոշումների կայացման վրա ազդող տեղեկատվության կազմը: Կանոնակարգով կատարված փոփոխությունները բխում են «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս»-ի կողմից «Կապիտալի շուկայի հետազոտություն և նախագծման ուսումնասիրություն» միջոցառումների իրականացումից:
- «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը: Նորմատիվ ակտերի նպատակն է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին և եվրադիրեկտիվների չափանիշներին համապատասխան սահմանել որակավորման նվազագույն պահանջներ արժեթղթերի շուկայի մասնակից իրավաբանական անձանց ղեկավարների և շուկայում ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց նկատմամբ, ինչպես նաև հնարավորինս համապատասխանեցնել այս գործընթացը բանկերի և ապահովագրական ընկերությունների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին:
- Եվրոպական մոդելին համապատասխան որակավորված ներդրողների ինստիտուտի ներդրման ենթաօրենսդրական դաշտի ձևավորման նպատակով ընդունվել է «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ը, որով սահմանվել են որակավորված ներդրողներին մյուս ներդրողներից տարանջատելու չափանիշները և ԿԲ կողմից նրանց գրանցելու ընթացակարգը:
- «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը, որով սահմանվել են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջները բավարարող ենթաօրենսդրական դաշտ, կարգավորվող օպերատորի գրանցման և լիցենզավորման հստակ ընթացակարգ: Այս փոփոխությամբ կարգավորվող օպերատորի գրանցման և լիցենզավորման հստակ ընթացակարգը հնարավորինս համապատասխանեցվել է բանկերի և ապահովագրական ընկերությունների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին:

- Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման և լիցենզավորման ընթացակարգը հստակեցնելու, բանկերի և ապահովագրական ընկերությունների գրանցման և լիցենզավորման ընթացակարգին համապատասխանեցնելու համար ընդունվել է «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ը:
- Փոփոխություններ են կատարվել ՀՀ ԿԲ խորհրդի 2003թ. մարտի 25-ի «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, այլ մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար լինելու, ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու, ապահովագրական ընկերությունում ղեկավար կամ ապահովագրական բրոքերային ընկերության պատասխանատու անձ լինելու ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 114 Ն որոշման մեջ, այն տարածելով նաև ներդրումային ընկերությունների վրա:
- Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայությունների մատուցման բնականոն ընթացքի և ներդրումային ծառայություններից օգտվող անձանց (հաճախորդների) շահերի պաշտպանության ապահովման նպատակով ՀՀ ԿԲ խորհրդի կողմից ընդունվել է «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը:
- «Արժեթղթերի շուկայի վերահսկվող անձանց հեռակա վերահսկողություն իրականացնելու նպատակով Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների, տեղեկանքների, բացատրագրերի և նման այլ փաստաթղթերի՝ հասարակությանը մատչելի դարձնելու կարգը և այդ փաստաթղթերը հասարակությանը մատչելի դարձնելու պահանջից բացառությունները» կանոնակարգ 4/08-ը, որի նպատակն է սպառողներին հնարավորություն տալ մեկ աղբյուրից ստանալու վերահսկվող անձանց ֆինանսական վիճակի և կայունության մասին կարևոր և համակողմանի անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև համեմատաբար հեշտությամբ համեմատելու այդ տվյալները, որոնք կարևոր են որոշումներ կայացնելու համար:
- Օպերատորի և Կենտրոնական բանկի միջև շուկայի վերահսկողության ոլորտում համագործակցության մեխանիզմի ապահովման համար մշակվել է «Կարգավորվող շուկայի մասնակիցների և հաշվետու թողարկողների կողմից թույլ տրված խախտումների մասին կարգավորվող շուկայի օպերատորի կողմից Կենտրոնական բանկին տեղեկացնելու կարգը» կանոնակարգ 5/05-ը:
- Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ԿԲ ներկայացվող տեղեկությունների նկատմամբ պահանջներ սահմանելու նպատակով ՀՀ ԿԲ կողմից ընդունվել են «Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» և «Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03 և 5/04-ը: Դրանցով սահմանվել է Օպերատորի կողմից ԿԲ ներկայացվող հաշվետվությունների, դրանցում ներառվող տեղեկատվության կազմը, որը հնարավորություն կտա օպերատորի և դեպոզիտարիայի գործունեության վերաբերյալ բավարար տեղեկություններ ստանալու:
- ԿԲ-ն ընդունել է «Ներդրումային ընկերությունների կողմից իրենց ինտերնետային կայքում, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով այլ տեղեկությունների հրապարակման ձևը, հաճախականությունը և կարգը»: Այս կարգի հիմնական նպատակն է ներդրումային ընկերությունների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման միջոցով նվազեցնել ներդրումային ծառայություններ օգտագործող-

ների (ներդրողների, հաճախորդների) և ներդրումային ընկերությունների միջև առկա տեղեկատվության անհամապատասխանությունը:

Ֆինանսական համակարգի այլ մասնակիցների գործունեության կարգավորման դաշտում կատարված հիմնական փոփոխություններն են.

- «Վարկային կազմակերպության գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում փոփոխություններ և լրացումներ են կատարվել՝ կապված վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման օրենսդրական դաշտի փոփոխությունների հետ, մասնավորապես՝ ամրագրվել է, որ վարկային կազմակերպությունները (բացառությամբ վարկային միությունների և խնայողական միությունների) կարող են մատուցել ներդրումային ծառայություններ: Բացի այդ, վարկային կազմակերպությունների գործունեության նորմատիվային դաշտը որոշակիորեն համապատասխանեցվել է բանկերի գործունեության կարգավորման դաշտին:

Վարկային կազմակերպությունների ռիսկով կշռված ակտիվների հաշվարկմանը մասնակցող տարրերի ռիսկի կշիռների մեջ կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսերի համար սահմանվել է 0% ռիսկի կշիռ:
- Սահմանվել են «50 տոկոս ռիսկի կշռին բավարարող հիփոթեքային վարկերի տրամադրման նվազագույն պայմաններ» և 50% ռիսկի կշիռ՝ այդ պայմաններին բավարարող վարկերի համար:
- Սահմանվել է 75 % ռիսկի կշիռ՝ մանրածախ պահանջների համար և ձևակերպվել են պահանջը մանրածախ համարելու պայմանները:
- «Այլ պահանջներ (այդ թվում՝ սառեցված հաշիվներ) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի նկատմամբ և դրանց գծով հաշվարկված տոկոսներ» հոդվածի համար սահմանվել է 50% ռիսկի կշիռ:

Սպառողների շահերի պաշտպանություն

Ընդունվել է «Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ» կանոնակարգ 8/01-ը: 2008 թվականի ընթացքում ընդունվել է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքից բխող նորմատիվ իրավական նոր ակտ: Համաձայն այդ օրենքի՝ կրեդիտավորողների (բանկ, օտարերկրյա բանկի մասնաճյուղ, վարկային կազմակերպություն, գրավատուն) և սպառողների միջև կնքվող ցանկացած կրեդիտավորման պայմանագիր պետք է ներառի տարեկան փաստացի տոկոսադրույքի չափի վերաբերյալ նշում, ինչպես նաև այն դեպքում, երբ հնարավոր չէ սպառողներին հասանելի դարձնել տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը, ներկայացնել դրա հաշվարկման օրինակը: Կանոնակարգ 8/01-ը սահմանում է կրեդիտավորողների կողմից միասնական և ամբողջական ձևով տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կանոնները:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 2008 ԹՎԱԿԱՆԻՆ

ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման, ինչպես նաև ֆինանսական համակարգի մասնակիցների մոտ առկա՝ անթույլատրելի մակարդակում դրսևորվող ռիսկերի բացահայտման և կանխման նպատակով Կենտրոնական բանկը մշտապես վերահսկում է մասնակիցների գործունեությունը: Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչությունը իրականացնում է ֆինանսական ինստիտուտների փաստաթղթային և տեղերում ստուգումներ:

Հաշվետու տարում ֆինանսական վերահսկողության վարչության կողմից իրականացվել են 243 «տեղերում ստուգումներ». 7՝ բոլոր ուղղություններով և 10 նպատակային ստուգումներ բանկերում, 5 ստուգումներ վարկային կազմակերպություններում, 4 ստուգումներ ապահովագրական ընկերություններում, 24 ստուգումներ գրավատներում, 191 ստուգումներ արտարժույթի առք ու վաճառքի փոխանակման կետերում և 2 ստուգում ֆինանսական շուկայի այլ մասնակիցների մոտ:

Աղյուսակ 1. Տեղերում վերստուգումները և վերահսկողության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը

	2006 թվական	2007 թվական	2008 թվական
Ֆինանսական վերահսկողության վարչության աշխատակիցների թիվը	49	74	74
Բանկերի, վարկային կազմ, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնակիցների և գրավատների ընդհանուր ակտիվները (տարեկան միջին)	500.2 մլրդ դրամ	674.5 մլրդ դրամ	964.3 մլրդ դրամ
Ֆինանսական վերահսկողության վարչության մեկ աշխատակցի միջին ծանրաբեռնվածությունը	10.2 մլրդ դրամ	9.1 մլրդ դրամ	13.0 մլրդ դրամ
Տարվա ընթացքում իրականացված ստուգումների թիվը, այդ թվում՝	587	511	243
բանկերում՝ բոլոր ուղղություններով	8	5	7
բանկերում՝ նպատակային	5	40	10
վարկային կազմակերպություններում	4	5	5
ապահովագրական ընկերություններում	15	8	4
գրավատներում	26	30	24
արժեթղթերի շուկայի մասնակիցների	5	18	1
արտարժույթի փոխանակման կետերի	529	403	191
ֆինանսական շուկայի այլ մասնակիցների	-	2	1

Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից փաստաթղթային և տեղերում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված խախտումները և թերությունները նախորդ տարիների համեմատ բավականին նվազել են. հիմնականում նվազել է օրենսդրական, անարժանահավատ տվյալների և հաշվապահական հաշվառման հետ կապված խախտումների քանակը:

2008 թվականին նվազել է նաև կիրառված պատժամիջոցների՝ կազմակերպության և ղեկավարների նկատմամբ տուգանքների և նախազգուշացումների քանակը:

Աղյուսակ 2. Ֆինանսական կազմակերպությունների կողմից թույլ տրված խախտումները և կիրառված պատժամիջոցները 2008 թվականին

	Առևտրային բանկեր	Վարկային կազմակերպություններ	Ապահովագրական ընկերություններ	Գրավատներ	Վճարահաշվարկային կազմակերպություններ*
Խախտման տեսակ					
Հաշվապահական հաշվառման	10	20	12	-	-
Ակտիվների դասակարգման կարգի	-	3	1	-	-
Օրենսդրական	85	73	20	57	-
Նորմատիվային	5	1	2	-	-
Հանձնարարականի չկատարում	7	-	-	-	2
Հաշվետվությունների ուշացում	10	5	4	4	-
Անարժանահավատ տվյալներ	65	9	129	16	-
Ընդհանուր կապիտալի	-	1	-	-	-
Վարկային ռեգիստր	10	11			
Պատժամիջոցներ					
Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում	-	-	-	1	-
Տուգանք կազմակերպությանը	67	11	42	41	-
Տուգանք ղեկավարին	2	-	-	-	-
Տույժ	-	-	-	-	-
Նախազգուշացում	116	26	95	23	2
Ղեկավարին մասնագիտական որակավորման վկայականից զրկում	1	-	-	-	-
Լիցենզիայի գործունեության ժամանակավոր կասեցում				6	
Կարճում	6	4	29	-	-

** Վճարային գործիքներ կիրառող և դրամական փոխանցում, վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններ:*

ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության կողմից վերահսկողական գործընթացներում հատկապես կարևորվել են հետևյալ ուղղությունները.

1. Բանկերում.
   - ներքին հսկողության համակարգը,
   - ռիսկերի կառավարման համակարգը,
   - կորպորատիվ կառավարման սկզբունքների ապահովումը,
   - SS ոլորտը,
   - ակտիվների որակի գնահատումը,
   - թափանցիկության ապահովումը,
   - ակտիվների և պասիվների կառավարման գնահատումը,
   - փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը,
   - սպառողների շահերի պաշտպանությունը:

2. Վարկային կազմակերպություններում.
   - ակտիվների որակի գնահատումը,
   - հաշվապահական ձևակերպումները,
   - կապիտալի տարրերը,
   - եկամտաբերությունը,
   - իրացվելիությունը,
   - ՏՏ ոլորտը,
   - ներքին հսկողության համակարգը,
   - փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը,
   - սպառողների շահերի պաշտպանությունը:
3. Ապահովագրական ընկերություններում.
   - ապահովագրական ընկերությունների իրական կապիտալացման մակարդակը,
   - ապահովագրական ընկերությունների կառավարումը (ներքին հսկողություն և այլն),
   - սպառողների շահերի պաշտպանության մեխանիզմների առկայությունը,
   - կանոնակարգման դաշտի փոփոխություններին ընկերությունների գործունեության համապատասխանեցումը,
   - փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը,
   - ընկերության ֆինանսական կայունության բարձր մակարդակի ապահովումը,
   - վերաապահովագրության ռիսկայնության մակարդակը:
4. Արժեթուղթ թողարկողների և հաշվետու թողարկողների գծով.
   - ազդագրի և/կամ առևտրի ազդագրի գրանցման գործընթացների կազմակերպումն ու վերահսկումը,
   - հաշվետու թողարկողների կողմից հրապարակման ենթակա տեղեկատվությունների թափանցիկության, լիարժեքության և արժանահավատության ապահովման նկատմամբ վերահսկողությունը,
   - արժեթղթերի հրապարակային առաջարկությամբ հանդես եկող անձանց գործողությունների՝ օրենսդրությանը համապատասխանության նկատմամբ վերահսկողությունը:
5. Արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների գծով.
   - «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան՝ արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների ձևավորման, մասնավորապես՝ բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման իրավունքի տրամադրման, ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցման և լիցենզավորման, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան դրանց գործունեության ապահովման հարցերը,
   - «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված մոտեցումներին համապատասխան արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների կանխարգելիչ և շուկայի վարվելակերպի վերահսկողության համակարգերի ներդրման հարցերը,
   - արժեթղթերի շուկայում չարաշահումների (գնային չարաշահումների և շուկայում գործարքների կնքման համար ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործման) վերահսկողության և պատասխանատվության կիրառման համակարգի ներդրման հարցերը,

- արժեթղթերի շուկայում չլիցենզավորված անձանց գործունեության կանխարգելման հարցերը,
- Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայությունների սակագների առավելագույն չափերի վերանայման հարցը:

6. Փոխանակման կետերում և գրավատներում.
   - գործունեության անվտանգության և հուսալիության պահանջների ապահովումը,
   - ծառայությունների մատուցման որակի գնահատումը,
   - փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը,
   - սպառողների շահերի պաշտպանությունը,
   - գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին,
7. Վճարահաշվարկային կազմակերպություններում.
   - SS ոլորտը,
   - փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը,
   - սպառողների շահերի պաշտպանությունը,
   - ներքին հսկողության համակարգը:

ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ՀԵՏ

2008 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կադրային քաղաքականությունը նպատակաուղղված էր աշխատանքի արդյունավետության և անձնակազմի որակավորման բարձրացմանն աջակցելուն:

Ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության գործընթացներին մասնակցող աշխատակիցները մասնագիտական որակավորման բարձրացման, մասնագիտական գիտելիքների արդիականացման և կատարելագործման, միջազգային փորձին ծանոթանալու նպատակով մասնակցել են մի շարք ներքին և արտաքին դասընթացների և կոնֆերանսների: Կենտրոնական բանկի կադրերի վերապատրաստմանը օժանդակել են Արժույթի միջազգային հիմնադրամը, Շվեյցարիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի բանկը, Գերմանիայի Բունդեսբանկը, Անգլիայի բանկի՝ կենտրոնական բանկերի ուսուցողական կենտրոնը, ԱՄՆ ֆեդերալ ռեզերվային բանկը, Նիդեռլանդների, Ղազախստանի, Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկերը, Միջազգային հաշվարկների բանկը, Լեհաստանի, Չեխիայի ազգային բանկերը, Տորոնտոյի կենտրոնը, ԵԱՏՀ (Եվրասիական տնտեսական համագործակցության), Ֆինանսական կայունության ինստիտուտը և այլն: Վերջիններիս կողմից կազմակերպված դասընթացների, կոնֆերանսների և աշխատանքային փորձի փոխանակման վերապատրաստման թեմաները հիմնականում ուղղված են եղել հակաճգնաժամային կառավարման և ֆինանսական կայունության խնդիրներին, բանկային, ապահովագրական, արժեթղթերի շուկաների մասնակիցների վերահսկողության արդի խնդիրներին, ռիսկերի կառավարմանն ու գնահատմանը, վերահսկողական նոր մոտեցումների կիրառմանը, հանցավոր եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին, ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի բարեփոխումներին:

2008 թվականին ԿԲ մասնագետների վերապատրաստման հիմնական թեմաներն են եղել «Ֆինանսական կայունություն», «Ֆինանսական ենթակառուցվածք և ֆինանսական կայունություն», «Ֆինանսական ճգնաժամի կառավարում», «Ֆինանսական վերահսկողություն», «Ֆինանսական ծրագրավորում և քաղաքականություն», «Հիմնական վերահսկողական խնդիրներ», «Իրացվելիության ռիսկ», «Բանկերի վերլուծություն և ստուգում», «Ֆինանսական հատվածի քաղաքականության մարտահրավերներ», «Ռիսկի վրա հիմնված վերահսկողություն», «Հիմնական վերահսկողական խնդիրներ», «Բանկերի վերլուծություն և ստուգում», «Պայքար փողերի լվացման և ֆինանսական կարգազանցության դեմ», «Արժեթղթերի շուկայի վերահսկողության սկզբունքները», «Կորպորատիվ վարկավորման վերլուծություն», «Վճարահաշվարկային կազմակերպությունների վերահսկողություն», «Փոխանակման կետերի լիցենզավորում և վերահսկողություն», «Արժեթղթերի վիճակագրության համադրելիության կատարելագործման խնդիրները» և այլն:

Կենտրոնական բանկի աշխատակիցներն այցելել են նաև այլ երկրների Կենտրոնական բանկեր՝ ուսումնասիրելու համար գործընկերների փորձը:

Կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են նաև բանկային և ֆինանսական միջազգային համաժողովների, ֆորումների, «կլոր սեղանի» նիստերի, խորհրդակցությունների, ցուցահանդեսների, աշխատանքային սեմինարների, որտեղ հանդես են եկել զեկուցումներով և ելույթներով:

Հիշատակման են արժանի. ԵԱՏՀ անդամ երկրների կենտրոնական բանկերի Համակարգող խորհրդի նիստը Տուլայում, էգմոնտ խմբի անդամ երկրների աշխատանքային խմբի հանդիպումը Սանտյագոյում, Եվրոպայի խորհրդի՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի MONEYVAL կոմիտեի նիստը Ստրասբուրգում, «Կենտրոնական բանկի պահուստների և պաշտոնական հատվածի ակտիվների կառավարում» թեմայով կազմակերպչական ֆորումը և «Ֆինանսական համակարգի խնդիրները և վերլուծությունը» թեմայով սեմինար-խորհրդակցությունը Վաշինգտոնում, ԱՊՀ երկրների վճարային համակարգերի աշխատանքային խմբի հանդիպումը Բազելում, Վերականգնման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի տարեկան համաժողովը և բիզնես ֆորումը Կիևում, Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի Նիդեռլանդների ենթախմբի երկրների կառավարիչների տարեկան հանդիպումը և տեխնիկական աջակցության ծրագիրը Ամստերդամում, Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Եվրասիական խմբի նիստը Բիշկեկում, Միջազգային հաշվարկների բանկի Իրվինգ Ֆիշերի կոմիտեի տարեկան ժողովը Բազելում, Կենտրոնական Ասիայի, Սևծովյան տարածաշրջանի և Բալկանյան երկրների կենտրոնական բանկերի կառավարիչների ակումբի նիստը Սարաևոյում, Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կառավարիչների խորհուրդների տարեկան հանդիպումը Վաշինգտոնում, «Տեղեկատվական անվտանգության կառավարում» թեմայով միջազգային կոնֆերանսը Ամստերդամում այլն:

Կենտրոնական բանկը շարունակել է մասնակցել ԱՊՀ անդամ երկրների արժեթղթերի շուկան կարգավորող մարմինների ղեկավարների խորհրդի աշխատանքներին, ընդ որում՝ հաշվետու տարվա վերջին հերթական նիստում որոշում է կայացվել, որ 2009 թվականին նիստերը նախագահելու է ՀՀ կենտրոնական բանկի նախագահը:

Գործնական կապերը ընդլայնելու և բանակցություններ վարելու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկ են այցելել, “NASDAQ” և “OMX Group” ընկերության, “UBS Global Asset Management” ընկերության, “FITCH Ratings” և “Moody’s Investors Service Co” վարկանշային գործակալությունների, CitiBank-ի, De La Rue Cash Systems ընկերության, USAID կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական առաքելության (ROSC) փորձագետները, JP Morgan Chase Worldwide Securities Services ընկերության մասնագետը, Լատվիայի բանկի փորձագետը՝ RAMP ծրագրի շրջանակներում:

Միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում շարունակվել են համապատասխան կենտրոնական բանկերի միջև համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի ստորագրման աշխատանքները: 2008 թվականի օգոստոսի 29-ին Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաք Թեհրանում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Իրանի Իսլամական Հանրապետության կենտրոնական բանկի միջև բանկային ոլորտներում համագործակցության ընդլայնման վերաբերյալ» փոխըմբռնման հուշագիրը:

2008 թվականի սեպտեմբերի 15-19-ը ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնությամբ Երևանում տեղի է ունեցել ԱՊՀ և Բալթյան երկրների կենտրոնական բանկերի իրավաբանական ծառայությունների ղեկավարների տարեկան հանդիպումը, որին մասնակցել են 14 պատվիրակներ 9 պետություններից:

2008 թվականի նոյեմբերի 21-22-ը ՀՀ կենտրոնական բանկը կազմակերպել է տոնակատարություններ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության դրամի թողարկման 15-ամյակին, որի շրջանակներում կազմա-

կերպվել է «կլոր-սեղան»՝ «Ֆինանսական կայունությունը փոփոխվող աշխարհում» թեմայով: Միջոցառումներին և «կլոր-սեղանին» մասնակցել և ելույթ են ունեցել 23 պատվիրակներ 13 երկրներից (որից՝ 3 կառավարիչ և 6 փոխկառավարիչ), ինչպես նաև Արժույթի միջազգային հիմնադրամի պատվիրակությունը:

ԿԲ ներքին վերապատրաստումների առումով հատկանշական է, որ դեռևս 2007 թվականին ԿԲ-ն միջազգային խորհրդատուների կողմից առաջարկված դասընթացների անցկացման վերաբերյալ կայացրել էր որոշում, ըստ որի՝ վերահսկողության ոլորտի բարձր որակավորում ունեցող ԿԲ աշխատակիցները կազմակերպում են դասընթացներ, ավելի երիտասարդ մասնագետներին փոխանցում իրենց փորձն ու գիտելիքները:

2008 թվականին ԿԲ մի շարք մասնագետներ մասնակցել են Շվեյցարիայի Ֆինանսական կայունության ինստիտուտի (FSI) կողմից առաջարկվող FSI Connect-ի դասընթացներին, որոնք անցկացվում են իրական ժամանակի ռեժիմով: Յուրաքանչյուր դասընթացի ավարտին մասնակիցը հանձնում է քննություն՝ բազմակի ընտրության սկզբունքով: 2007 թվականից գործում է ՀՀ ԿԲ բանկային վերահսկողության ոլորտում ընդգրկված աշխատակիցների որակավորման և մասնագիտական աճի ապահովման սկզբունքորեն նոր մոտեցում, ըստ որի՝ ֆինանսական վերահսկողության ոլորտում կարող են աշխատանքի ընդունվել կամ աշխատանքային առաջխաղացում ունենալ այն աշխատակիցները, ովքեր հաջողությամբ ավարտել են վերոնշյալ դասընթացները: Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. «Կապիտալ և Բազել 2», «Վարկային ռիսկ», «Շուկայական ռիսկ», «Գործառնական ռիսկ», «Հաշվապահություն», «Վճարահաշվարկային համակարգեր», «Այլ վերահսկողական թեմաներ»: Յուրաքանչյուր թեմա մատուցվում է երեք մակարդակով՝ բազային, միջին և խորացված:

ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման, վերահսկողության կատարելագործման, արդիականացման և արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ կենտրոնական բանկը մշտապես կարևորել է կադրերի վերապատրաստման և օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության աշխատանքների շարունակականության ապահովման գործընթացը:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2008 ԹՎԱԿԱՆԻՆ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը

2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 22 առևտրային բանկեր՝ 381 մասնաճյուղերով (մասնաճյուղերի քանակն ավելացել է 34-ով):

Տարվա ընթացքում բանկային համակարգի[7] ֆինանսական միջնորդությունը բնութագրող ցուցանիշները բավականաչափ աճել են. 31.12.2008 թ. դրությամբ համակարգի ընդհանուր ակտիվները կազմել են ՀՆԱ 28.0%-ը, վարկերը՝ 16.9%-ը՝ նախորդ տարվա համապատասխանաբար 24.3%-ի և 13.0%-ի փոխարեն:

Կենտրոնացվածությունը ՀՀ բանկային համակարգում

2008 թվականին շարունակվել են բանկային համակարգի կենտրոնացվածության մակարդակի նվազման միտումները: ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի[8] կենտրոնացվածության գործակիցը ավելի է նվազել: Տարբեր ամփոփ ցուցանիշների գծով Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցները տատանվում են 0.06-ից 0.1-ի միջակայքում՝ վկայելով համակարգի համեմատաբար թույլ կենտրոնացվածության մասին:

Աղյուսակ 3. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից

Ցուցանիշներ	31.12.06	31.12.07	31.12.08
Ընդհանուր ակտիվներ	0.08	0.08	0.07
Ընդհանուր պարտավորություններ	0.09	0.08	0.08
Ընդհանուր կապիտալ	0.07	0.07	0.06
Տնտեսությանը տրամադրված վարկեր	0.08	0.09	0.08
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ	0.10	0.09	0.09
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)	0.15	0.11	0.10

[7] *ՀՀ տարածքում գործող 22 առևտրային բանկերը:*

[8] *Հերֆինդալ - Հիրշմանի գործակիցն ընդունում է 0-1 միջակայքում արժեքներ և բնութագրում կենտրոնացվածությունը (0-ին մոտ արժեքները նշանակում են կենտրոնացվածության ցածր աստիճան):*

Խոշոր և մանր բանկերի միջև բևեռացվածությունը փոքր-ինչ նվազել է. տարեսկզբին խոշորագույն 10 բանկերին բաժին էր ընկնում համակարգի ակտիվների 77%-ը, խոշորագույն 4 բանկերին՝ 45%-ը, իսկ տարեվերջին՝ համապատասխանաբար 76%-ը և 44%-ը: Բևեռացվածության նվազում է արձանագրվել նաև վարկերում, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ժամկետային և ցպահանջ պարտավորություններում՝ ընդ որում՝ ինչպես խոշորագույն 4 բանկերի, այնպես և 10 բանկերի գծով:

Աղյուսակ 4. Բանկային հատվածի կենտրոնացվածության մակարդակը (%)

Ցուցանիշներ	31.12.06	31.12.07	31.12.08
Ընդհանուր ակտիվներ			
ԿԳ 4 (խոշորագույն չորս բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	46	45	44
ԿԳ 10 (խոշորագույն տասը բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	80	77	76
Ընդհանուր պարտավորություններ			
ԿԳ 4	49	46	46
ԿԳ 10	84	80	80
Ընդհանուր կապիտալ			
ԿԳ 4	38	41	38
ԿԳ 10	67	67	66
Ծնտեսությանը տրամադրված վարկեր			
ԿԳ 4	47	50	48
ԿԳ 10	83	83	79
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ			
ԿԳ 4	49	41	40
ԿԳ 10	87	81	79
Ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)			
ԿԳ 4	57	51	47
ԿԳ 10	85	81	78

ՀՀ բանկային համակարգի մրցունակության մակարդակը 2008 թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնահատվել է Փանզարի և Ռոսսի կողմից մշակված մոդելով[9]: Փանզարի և Ռոսսի մոդելով դիտարկվել են ՀՀ բանկային համակարգի տոկոսային եկամտի վրա ծախսային գործոնների, այն է՝ աշխատավարձի գծով ծախսերի, հիմնական միջոցների և տոկոսային ծախսերի ազդեցությունները՝ օգտագործելով ՀՀ բանկային

[9] Փանզարի և Ռոսսի մոդելը հիմնված է մրցակցության, մենաշնորհային մրցակցության և մենաշնորհի վերաբերյալ տեսական մոդելների վրա: Ըստ մոդելի՝ մենաշնորհային շուկայում մուտքային գործոնային գների աճը հանգեցնում է սահմանային ծախսերի աճի, որը բերում է արդյունքների և ընդհանուր եկամուտների նվազման (քանի որ, մասնակիցները հակված են կրճատելու բարձր գներով մուտքային գործոնների ծեռքբերումը): Մրցակցային շուկայի պայմաններում, մուտքային գործոնային գների աճը հանգեցնում է սահմանային ծախսերի և եկամուտների նույն չափով աճի: Իսկ խմբաշնորհային մրցակցության պայմաններում մուտքային գների աճը հանգեցնում է եկամուտների ոչ համամասնական, ավելի փոքր չափով աճի:

համակարգի 2003-2008 թթ. տվյալները: Տոկոսային եկամտի վրա ծախսային գործոնների ազդեցության գործակիցների գումարի հիման վրա ստացվող ցուցանիշի՝ H-վիճակագրի[10] արժեքը ՀՀ բանկային համակարգի համար 0.3 է, ինչը վկայում է, որ ՀՀ բանկային համակարգին բնորոշ են խմբաշնորհային մրցակցության տարրեր:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼԸ

Բանկային համակարգի կապիտալի աճի միտումները


Հաշվետու տարվա ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 37.2%-ով (63.8 մլրդ դրամով) և կազմել 235.4 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճին հիմնականում նպաստել են բանկային համակարգի կողմից ապահովված շահույթը և կանոնադրական հիմնադրամի աճը:

2008 թվականին կանոնադրական հիմնադրամ են համալրել 11 բանկեր՝ ընդհանուր 36.0 մլրդ դրամով: Կանոնադրական հիմնադրամի աճի գերակշիռ մասը (34 մլրդ դրամը) համալրվել է արտաքին աղբյուրներից, որի արդյունքում բանկային համակարգի կանոնադրական հիմնադրամում ոչ ռեզիդենտների փայաբաժինը տարեսկզբի 58%-ից տարեվերջին կազմել է 68%:

Բանկային համակարգի 2008 թվականի զուտ շահույթը կազմել է 26.9 մլրդ դրամ:

Գծապատկեր 1. Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը



1. Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ, 2. Գլխավոր պահուստ, 3. Չբաշխված շահույթ (ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների), 4. Այլ


[10] *Փանզարի և Ռոսսի մոդելի արդյունքում հաշվարկվում է H-վիճակագիրը, որի արժեքը բնութագրում է շուկայի մրցակցությունը. H-վիճակագրի արժեքի՝ 1-ին մոտ լինելու պարագայում շուկան բնութագրվում է որպես կատարյալ մրցակցային, 0 < H < 1 միջակայքը բնորոշ է խմբաշնորհային մրցակցությանը, իսկ 0-ից փոքր արժեքով H-վիճակագիր ունեցող շուկան մենաշնորհային է:*

Ընդհանուր պարտավորությունների աճի տեմպը փոքր-ինչ զիջել է ընդհանուր կապիտալի աճի տեմպը, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցությունը (լևերիջի գործակիցը) ավելացել է 0.9 տոկոսային կետով և տարեվերջին կազմել է 29.9%:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը

2008 թվականի տարեսկզբից ուժի մեջ մտավ բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջի փոփոխված տարբերակը, որտեղ ամրագրվել են Բազել-2 համաձայնագրի ստանդարտացված մոտեցման հիմնական դրույթները: Մասնավորապես՝ կապիտալի համարժեքության հաշվարկում բացի վարկային ռիսկից ընդգրկվել են նաև շուկայական և գործառնական ռիսկերը: Միաժամանակ, տարվա ընթացքում վարկերի աճի տեմպը գերազանցել է կապիտալի աճի տեմպը: Վերոնշյալների արդյունքում ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը տարվա ընթացքում նվազել է 2.6 տոկոսային կետով՝ կազմելով 27.5%:

Գծապատկեր 2. Ընդհանուր կապիտալի համարժեքությունը ըստ բանկերի



Առևտրային բանկերի սեփականատերերը

Ըստ կազմակերպաիրավական տեսակների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող 22 առևտրային բանկերից 1-ը սահմանափակ պատասխանատվությամբ, 3-ը՝ բաց բաժնետիրական, 18-ը՝ փակ բաժնետիրական ընկերություններ են:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի մասնակիցներ են (բաժնետերեր, փայատերեր) 1652 ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնցից 83-ը՝ ոչ ռեզիդենտներ: Եթե բացառենք բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեցող 3 բանկերը, ապա 19 բանկերի մասնակիցները 78 ֆիզիկա-

կան և իրավաբանական անձինք են, որոնցից 37-ը՝ ոչ ռեզիդենտներ: Հինգ բանկերում բաժնեմասերի 100%-ը տնօրինում է մեկ անձ (մեկ ռեզիդենտ իրավաբանական անձ, երեք ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ և մեկ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ), իսկ ևս ութ բանկերում մեկ բաժնետեր տնօրինում է բաժնետոմսերի 50%-ից ավելի բաժնեմասը:


ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկային համակարգի ներգրաված միջոցները

2008 թվականին բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն աճել են 33.0%-ով (195.4 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 788.3 մլրդ դրամ:

Դրամային պարտավորություններն ավելացել են 15.5%-ով, իսկ արտարժութային պարտավորությունները՝ 51.7%-ով, ինչի արդյունքում դրամային պարտավորությունների տեսակարար կշիռը նվազել է 6.8 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 44.9%:

Գծապատկեր 3. Բանկային համակարգի պարտավորությունները



Պարտավորությունների աճը հիմնականում ապահովվել է ի հաշիվ բանկերի նկատմամբ պարտավորությունների (124.5 մլրդ դրամ) և ընդհանուր ավանդների (50.9 մլրդ դրամ) աճի:


Բանկերի լորո թղթակցային հաշիվները նվազել են 24.8%-ով (1.8 մլրդ դրամով): Տարեվերջին լորո հաշիվների 46%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտ բանկերին: Ոչ ռեզիդենտ բանկերի լորո թղթակցային հաշիվների 54%-ը բաժին է ընկել Ռուսաստանում և 38%-ը՝ Իրանում գործող բանկերին:

Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ընդհանուր ավանդները (ցպահանջ և ժամկետային միջոցները) 31.12.2008 թ. դրությամբ կազմել են 449.5 մլրդ դրամ:

Ի տարբերություն դրամային ավանդների՝ նախորդ տարիներին ձևավորված առաջանցիկ աճի տեմպի միտումներին՝ 2008 թվականին ավանդների աճն ամբողջապես ապահովվել է արտարժութային ավանդների աճի հաշվին: Արտարժութային ավանդներն աճել են 37.6%-ով (63.1 մլրդ դրամով), իսկ դրամային ավանդները նվազել են 5.3%-ով (12.2 մլրդ դրամով):


Հաշվետու տարում և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորությունները նվազել են համապատասխանաբար 11.9%-ով (16.9 մլրդ դրամով) և 8.9%-ով (6.1 մլրդ դրամով): Հատկանշական է, սակայն, որ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվների քանակն ավելացել է 18.2%-ով, իսկ ֆիզիկական անձանց ընթացիկ հաշիվների քանակը՝ 0.5%-ով՝ վկայելով վերջիններիս հաշիվների ծավալների փոքրացման մասին:

Գծապատկեր 4. Բանկային համակարգի ցպահանջ ավանդները



Իրավաբանական և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալներն աճել են համապատասխանաբար 51.6%-ով (30.2 մլրդ դրամով), 33.6%-ով (43.7 մլրդ դրամով), իսկ ժամկետային հաշիվների քանակը՝ համապատասխանաբար 31.1%-ով և 13.3%-ով, ինչը վկայում է, որ դրսևորվել են և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձանց ժամկետային ավանդների խոշորացման որոշակի միտումներ:


Գծապատկեր 5. Բանկային համակարգի ժամկետային ավանդները



Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը

2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում ծախսատար պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 95.0%՝ (նախորդ տարի՝ 92.4%): Տարվա ընթացքում ցպահանջ պարտավորությունները նվազել են, ինչի արդյունքում, ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունների բացառման դեպքում, ծախսատար ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ ավելացել է 14.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 71.0%:

Գծապատկեր 6. Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը



1. Բանկային թղթակցային հաշիվներ, 2. Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ ԿԲ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 3. Ցպահանջ պարտավորություններ, 4. Ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ, 6. Հաշվարկված վճարվելիք տոկոսներ, 7. Այլ պարտավորություններ

31.12.2008 թ. դրությամբ ներգրաված միջոցների 26%-ը ցպահանջ է (ավանդներ, բանկային հաշիվներ, թղթակցային հաշիվներ և այլ), 53%-ը՝ մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ և 21%-ը՝ մեկ տարուց ավելի մարման ժամկետայնությամբ:

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքում զգալի նվազել է ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորությունների (11.7 տոկոսային կետով) տեսակարար կշիռը, իսկ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններինը՝ ավելացել (12.0 տոկոսային կետով):

Առևտրային բանկերի հաճախորդները

ՀՀ առևտրային բանկերում սպասարկվող հաճախորդների քանակը 2008 թվականին ավելացել է 8.7%-ով (81.2 հազարով), ընդ որում՝ իրավաբանական անձ-հաճախորդների քանակն ավելացել է 13.3%-ով (6.0 հազարով), իսկ ֆիզիկական անձ-հաճախորդների քանակը՝ 8.5%-ով (75.2 հազարով):

Տարեվերջին ֆիզիկական անձ-հաճախորդների քանակը կազմել է 963.7 հազար, իսկ իրավաբանական անձ-հաճախորդների քանակը՝ 51.4 հազար:

Տարվա ընթացքում բանկային հաշիվների քանակն ավելացել է 25.4%-ով և կազմել 1.4 միլիոն, որի 77%-ը ընթացիկ և 23%-ը՝ ժամկետային հաշիվներն են: Ընթացիկ հաշիվների քանակն ավելացել է 1.7%-ով կամ 17.4 հազարով (հիմնականում իրավաբանական անձանց հաշիվների աճի արդյունքում) և տարեվերջին կազմել է 1068.1 հազար: Ժամկետային հաշիվների քանակն ավելացել է 13.6%-ով կամ 7.3 հազարով (հիմնականում ի հաշիվ ֆիզիկական անձանց ժամկետային հաշիվների աճի) և տարեվերջին կազմել 60.9 հազար: Վերջին տարիներին արձանագրվել են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների և՛ ծավալային, և՛ քանակական աճի կայուն միտումներ, ինչին նպաստել է նաև ավանդների երաշխավորման համակարգի գործունեությունը:


ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների աճի միտումները


2008 թվականի ընթացքում ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 33.9%-ով (259.2 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 1.0 տրլն 23 մլրդ դրամ:

Ընդհանուր ակտիվների աճի 80%-ը բաժին է ընկել տնտեսությանը տրամադրված վարկերին: Նախորդ չորս տարիների միտումները պահպանվել են, և 2008 թվականին վարկերը, ընդհանուր ակտիվների համեմատությամբ, դարձյալ դրսևորել են առաջանցիկ աճ: Տարվա ընթացքում արձանագրվել է տնտեսությանը տրամադրված վարկերի 51% աճ (208.1 մլրդ դրամով): Ընդհանուր ակտիվներում վարկերի տեսակարար կշիռը տարեսկզբի 53.5%-ից տարեվերջին հասել է 60.3%-ի:

Գծապատկեր 7. Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները



Գծապատկեր 8. Բանկային համակարգի ակտիվները



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ՝ ԿԲ), 3. Պետական արժեթղթեր (ներառյալ՝ ռեպո համաձայնագրերը), 4. Վարկեր տնտեսությանը, 5. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 6. Հիմնական միջոցներ, 7. Այլ արժեթղթեր, 8. Լիզինգ, ֆակտորինգ, 9. Այլ ակտիվներ

ԿԲ-ում թղթակցային հաշիվներն ավելացել են 38.6%-ով (29.0 մլրդ դրամով), այլ բանկերում նոստրո թղթակցային հաշիվները՝ 86.0%-ով (35.1 մլրդ դրամով): Նոստրո թղթակցային հաշիվներն առանձնանում են կենտրոնացվածությամբ ինչպես աշխարհագրական առումով, այնպես էլ ըստ ռեզիդենտայնության: Տարեվերջին թղթակցային հաշիվների 96.2%-ը տեղաբաշխված է եղել ոչ ռեզիդենտ բանկերում (նախորդ տարի՝

96.3%-ը): ԱՄՆ բանկերում ներդրված է ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների ընդհանուր ծավալի 40%-ը, եվրոպական բանկերում՝ 38%-ը, Ռուսաստանի բանկերում՝ 11%-ը (31.12.2007թ. համապատասխանաբար 33%, 41% և 11%) և այլ երկրների բանկերում՝ 11%-ը:

Պետական արժեթղթերում ներդրումների ծավալները (ներառյալ ռեպո համաձայնագրերը) նվազել են 20.0%-ով (19.0 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել են 76.0 մլրդ դրամ: Արժեթղթերում բանկային համակարգի կողմից կատարված ներդրումների նվազմանը համամասնորեն հիմնականում ավելացել են վարկային ներդրումները:


Այլ արժեթղթերում ներդրումների ծավալները աճել են 688 մլն դրամով և տարեվերջին կազմել 3.4 մլրդ դրամ:

Բանկային համակարգի հիմնական միջոցները տարվա ընթացքում ավելացել են 21.7%-ով և տարեվերջին կազմել 51.8 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 22.0%-ը: ՀՀ բոլոր առևտրային բանկերում հիմնական միջոցների մեծությունը զիջել է ընդհանուր կապիտալի մեծությանը, ինչը վկայում է, որ բանկերի հիմնական միջոցները ձեռք չեն բերվել փոխառու միջոցների հաշվին:

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների կառուցվածքը

31.12.2008 թ. դրությամբ բանկային համակարգի եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կազմել է 78.3% (31.12.2007թ. դրությամբ՝ 76.6%): Առանց ցածր եկամտաբեր թղթակցային հաշիվների, մնացյալ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 72.0% (31.12.2007թ. դրությամբ՝ 76.6%):

Գծապատկեր 9. Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ՝ ԿԲ), 3. Պետական արժեթղթեր (ներառյալ՝ռեպո համաձայնագրերը), 4. Վարկեր տնտեսությանը, 5. Պահանջներ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 6. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 7. Հիմնական միջոցներ, 8. Այլ արժեթղթեր, 9. Լիզինգ, ֆակտորինգ, 10. Այլ ակտիվներ

Ակտիվների կառուցվածքում փոփոխվել են պետական արժեթղթերում ներդրումների և վարկերի տեսակարար կշիռները: Տնտեսությանը տրամադրված վարկերի աճի տեմպը 2008 թվականին գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, որը հանգեցրել է ակտիվների կազմում վարկերի տեսակարար կշռի 6.8 տոկոսային կետով աճի: Պետական արժեթղթերում ներդրումների տեսակարար կշիռը նվազել է 5.0 տոկոսային կետով:

Համակարգի կողմից տեղաբաշխված միջոցների ժամկետայնությունը 2008 թվականին գրեթե չի փոփոխվել. 31.12.2008 թվականի դրությամբ տեղաբաշխված միջոցների 23%-ը ցպահանջ է, 40%-ը՝ 1-12 ամիս ժամկետայնությամբ և 37%-ը՝ մեկ տարուց ավելի և անժամկետ (նախորդ տարի՝ համապատասխանաբար 21%, 44% և 35%):


Բանկային համակարգի վարկային ներդրումները

Բանկային համակարգի վարկային ներդրումներ[11] ավելացել են 44.9%-ով (201.7 մլրդ դրամով) և կազմել 650.7 մլրդ դրամ: Դրամով վարկային ներդրումներն ավելացել են 50.0%-ով, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 37.6%-ով, որի արդյունքում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում աճել է 2.0 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 61.3%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները նվազել են 45.5%-ով և կազմել 7.9 մլրդ դրամ:

Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ավելացել են 48.0%-ով և կազմել 642.8 մլրդ դրամ:

Գծապատկեր 10. Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9.Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

[11] *Վարկային ներդրումներում ներառվում են տնտեսության վարկերը, լիզինգը, ֆակտորինգը և ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված վարկերն ու ավանդները:*

2008 թվականին տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ: Արդյունաբերության ճյուղում ավելացել են 52.6%-ով (29.6 մլրդ դրամով), գյուղատնտեսությունում՝ 63.0%-ով (14.1 մլրդ դրամով), շինարարությունում՝ 79.2%-ով (17.4 մլրդ դրամով), տրանսպորտի և կապի ճյուղում՝ 75.0%-ով (4.4 մլրդ դրամով), առևտրի ճյուղում՝ 52.1%-ով (45.2 մլրդ դրամով), հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտներում՝ 14.6%-ով (2.9 մլրդ դրամով): Սպառողական և հիփոթեքային վարկերն աճել են համապատասխանաբար 41.2%-ով (50.9 մլրդ դրամով) և 56.7%-ով (30.2 մլրդ դրամով):

Բանկային համակարգի վարկերը հիմնականում կենտրոնացված են սպառողական, առևտրի, հիփոթեքային և արդյունաբերության ոլորտներում:

Բանկային համակարգի ըստ տնտեսության ճյուղերի վարկավորման՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը, հիմնականում ի հաշիվ ցածր տեսակարար կշիռ ունեցող հիփոթեքային վարկերի կտրուկ աճի, նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ նվազել է՝ 0.002-ով և կազմել 0.165: Նույն ցուցանիշի մեծությունը, ըստ բանկերի միջինի, կազմել է 0.209, ինչը վկայում է, որ մի շարք բանկերում վարկավորման ճյուղային կենտրոնացվածությունը համեմատաբար բարձր մակարդակ ունի:

Հաշվետու տարում վարկային ներդրումներում երկարաժամկետ (1 տարի և ավելի ժամկետայնությամբ) վարկերի տեսակարար կշիռը աճել է 7.8 տոկոսային կետով և կազմել 74.0%:

Վերջին տարիներին վարկերի կառուցվածքում ավելացել է երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռը: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում բանկերի միջնորդությամբ տրամադրվող երկարաժամկետ նպատակային վարկերը մասամբ օժանդակում են երկարաժամկետ վարկերի պահանջարկի բավարարմանը: 31.12.2008 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործող 18 բանկեր և 3 վարկային կազմակերպություններ սպասարկում են.

- ✓ Համաշխարհային բանկի,
- ✓ Գերմանա-հայկական հիմնադրամի,
- ✓ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի,
- ✓ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի,
- ✓ Միգրացիայի միջազգային կազմակերպության,
- ✓ Ասիական զարգացման բանկի,
- ✓ Սևծովյան առևտրի և զարգացման բանկի,
- ✓ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի,
- ✓ Գյուղական ֆինանսավորման կառույց ծրագրերի իրականացման գրասենյակի,
- ✓ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում իրականացվող վարկային ծրագրերը:


Նշված ծրագրերի շրջանակներում բանկերի կողմից տրամադրված վարկերը 2008 թվականին աճել են 114%-ով և տարեվերջին կազմել 83 մլրդ դրամ: Միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերում 31.12.2008 թ. դրությամբ ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմել է 0.6%: Վարկերի մոտ 87%-ը մեկ տարուց ավելի ժամկետով է, 11%-ը՝ 6 ամսից մեկ տարի ժամկետով և 2%-ը՝ մինչև 6 ամիս ժամկետով:

31.12.2008 թվականի դրությամբ ծրագրերի վարկավորման հիմնական ուղղություններ են հանդիսացել առևտուրը՝ ընդհանուր վարկավորման ծավալի 37%-ը, գյուղատնտեսությունը՝ 17%-ը, սպառողականը՝ 20%-ը, սննդի արդյունաբերությունը՝ 11%-ը և հիփոթեքայինը՝ 10%-ը:

Վարկային պորտֆելի որակը

2008 թվականի ընթացքում չաշխատող (հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի) վարկերի և դեբիտորական պարտքերի մեծությունը աճել է 17.5 մլրդ դրամով և կազմել 28.9 մլրդ դրամ, իսկ ստանդարտ ակտիվների մեծությունը՝ 233.6 մլրդ դրամով և կազմել 702.6 մլրդ դրամ: Հաշվետու տարվա ընթացքում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուրում ավելացել է 1.5 տոկոսային կետով՝ կազմելով 3.9%:

Գծապատկեր 11. Բանկային համակարգի չաշխատող ակտիվները



1. Հսկվող դասի վարկեր և դեբիտորական պարտքեր, 2. Ոչ ստանդարտ դասի վարկեր և դեբիտորական պարտքեր, 3. Կասկածելի դասի վարկեր և դեբիտորական պարտքեր

Տարեվերջին չաշխատող ակտիվների 1.5%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտներին, իսկ 98.5%-ը՝ ռեզիդենտներին: Ռեզիդենտների վարկային ներդրումներում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է եղել շինարարության ճյուղին (8.7%), հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներին (6.8%) և արդյունաբերությանը (6.4 %) տրամադրված վարկերում:

Չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ցածր է եղել առևտրի և գյուղատնտեսության ճյուղերում՝ համապատասխանաբար 2.7% և 2.1%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ


Բանկային համակարգի եկամտաբերությունը

2008 թվականին բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 26.9 մլրդ դրամ: Տարվա ընթացքում 19 բանկեր աշխատել են շահույթով, որոնց ընդհանուր զուտ շահույթի մեծությունը կազմել է 28.9 մլրդ դրամ:

Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ նվազել են՝ հիմնականում պայմանավորված ցպահանջ պարտավորությունների և տոկոսային մարժայի նվազմամբ:

Բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (զուտ շահույթի հարաբերությունն ակտիվների միջին տարեկան մեծությանը) կազմել է 3.0%, իսկ ըստ կապիտալի (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին տարեկան մեծությանը)՝ 13.4%: Նույն ցուցանիշները 2007 թվականին համապատասխանաբար կազմել են 3.4% և 14.8%: Բանկային համակարգի զուտ գործառնական մարժան[12] հաշվետու տարում նվազել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 4.5%:

Գծապատկեր 12. Շահութաբերությունը՝ ըստ 19 շահութաբեր բանկերի



Շահութաբեր 19 բանկերի շահույթի՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.02-ով և կազմել 0.12 միավոր: Վերջինս բնութագրում է շահութաբեր բանկերի միջև համակարգի շահույթի կենտրոնացվածության ոչ բարձր մակարդակը:

Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը

2008 թվականին բանկային համակարգի շահույթը գերազանցել է նախորդ տարվա շահույթի մեծությունը 29%-ով (6.0 մլրդ դրամով), ինչը հիմնականում պայմանավորվել է վարկերի մեծածավալ աճի արդյունքում տոկոսային եկամուտների աճով:


Նախորդ տարվա համեմատ, 2008 թվականին համախառն եկամուտներն ավելացել են 49.8%-ով (56.9 մլրդ դրամով), իսկ համախառն ծախսերը՝ 54.9%-ով (48.3 մլրդ դրամով):

Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտներն ավելացել են 56.3%-ով, ոչ տոկոսային եկամուտները՝ 27.9%-ով և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձը ավելացել է 57.8%-ով:

[12] *Զուտ գործառնական մարժան հավասար է զուտ տոկոսային և զուտ ոչ տոկոսային եկամուտների գումարի և ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծության հարաբերությանը:*


Ծախսային մասում, նախորդ տարվա համեմատ, տոկոսային ծախսերն ավելացել են 91.4%-ով, ոչ տոկոսային ծախսերը՝ 39.0%-ով, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մասհանումները՝ 53.8%-ով:

Գծապատկեր 13. Բանկային համակարգի ծախսերը և եկամուտները



Եկամուտների և ծախսերի վերոնշված աճի արդյունքում համախառն եկամտի կազմում 2.3 տոկոսային կետով աճել են տոկոսային եկամտի, իսկ համախառն ծախսերում՝ 4.6 տոկոսային կետով՝ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռները:

Գծապատկեր 14. Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը



Բանկային համակարգի տոկոսային եկամուտների աճը հիմնականում պայմանավորվել է տնտեսությանը տրամադրված վարկերից ստացած եկամուտների 61.0% աճով: Վարկերից ստացված տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային եկամուտների կազմում ավելացել է 2.4 տոկոսային կետով՝ կազմելով 83.8%:

Ոչ տոկոսային եկամուտների աճի հիմնական պատճառը արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտների 69.5% աճն է: Ոչ տոկոսային եկամուտների 44.9%-ը բաժին է ընկել միջնորդավճարներից ստացված եկամուտներին, 41.4%-ը՝ արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտներին:

Տոկոսային ծախսերի աճը հիմնականում պայմանավորվել է ժամկետային ավանդների դիմաց վճարվելիք տոկոսային ծախսերի 78.3% աճով: Վերջինիս բաժին է ընկել տոկոսային ծախսերի 50.5%-ը:

Ոչ տոկոսային ծախսերի աճը հիմնականում հաշվեգրված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 40.1% աճի արդյունք է, որը կազմել է ոչ տոկոսային ծախսերի 45.6%-ը: Բանկային համակարգի միջին աշխատավարձի բարձրացումը 2008 թվականին շարունակվել է. աշխատավարձի 40% աճին զուգահեռ բանկային համակարգի աշխատողների թվաքանակն ավելացել է 18.7%-ով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Չնայած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին՝ 2008 թվականին ՀՀ առևտրային բանկերում ռիսկերը կառավարելի շրջանակներում են եղել: 2008 թվականին, ինչպես և նախորդ տարի, բանկային համակարգում արձանագրվել է ակտիվների նկատմամբ վարկերի առաջանցիկ աճի տեմպ, որը, սակայն, վարկային և իրացվելիության ռիսկերի էական վատթարացման չի հանգեցրել:


Վարկային ռիսկ

Բանկային համակարգում առկա ֆինանսական ռիսկերից էապես կարևորվում է վարկային ռիսկի պատշաճ կառավարումը: Չնայած, ըստ տարբեր գնահատումների նշվում է, որ վերջին տարիներին արձանագրված վարկերի կտրուկ աճը, զուգորդվելով ՀՀ-ում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության հետևանքների հետ, կարող է նպաստել վարկերի որակի զգալի նվազմանը, այնուամենայնիվ վարկերի որակի էական վատթարացում 2008 թվականին չի արձանագրվել: 2008 թվականին ընդհանուր վարկերում «հսկվող», «ոչ ստանդարտ» և «կասկածելի» դասերի վարկերի (այսուհետ՝ չաշխատող վարկերի) տեսակարար կշիռը ավելացել է 2.0 տոկոսային կետով և կազմել 4.4%: Չաշխատող ակտիվների (վարկերի և դեբիտորական պարտքերի) մեծությունը կազմել է նորմատիվային ընդհանուր կապիտալի 13.5%-ը (նախորդ տարի՝ 7.6%): Հատկանշական է, որ եթե չաշխատող ակտիվների 28.8 մլրդ դրամ մեծությունից հանենք ակտիվների հնարավոր կորուստների հատուկ պահուստի 5.2 մլրդ դրամ մեծությունը, ապա մնացյալ՝ ծածկույթ չունեցող չաշխատող ակտիվների մեծությունը կկազմի նորմատիվային կապիտալի 11.5%-ը: Այսպես, եթե կառուցվի սթրես-սցենար, ըստ որի՝ դասակարգված ակտիվներն ամբողջությամբ դուրս գրվեն (անտեսվում է գրավադրված գույքի արժեքը), ապա բանկային համակարգի վնասը չի գերազանցի նորմատիվային կապիտալի 11.5%-ը:

2008 թվականի ընթացքում զուտ մասհանումների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կազմել է ընդամենը 0.5% (նախորդ տարի 0.6%):

Ըստ տնտեսության ճյուղերի վարկային ներդրումների բաշխվածությունը մեծ կենտրոնացումներ չունի, ամենամեծ տեսակարար կշիռն ունեն սպառողական վարկերը՝ 27.1% և առևտրի ճյուղի վարկերը՝ 20.5%:

Գծապատկեր 15. Նորմատիվային ցուցանիշները ըստ բանկերի



31.12.2008 թվականի դրությամբ բանկային համակարգի մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը կազմել է նորմատիվային կապիտալի 13.5%-ը, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 85.5%-ը, բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 2.5%-ը, բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 8.4%-ը: Նշված ցուցանիշները վկայում են, որ այս ռիսկերը կառավարելի շրջանակներում են:

Արտարժութային ռիսկ

2008 թվականին ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ միջին տարեկան արժևորումը կազմել է 11.5%, իսկ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (դեկտեմբերի վերջը նախորդ տարվա դեկտեմբերի վերջի նկատմամբ)՝ 0.8% արժեզրկում:

Այլ արժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով 2008թ. բանկային համակարգը արտարժույթի վերագնահատման արդյունքում ունեցել է ընդհանուր 891 մլն դրամի չափով վնաս, որը կազմել է բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 0.4%-ը (նախորդ տարի վնասը կազմել է կապիտալի 0.1%-ը): Արտարժույթի վերագնահատման արդյունքում վնաս է ունեցել 14 բանկ, իսկ եկամուտ՝ 8 բանկ: Հատկանշական է նաև, որ բանկային համակարգն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների արդյունքում հաշվետու տարում ապահովել է 14.6 մլրդ դրամ եկամուտ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 70%-ով):

Արտարժույթի ռիսկի գնահատման VAR (Value at risk) մեթոդաբանությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 31.12.2008 թ. դրությամբ բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման արդյունքում մեկօրյա հնարավոր վնասները 95% հավանականությամբ չեն գերազանցի 145 մլն դրամը:

Իրացվելիության ռիսկ


2008 թվականին բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների ծավալը նվազել է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ, ինչպես նախորդ տարիներին, վարկերը ակտիվների աճի համեմատ դրսևորել են առաջանցիկ աճի միտումներ:

Տարվա ընթացքում բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների ծավալը նվազել է 8.2%-ով և 31.12.2008 թ. դրությամբ կազմել է 222.8 մլրդ դրամ:

Արդյունքում՝ բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը (բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերություն) նվազել է 9.8 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 23.8%: Չնայած բարձր իրացվելի ակտիվների նվազմանը, ցպահանջ պարտավորությունները ավելի արագատեմպ են նվազել, ինչի արդյունքում բանկային համակարգի ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշը (բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերություն) աճել է 4.9 տոկոսային կետով՝ կազմելով 103.1%:

Ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշները նորմատիվային պահանջվող մակարդակից բարձր են և իրացվելիության հիմնախնդրի առաջացման վտանգ չեն պարունակում:

Գծապատկեր 16. Իրացվելիության նորմատիվային ցուցանիշները ըստ բանկերի



Իրացվելիության տեսանկյունից կարևորվում է նաև, որ բանկային համակարգի պարտավորությունները կախվածություն չունենան խոշոր ավանդատուներից և բացառվեն բանկային համակարգի պարտավորու-

թյունների կենտրոնացումները: 2008 թվականին ընդհանուր պարտավորություններում «խոշոր» պարտավորությունների[13] տեսակարար կշիռը աճել է 2.3 տոկոսային կետով և կազմել 32.7%:

Գնային ռիսկ

ՀՀ բանկային համակարգում գնային ռիսկը գնահատվում է բավականին ցածր: 2008 թվականին բանկային համակարգը գնային ռիսկով պայմանավորված վնասներ չի ունեցել:

Համեմատաբար ռիսկային ոչ պետական արժեթղթերում բանկային համակարգի կողմից տարեվերջին իրականացված ներդրումները կազմել են 3.4 մլրդ դրամ, որը նորմատիվային կապիտալի 1.6%-ն է, և նշված արժեթղթերի գների նույնիսկ կտրուկ տատանումները բանկային համակարգին էական վնաս չեն պատճառի:

Առևտրային նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից բանկային համակարգը տարվա ընթացքում ունեցել է 457 մլն դրամ զուտ եկամուտ, իսկ հիմնական միջոցների վերագնահատումից՝ 0.5 մլն դրամ զուտ եկամուտ:

Հիմնական միջոցների գների ոչ կտրուկ տատանումները ևս խոշոր վնասների չեն հանգեցնի: Հիմնական միջոցների շուկայական գների, օրինակ՝ 30%-ով նվազման դեպքում անշարժ գույքի վերագնահատման արդյունքում համակարգի կորուստը կկազմի նորմատիվային կապիտալի 7.4%-ը: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի հիմնական միջոցների մեծությունը կազմել է 51.8 մլրդ դրամ, իսկ սեփականություն հանդիսացող բռնագանձված անշարժ գույքի մեծությունը՝ 520 մլն դրամ: Գնահատվել է նաև անշարժ գույքի գների նվազման ազդեցությունը վարկային պորտֆելի որակի վրա: Ըստ սթրես-սցենարների հաշվարկների՝ անշարժ գույքի շուկայական արժեքի 30% արժեզրկման դեպքում խոցելի վարկային պորտֆելի[14] 50%-ի չվերադարձման արդյունքում բանկային համակարգի վնասը կկազմի նորմատիվային ընդհանուր կապիտալի 10%-ը:

Տոկոսադրույքի ռիսկ

Վերջին տարիներին բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ճեղքվածքը գրեթե չի փոփոխվում՝ մնալով մոտ կես տարվա շրջանակներում: Հատկանշական է, սակայն, որ ակտիվների միջին ժամկետայնության փոքր-ինչ աճին զուգահեռ աճում է նաև պարտավորությունների միջին ժամկետայնությունը:

Տոկոսադրույքի ռիսկը բանկային համակարգում կառավարելի շրջանակներում է, քանի որ ակտիվների և պարտավորությունների միջին ժամկետայնությունը կարճ է, և համակարգը շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների ժամանակ կարող է արագ արձագանքել և վերանայել տոկոսադրույքները: Համաձայն տոկոսադրույքի ռիսկի դյուրացիայի մեթոդով իրականացված հաշվարկների՝ ընդհանուր շուկայական տոկոսադրույքների (ակտիվների և պարտավորությունների) 1%-ով աճի դեպքում բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքը կնվազի 1.1 մլրդ դրամով:

---

[13] Այն բոլոր միջոցների հանրագումարը, որոնք առանձին վերցրած գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը՝ առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը:

[14] Խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարն է, որոնց մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 30% արժեզրկված արժեքները:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ[15]

2008 թվականի ընթացքում վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա է ստացել չորս ընկերություն՝ «ՎՏԲ Լիզինգ» լիզինգային վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն, «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն, «Յունիլիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն և «Անիվ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն: Տարվա ընթացքում վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի քանակն ավելացել է ութով: 31.12.2008 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործել են քսանհինգ վարկային կազմակերպություններ (քառասունութ մասնաճյուղերով), որոնցից չորսը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն և քսանը՝ ունիվերսալ վարկային կազմակերպություն:

Ինչպես և նախորդ տարիներին, վարկային կազմակերպությունները, ի տարբերություն բանկերի, դարձյալ ապահովել են ակտիվների առաջանցիկ աճի տեմպ: Եվ չնայած վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող վարկերի միջին տոկոսադրույքները, որպես կանոն, փոքր-ինչ գերազանցել են բանկային համակարգի կողմից առաջարկվող վարկերի միջին տոկոսադրույքները, այնուամենայնիվ բնակչության լայն խավը օգտվում է նաև վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող վարկային ծառայություններից՝ համարելով ավելի մատչելի: Վարկային կազմակերպությունների վարկավորման ոլորտը ընդգրկում է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը տարվա ընթացքում ավելացել է 51.8%-ով (22.3 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 65.2 մլրդ դրամ կամ բանկային համակարգի ակտիվների 6.4%-ը (տարեսկզբին՝ 5.6%): Ակտիվների աճի 86.7%-ը տեղաբաշխվել է վարկերում և լիզինգում: Վարկային ներդրումները (ներառյալ լիզինգը) աճել են 51%-ով և կազմել 57.8 մլրդ դրամ: Տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է տրամադրված վարկերի ծավալների աճ: Արդյունաբերության ճյուղում վարկերն ավելացել են 36%-ով (1.6 մլրդ դրամով), գյուղատնտեսության ճյուղում՝ 109%-ով (4.2 մլրդ դրամով), շինարարությունում՝ 258%-ով (4.9 մլրդ դրամով), տրանսպորտի և կապի ոլորտում՝ 76%-ով (1.2 մլրդ դրամով), առևտրի ճյուղում՝ 33%-ով (2.4 մլրդ դրամով), հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտներում՝ 30%-ով (0.3 մլրդ դրամով): Սպառողական և հիփոթեքային վարկերը ավելացել են համապատասխանաբար 18%-ով (1.3 մլրդ դրամով) և 51%-ով (2.3 մլրդ դրամով):


Շինարարության ճյուղի վարկերի արագատեմպ աճի արդյունքում վերջինիս տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում ավելացել է:

Վարկային կազմակերպությունների չաշխատող («ստանդարտ», «հսկվող» և «կասկածելի» դասերի) վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 1.9 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 4.0%: Ըստ տնտեսության ճյուղերին տրամադրած վարկերի՝ չաշխատող վարկերի տեսակարար կշիռը բարձր է տրանսպորտի և կապի ճյուղում (ճյուղին տրամադրված վարկերի 11.2%-ը չաշխատող է) և արդյունաբերության ճյուղում (ճյուղին տրամադրված վարկերի 7.0%-ը չաշխատող է): Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը ցածր է շինարարության և գյուղատնտեսության ճյուղերում. ճյուղերին տրամադրված վարկերի համապատասխանաբար 1.1%-ը և 2.1%-ը չաշխատող է:

---

[15] Ներկայացված են 24 վարկային կազմակերպության տվյալները, քանի որ «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն գրանցման լիցենզիան ստացել է 27.12.2008 թ-ին:

Գծապատկեր 17. Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9. Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 45.6%-ով (5.6 մլրդ դրամով): Կապիտալի աճը պայմանավորվել է ընթացիկ տարվա շահույթով և կանոնադրական հիմնադրամի աճով: Տարվա ընթացքում կանոնադրական հիմնադրամ են համալրել նոր լիցենզավորված չորս, ինչպես նաև արդեն գործող վեց վարկային կազմակերպություններ՝ ընդհանուր 3.2 մլրդ դրամի չափով: Վարկային կազմակերպությունների ընթացիկ տարվա չբաշխված շահույթը կազմել է 3.0 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 5.5%, իսկ ըստ կապիտալի՝ 19.8%: Տարեվերջին կապիտալը կազմել է 17.8 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 7.6%-ը (տարեսկզբին՝ 7.2%):

Պարտավորություններն ավելացել են 54.3%-ով (16.7 մլրդ դրամով) և կազմել 47.4 մլրդ դրամ: Պարտավորությունների աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների համապատասխանաբար 7.6 մլրդ դրամ և 5.8 մլրդ դրամ աճի:

Բանկերից (գրեթե ամբողջությամբ ոչ ռեզիդենտ) և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռք բերած միջոցների մեծությունը տարեվերջին կազմել է 32.1 մլրդ դրամ: Իրավաբանական անձանցից և ֆիզիկական անձ մասնակիցներից փոխառությունների ծավալը տարեվերջին կազմել է 10.9 մլրդ դրամ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերություններ

31.12.2008 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել են 11 ապահովագրական ընկերություններ (5 մասնաճյուղերով) և 5 ապահովագրական միջնորդներ: Տարվա ընթացքում դադարեցվել է «Առաջին ապահովագրական» ՍՊԸ-ի լիցենզիայի գործողությունը, իսկ «Ալֆա-Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ին և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ին տրամադրվել է ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիա:

Կենտրոնացվածությունը ՀՀ ապահովագրական համակարգում

Ապահովագրական համակարգը բնութագրող կարևորագույն ցուցանիշների՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը 2008 թվականին նվազել է (բացառությամբ պարտավորությունների կենտրոնացվածության):

Աղյուսակ 5. Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից

Ցուցանիշներ	31.12.2006	31.12.2007	31.12.2008
Ակտիվներ	0.08	0.12	0.10
Պարտավորություններ	0.07	0.10	0.14
Կապիտալ	0.16	0.18	0.10
Ապահովագրավճարներ	0.13	0.17	0.15

Ապահովագրական ընկերությունների միջև բևեռացվածությունը հաշվետու տարվա վերջի դրությամբ ավելի մեծ է եղել, քան 2007 թվականի վերջին: Ընդ որում՝ կենտրոնացվածության մակարդակը բարձրացել է ինչպես խոշորագույն 3 ապահովագրական ընկերությունների, այնպես էլ խոշորագույն 7 ապահովագրական ընկերությունների գծով:

Աղյուսակ 6. Ապահովագրական համակարգի կենտրոնացվածության մակարդակ (%)


Ցուցանիշներ	31.12.2006	31.12.2007	31.12.2008
Ակտիվներ			
ԿԳ 3 (խոշորագույն **երեք** ապահովագրական ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում)	36	45	38
ԿԳ 7 (խոշորագույն **յոթ** ապահովագրական ընկերությունների ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր համակարգի ակտիվներում)	64	82	75

Պարտավորություններ			
ԿԳ 3	58	60	51
ԿԳ 7	87	96	87
Կապիտալ			
ԿԳ 3	28	37	31
ԿԳ 7	57	67	68
Ապահովագրավճարներ			
ԿԳ 3	52	63	54
ԿԳ 7	80	95	93

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼ

2008 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունների կապիտալը աճել է 40%-ով (2.1 մլրդ դրամով) և կազմել 7.5 մլրդ դրամ: Աճին հիմնականում նպաստել է տարվա ընթացքում այդ շուկա 2 ապահովագրական ընկերությունների մուտքը: Կանոնադրական հիմնադրամը ավելացել է 43%-ով (2.0 մլրդ դրամով) և կազմել 6.6 մլրդ դրամ:

Գծապատկեր 18. Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը




1. Կանոնադրական կապիտալ, 2. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ, 3. Ընդհանուր կապիտալի այլ տարրեր

Ապահովագրական ընկերությունների վճարունակությունը

Ապահովագրական ընկերությունների վճարունակության նորմատիվային ցուցանիշը 31.12.2008 թ. դրությամբ կազմել է նորմատիվային ընդհանուր կապիտալի 14.7%-ը, ինչը նշանակում է, որ ապահովագրական համակարգը, մոտ յոթ անգամ ավել ապահովագրավճարներ հաշվեգրելով, այլ հավասար պայմաններում չի խախտի վճարունակության պահանջվող 100% սահմանաչափի նորմատիվը:

Վճարունակության սահմանաչափի նշված մակարդակը վկայում է համակարգի հուսալիության մասին, սակայն մյուս կողմից էլ կարելի է ենթադրել, որ ապահովագրական ընկերություններն ամբողջությամբ չեն օգտագործում իրենց ներուժը:

Գծապատկեր 19. Վճարունակության պահանջվող սահմանաչափի հարաբերությունն ընդհանուր կապիտալին՝ ըստ ապահովագրական ընկերությունների (2008 թվականին) [16]




Ապահովագրական ընկերություններից հինգի վճարունակության սահմանաչափը 20%-ից 39%-ի միջակայքում է, իսկ վեցինը՝ 1%-ից 13%-ի միջակայքում՝ վկայելով առանձին ապահովագրական ընկերությունների վճարունակության հուսալիության մասին:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ


Տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունների ակտիվները աճել են 40%-ով և 31.12.2008 թ. դրությամբ կազմել 11.7 մլրդ դրամ:

[16] *Բոլոր ապահովագրական ընկերությունների վճարունակության պահանջվող սահմանաչափի մեծությունը հավասար է եղել ապահովագրավճարների մեթոդով հաշվարկվող վճարունակության սահմանաչափի մեծությանը:*

Գծապատկեր 20. Ապահովագրական ընկերությունների ակտիվները 2008 թվականին



Գծապատկեր 21. Ապահովագրական համակարգի ընդհանուր ակտիվների կառուցվածքը



1. Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ, 2. Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ, 3. Ընթացիկ ավանդներ և այլ ներդրումներ, 4. Ոչ ընթացիկ ավանդներ և այլ ներդրումներ, 5. Արժեթղթեր, 6. Հիմնական միջոցներ, 7. Այլ ակտիվներ

Գրեթե բոլոր ապահովագրական ընկերություններում (բացառությամբ մեկի) արձանագրվել է ընդհանուր ակտիվների աճ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կառուցվածքն առանձնակի փոփոխությունների չի ենթարկվել: Տարեվերջի դրությամբ ընդհանուր ակտիվների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել ուղղակի ապահովագրության գծով ապահովադիրներից ստացվելիք գումարները (13.1%), ավանդները և այլ ներդրումները (56.5%) և պետական արժեթղթերը (9.1%):

Ակտիվների կառուցվածքում ավելացել են ավանդների և այլ ներդրումների տեսակարար կշիռները և նվազել բանկային հաշիվների տեսակարար կշիռը:


ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերությունները նախընտրում են իրենց ակտիվները տեղաբաշխել հիմնականում բարձր իրացվելի ակտիվներում, ինչի արդյունքում իրացվելիության նորմատիվային պահանջի չապահովման խնդիր չեն ունենում:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունները հաշվետու տարվա ընթացքում աճել են 39%-ով և տարեվերջին կազմել 4.2 մլրդ դրամ: Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորվել է ապահովագրական պահուստների 31% և համապահովագրողներին, վերապահովագրողներին փոխանցվելիք գումարների 45% աճով:


Գրեթե բոլոր ապահովագրական ընկերություններում (բացառությամբ մեկի) արձանագրվել է ընդհանուր պարտավորությունների աճ:


Գծապատկեր 22. Ապահովագրական ընկերությունների պարտավորությունները 2008 թվականին



Ինչպես ակտիվների, այնպես էլ պարտավորությունների կառուցվածքում զգալի փոփոխություններ չեն արձանագրվել: 2008 թվականի վերջի դրությամբ պարտավորությունների 87.5%-ը բաժին է ընկել ապահովագրական պահուստներին (50.7%) և վերապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներին (36.8%):

Գծապատկեր 23. Ապահովագրական համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը





1. Վճարվելիք գումարներ ապահովագրական հատուցումների գծով, 2. Համաապահովագրողներին, վերաապահովագրողներին փոխանցվելիք գումարներ, 3. Ապահովագրական պահուստներ, 4. Այլ պարտավորություններ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2008 թվականին ապահովագրական համակարգն ապահովել է 720 մլն դրամի զուտ շահույթ, ընդ որում՝ ութ ապահովագրական ընկերություններ աշխատել են շահույթով, երեքը՝ վնասով:


2008 թվականին ապահովագրական ընկերությունների շահութաբերությունն ըստ կապիտալի (զուտ շահույթի հարաբերությունը ընդհանուր կապիտալի միջին մեծությանը[17]) կազմել է 11.2%, իսկ շահութաբերությունն ըստ ակտիվների (զուտ շահույթի հարաբերությունը ակտիվների միջին մեծությանը[18])՝ 7.2%:

2008 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 7.8 մլրդ դրամ (2007 թվականի ընթացքում՝ 5.0 մլրդ դրամ): Վերաապահովագրողին փոխանցվող ապահովագրավճարների մեծությունը կազմել է 4.0 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 51.1%-ը (2007 թվականին՝ 40.2%):

[17] Ընդհանուր կապիտալի միջին մեծությունը հաշվարկելիս կապիտալի՝ տարեսկզբի և տարեվերջի մեծությունների հանրագումարը հարաբերվում է երկուսի:


[18] Ակտիվների միջին մեծությունը հաշվարկելիս ակտիվների տարեսկզբի և տարեվերջի մեծությունների հանրագումարը հարաբերվում է երկուսի:

Գծապատկեր 24. Շահութաբեր 8 ապահովագրական ընկերությունների շահութաբերության ցուցանիշները (2008 թ.)



Ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերի քանակը 31.12.2008 թ. դրությամբ կազմել է 49.6 հազար հատ, ինչը 8.5 հազար հատով ավելի է 31.12.2007 թվականի ցուցանիշից:

Գծապատկեր 25. 2008 թվականի ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարները և փաստացի վճարված ապահովագրական հատուցումները՝ ըստ ապահովագրության դասերի




1. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, 2. Հրդեհից ու բնական աղետներից ապահովագրություն, 3. Առողջության ապահովագրություն, 4. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, 5. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, 6. Դժբախտ պատահարներից ապահովագրություն, 7. Այլ դասերի գծով ապահովագրություն

Գործող պայմանագրերի ապահովագրական գումարների մեծությունը 31.12.2008 թվականի դրությամբ կազմել է 2.3 տրլն դրամ: Սակայն ապահովագրական ընկերություններն իրենց կողմից ստանձնած ռիսկերի մեծ մասը փոխանցում են վերաապահովագրությանը. վերաապահովագրողի բաժինը ընդհանուր ապահովագրական գումարներում կազմել է 88%: Մեծածավալ վերաապահովագրությունը հանգեցնում է ապահովագրական ընկերությունների ռիսկերի մեծ մասի փոխանցման և բազմազանեցման, հետևաբար նաև՝ ապահովագրական պատահարների դեպքում ապահովագրական ընկերությունների պարտավորությունների բեռի թեթևացման: Տեղական ապահովագրական ընկերությունները հիմնականում օգտվում են բարձր վարկանիշ ունեցող վերաապահովագրական ընկերությունների ծառայություններից՝ նվազագույնի հասցնելով վերաապահովագրական ընկերությունների կողմից իրենց պարտավորությունների չկատարման ռիսկը:

Ապահովագրական համակարգի վնասաբերության ցուցանիշի մեծությունը[19] հաշվետու տարում կազմել է 17.7% (2007 թվականին՝ 37.6%):

Ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերի քանակը 31.12.2008 թվականի դրությամբ կազմել է 49.6 հազար հատ, ինչը 8.5 հազար հատով ավելի է 31.12.2007 թվականի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի քանակից:

Գծապատկեր 26 . 31.12.2008 թվականի դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերի կառուցվածքը



1. Դժբախտ պատահարներից ապահովագրություն, 2. Առողջության ապահովագրություն, 3. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, 4. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, 5. Հրդեհից ու բնական աղետներից ապահովագրություն, 6. Գույքին հասցված այլ վնասների ապահովագրություն, 7. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն, 8. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, 9. Աջակցության ապահովագրություն, 10. Այլ դասերի գծով ապահովագրություն


Գործող պայմանագրերի ապահովագրական գումարների մեծությունը 31.12.2008 թվականի դրությամբ կազմել է 2.3 տրլն դրամ: Սակայն ապահովագրական ընկերություններն իրենց կողմից ստանձնած ռիսկերի մեծ մասը փոխանցում են վերաապահովագրությանը. վերաապահովագրողի բաժինը ընդհանուր ապահովագրական գումարներում կազմել է 88%: Մեծածավալ վերաապահովագրությունը հանգեցնում է ապահովա-

[19] *Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է որպես հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների հարաբերություն հաշվետու տարվա ընթացքում վաստակած ապահովագրավճարների մեծությանը:*

գրական ընկերությունների ռիսկերի մեծ մասի փոխանցման և բազմազանեցման, հետևաբար նաև՝ ապահովագրական պատահարների դեպքում ապահովագրական ընկերությունների պարտավորությունների բեռի թեթևացման: Տեղական ապահովագրական ընկերությունները հիմնականում օգտվում են բարձր վարկանիշ ունեցող վերաապահովագրական ընկերությունների ծառայություններից՝ նվազագույնի հասցնելով վերաապահովագրական ընկերությունների կողմից իրենց պարտավորությունների չկատարման ռիսկը:

Ապահովագրական համակարգի վնասաբերության ցուցանիշի մեծությունը[20] հաշվետու տարում կազմել է 17.7% (2007 թվականին՝ 37.6%):

Գծապատկեր 27. 31.12.2008 թվականի դրությամբ ապահովագրական գումարների կառուցվածքը



1. Դժբախտ պատահարներից ապահովագրություն, 2. Առողջության ապահովագրություն, 3. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն, 4. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, 5. Հրդեհից ու բնական աղետներից ապահովագրություն, 6. Գույքին հասցված այլ վնասների ապահովագրություն, 7. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն, 8. Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, 9. Աջակցության ապահովագրություն, 10. Այլ դասերի գծով ապահովագրություն

Ապահովագրական ընկերությունների զուտ տոկոսային եկամուտների մեծությունը կազմել է 565.9 մլն դրամ, որի 66%-ը բաժին է ընկել բանկերում ներդրված ընթացիկ ավանդների և փոխառությունների գծով տոկոսային եկամուտներին:

[20] *Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է որպես հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների հարաբերություն հաշվետու տարվա ընթացքում վաստակած ապահովագրավճարների մեծությանը:*


ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

ՀՀ արժեթղթերի շուկայում գործող ներդրումային ընկերությունների քանակը 2008 թ. վերջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նվազել է 5-ով և կազմել 10 ընկերություն, որոնք կարող են իրենց կամ հաճախորդի անունից և իրենց կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել: Ի լրումն նշվածի՝ ներդրումային ընկերություններից ինը կարող են նաև հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել, վեցը՝ արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն, հինգը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում և չորսը՝ արժեթղթերի պահառության գործունեություն: 2008 թվականի փետրվարի 29-ից արժեթղթերի շուկայի մասնակից են դարձել նաև 22 առևտրային բանկերը, որոնք այդուհետ կարող են ներդրումային ծառայություններ մատուցել՝ առանց լրացուցիչ լիցենզիա ստանալու:

Ներդրումային ընկերությունների քանակի նվազման արդյունքում 31.12.2008 թվականի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ներդրումային ընկերությունների ակտիվները նվազել են 11%-ով՝ կազմելով 7.7 մլրդ դրամ, իսկ սեփական կապիտալն աճել է 29%-ով՝ 2008թ. վերջին կազմելով 2.7 մլրդ դրամ: Տարվա ընթացքում ներդրումային ընկերությունների ընդհանուր շահույթը կազմել է 16 մլն դրամ, ընդ որում՝ շահույթ են ապահովել ընկերություններից 7-ը. 3 ընկերություն տարին ավարտել է վնասով:


2008 թվականին, նախորդ տարվա համեմատ, արձանագրվել է ՀՀ արժեթղթերի շուկայի շրջանառության աննախադեպ աճ. արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 147%-ով և կազմել 821.0 մլրդ դրամ:

Գծապատկեր 28. Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները՝ ըստ ամիսների



Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված գործառնությունների մեջ շարունակում են գերակշռել պետական արժեթղթերով իրականացվող գործառնությունները. պետական պարտատոմսերով իրականացված գործառնությունների (ներառյալ ռեպո գործառնությունները) տեսակարար կշիռը արժեթղթերի շուկայի ընդհանուր շրջանառության մեջ կազմել է 96.8% կամ 794.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 144%-ով: Ընդ որում, 2008 թվականին փոքր-ինչ աճել է (1.4 տոկոսային կետով) ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված ռեպո գործառնությունների տեսակարար կշիռը պետական պարտատոմսերով իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալի մեջ՝ կազմելով 84.2%:

Գծապատկեր 29. 2008 թվականին ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված պետական պարտատոմսերի առուվաճառքի և ռեպո գործառնությունների համադրություն



2008 թվականին զգալիորեն աճել են կորպորատիվ պարտատոմսերով գործառնությունները. կորպորատիվ պարտատոմսերով ներդրումային ծառայությունների շրջանակներում իրականացված գործառնությունների ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 3 անգամ՝ կազմելով 10.3 մլրդ դրամ կամ ընդհանուր շրջանառության 1.2%-ը:


Բաժնետոմսերով իրականացված գործառնությունների ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 6 անգամ ՝ կազմելով 16.2 մլրդ դրամ կամ արժեթղթերի շուկայի ընդհանուր շրջանառության 2.0%-ը:

ՀՀ արժեթղթերի շուկայում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 148%-ով՝ կազմելով 668.7 մլրդ դրամ կամ արժեթղթերի շուկայի շրջանառության 81.5%-ը:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված ընդհանուր գործառնություններում արտաբորսայական գործառնությունների տեսակարար կշիռը 2008 թվականին, նախորդ տարվա համեմատ, նվազել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 99.0%:

2008 թվականին կարգավորվող շուկայում[21] իրականացված արժեթղթերով գործառնությունների ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 84.9%-ով՝ կազմելով 4.1 մլրդ դրամ: Ընդ որում՝ վերոնշյալ գործառնություններում 2008թ. գերակշռել են կորպորատիվ պարտատոմսերով գործառնությունները՝ կազմելով կարգավորվող շուկայի ընդհանուր շրջանառության 53.6%-ը:

Գծապատկեր 30. Բորսայական շրջանառության կառուցվածքը



31.12.2008 թ. դրությամբ, արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից ներգրավված միջոցների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 78%-ով և կազմել է 1.6 մլրդ դրամ:

Տարեվերջին ֆոնդային բորսայում ցուցակված են եղել 16 հաշվետու թողարկողների արժեթղթեր: Հաշվետու թողարկող ընկերություններից 4-ը բանկ են, 1-ը՝ ներդրումային ընկերություն: Հաշվետու թողարկողներից 9-ը թողարկել են բաժնետոմսեր, իսկ 8-ը՝ պարտատոմսեր:

31.12.2008թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 1202 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 128.329:


2008 թվականին ավելացել են կորպորատիվ պարտքային արժեթղթերի թողարկումները. թողարկվել են 13 կորպորատիվ պարտատոմսեր՝ 11.4 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, ինչը 3.6 անգամ գերազանցել է նախորդ տարվա թողարկումների ընդհանուր ծավալը:

Գրանցված ազդագրերից 10-ը բաժին է ընկել պարտքային արժեթղթերին՝ 7.7 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, 2-ը՝ բաժնային արժեթղթերին՝ 3.6 մլրդ դրամ ծավալով:

[21] *31.12.2008թ. դրությամբ ՀՀ-ում գրանցված և լիցենզավորված միակ բորսան «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ԲԲԸ-ն է:*

2008 թվականին թողարկված կորպորատիվ պարտատոմսերի 36%-ը բաժին է ընկել ֆինանսական կազմակերպություններին, 21%-ը՝ շինարարության ոլորտին և 19%-ը՝ առևտրի ոլորտի կազմակերպություններին:

Գծապատկեր 31. 2006-2008 թթ. շրջանառությունում գտնվող կորպորատիվ պարտատոմսերի ծավալը



2008 թվականի վերջի դրությամբ գործել են 16 հաշվետու թողարկողներ, այդ թվում՝ 9-ը՝ բաժնային արժեթղթերի, իսկ 8-ը՝ պարտքային արժեթղթերի: «Արարատ բանկ» ԲԲԸ-ն ինչպես բաժնային, այնպես էլ պարտքային արժեթղթերի հաշվետու թողարկող է:

ԳՐԱՎԱՏՆԵՐ

31.12.2008 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 68 գրավատներ: Տարվա ընթացքում գրավատան գործունեության լիցենզիա են ստացել 10 ընկերություններ ու անհատ ձեռնարկատերեր, իսկ 3 գրավատների լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել: Հաշվետու տարում արձանագրվել է գրավատների ընդհանուր ակտիվների մեծության 50% և գրավատների կողմից տրամադրված վարկերի մեծության 62% աճ: 31.12.2008 թ. դրությամբ գրավատների ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 4.8 մլրդ դրամ, պարտավորությունների մեծությունը՝ 3.2 մլրդ դրամ, գրավատների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր մեծությունը՝ 3.9 մլրդ դրամ:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐ, ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐՆԵՐ

31.12.2008 թ. դրությամբ ՀՀ տարածքում արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա են ունեցել 246 փոխանակման կետեր (առանց մասնաճյուղերի): Հաշվետու տարվա ընթացքում արտարժույթի փոխանակման 25 կետերի լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել: Արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա է տրվել արտարժույթի փոխանակման 23 կետերի: Տարվա ընթացքում ԱՄՆ դոլարի առքի և վաճառքի ծավալները կազմել են համապատասխանաբար 363.7 մլն ԱՄՆ դոլար և 358.1 մլն ԱՄՆ դոլար (2007 թվականին՝ 449.7 մլն ԱՄՆ դոլար և 443.6 մլն ԱՄՆ դոլար): Եվրոյի առքի և վաճառքի ծավալները կազմել են համապատասխանաբար 38.7 մլն եվրո և 37.9 մլն եվրո (2007 թվականին՝ 35.4 մլն եվրո և 34.8 մլն եվրո):

2008 թվականի ընթացքում արտարժութային դիլերների՝ ԱՄՆ դոլարի ընդհանուր առքի ծավալը կազմել է 38.2 մլն ԱՄՆ դոլար, վաճառքի ծավալը՝ 42.4 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի առքի ծավալը 30.3 մլն ԱՄՆ դոլար էր, վաճառքինը՝ 30.5 մլն ԱՄՆ դոլար): Տարվա ընթացքում ուժը կորցրած են ճանաչվել «Պրոֆֆինանս» ՓԲԸ-ի, «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի և «Տոնտոն» ՍՊԸ-ի արժութային դիլերի գործունեության լիցենզիաները: 31.12.2008 թ. դրությամբ ՀՀ տարածքում արտարժութային դիլերի գործունեության լիցենզիա են ունեցել 2 իրավաբանական անձինք:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.12.2008 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 12 վճարահաշվարկային կազմակերպություններ: Այդ թվում՝ 5 ընկերություն ունեն միայն դրամական փոխանցում իրականացնելու գործունեության լիցենզիա, 6 ընկերություն՝ դրամական փոխանցում իրականացնելու գործունեության լիցենզիա և վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա և մեկ ընկերություն՝ միայն վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնելու լիցենզիա: Հաշվետու տարում լիցենզավորվել է 4 վճարահաշվարկային կազմակերպություն:

Միայն դրամական փոխանցում իրականացնող 5 կազմակերպությունները (որից մեկը՝ «ԳլոբՓեյմենթս» ՍՊԸ-ն, լիցենզավորվել է հաշվետու տարվա ընթացքում) միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով հիմնականում ապահովում են արտասահմանից Հայաստանի Հանրապետություն ուղղված վճարումների իրականացումը: 2008թ. ընթացքում այս կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 6.8 մլրդ դրամի վճարում (նախորդ տարվա համեմատ նվազել է 24.8%-ով): Այդ թվում՝ միջազգային դրամական փոխանցումների իրականացման համակարգերին անդամակցելու միջոցով ստացումները կազմել են 3.5 մլրդ դրամ, իսկ արտասահման փոխանցումների ծավալը կազմել է 0.4 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմել է՝ արտասահման փոխանցումները՝ 0.1%-ը, իսկ արտասահմանից ստացումները՝ 0.8%:

Այս կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 188 հազար դրամ: Ընդ որում՝ դրամական փոխանցումների իրականացման համակարգերով այն կազմել է 100 հազար դրամ (նախորդ տարվա համեմատ պահպանվել է գրեթե նույն մակարդակը):

Վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և միաժամանակ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների միջոցով մատուցում են հանրային նշանակություն ունեցող ծառայությունների դիմաց կանխիկ միջոցներով վճարումների ընդունման ծառայություններ (այս կազմակերպություններից 3-ը՝ «ՕՍՄՊ» ՍՊԸ-ն, «ԷՄ-ՋԻ-ՓԵՅ ՍԻՍՏԵՄ» ՓԲԸ-ն և «ԿՎԱԴՐԱԿՈՄ» ՍՊԸ-ն, լիցենզավորվել են հաշվետու տարվա ընթացքում):

Վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների միջոցով հավաքագրում են բնակչությանը մատուցած հանրային նշանակություն ունեցող ծառայությունների (հեռախոս, գազ, ջուր, էլեկտրաէներգիա), ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (ինտերնետային ծառայություններ, ինտերակտիվ հեռուստատեսություն, վարկերի մարում և այլն) դիմաց վճարները:

2008թ. ընթացքում վճարահաշվարկային կազմակերպությունները տեղադրել են 357 ինքնասպասարկման տերմինալներ, որոնց ընդհանուր քանակը կազմել է 553: Հաշվետու ժամանակահատվածում այս տերմինալներով իրականացվել է 2779 մլն դրամի (879403 հատ գործառնություն) միջոցների հավաքագրում (նախորդ տարվա համեմատ ավելացել է 8.9 անգամ):

Վճարահաշվարկային կազմակերպությունները սկսել են մատուցել պրոցեսինգային ծառայություններ 3 առևտրային բանկերի: Մասնավորապես՝ նշված առևտրային բանկերը, կնքելով համապատասխան պայմանագրեր վճարահաշվարկային կազմակերպությունների հետ, իրականացրել են կոմունալ ծառայությունների դիմաց միջոցների հավաքագրում՝ 34 մլն դրամ ծավալով 6667 հատ գործառնություն, որոնց հետ կապված պրոցեսինգը իրականացվել է վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից:

«ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը, որպես «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի օպերատոր, ապահովում է «ԱրՔա» քարտերով, ինչպես նաև «Visa» և «Master Card» միջազգային քարտային համակարգերի վճարային քարտերով կատարված գործառնությունների սպասարկումը: «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը հաշվետու տարվա ընթացքում քարտերի սպասարկման սարքավորումների միջոցով ապահովել է 259 մլրդ դրամ ծավալի քարտային գործառնությունների իրականացում (որը ավելացել է 53.4%-ով), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացվել է 14 մլրդ դրամ ծավալի գործառնություն (պահպանվել է նախորդ տարվա մակարդակը), իսկ ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով ՀՀ այլ բանկերի պրոցեսինգային կենտրոնների միջոցով (այդ թվում նաև արտասահմանում) իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 27 մլրդ դրամ, որն ավելացել է 38%-ով (7 մլրդ դրամով): Ինտերնետ միջավայրում կատարված գործառնությունների ծավալն ավելացել է 2.7 անգամ և կազմել 2.3 մլրդ դրամ:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման խնդիրների շրջանակներում 2008 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է վճարային համակարգերի հսկման, արժեթղթերի շուկայի, ինչպես նաև անկանխիկ վճարումների զարգացման և իրավական դաշտի կարգավորման աշխատանքները:

Անկանխիկ վճարումների զարգացում

ՀՀ ֆինանսական շուկայում նորագույն տեխնոլոգիաների ներդրումը նոր վճարային ծառայություններ մատուցելու և նոր վճարային գործիքներ կիրառելու անհրաժեշտություն է առաջացնում: Նշված բարեփոխումները մի կողմից պայմանավորված են ՀՀ բանկերի կողմից հաճախորդներին մատուցվող ծառայությունների ընդլայնմամբ և բարենպաստ մրցակցային պայմաններով, մյուս կողմից՝ կապի և հաղորդակցության ծառայություն մատուցող կազմակերպությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման միտումներով: Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել են մի շարք փաստաթղթեր, մասնավորապես՝ «Էլեկտրոնային փողերի» թողարկման և սպասարկման, ինչպես նաև «մոբիլ-բանքինգ» և «ինտերնետ-բանքինգ» ծառայությունների մատուցման հիմնական սկզբունքները, որոնք մի կողմից ուղղված են հնարավոր ռիսկերի բացահայտմանը և կառավարմանը, մյուս կողմից՝ հնարավորություն կտան ձևավորելու բարենպաստ պայմաններ՝ տվյալ ծառայությունների կիրառման համար:

ՀՀ տարածքում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում համագործակցելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, կատարվել են կենսաթոշակների վճարումները անկանխիկ եղանակով ապահովելու աշխատանքներ:

Հաշվի առնելով, որ անկանխիկ վճարումների զարգացումը անմիջականորեն կապված է ՀՀ տարածքում քարտային բնագավառի զարգացման և մատուցվող ծառայությունների ընդլայնման միտումների հետ, ինչպես նաև դիտարկելով քարտային գործառնությունների կտրուկ աճ (տե՛ս «Վճարային քարտեր» բաժինը), 2008թ. ընթացքում «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի ներքո իրականացվել են ավտոմատ գանձման սարքավորումների շահագործման տեխնիկածրագրային ապահովության վերազինման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է նաև «Վճարահաշվարկային համակարգի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը, որով հստակեցվում է վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության իրավական կարգավորման դաշտը: Սահմանվել են դրույթներ վճարահաշվարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի, վճարումների առաքում իրականացնելու, վճարահաշվարկային միություններ ստեղծելու վերաբերյալ, հստակեցվել են վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման և վճարային համակարգերի անդամակցության ընթացակարգերը:

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերի՝ կենտրոնական բանկի կողմից ՀՀ տարածքում գործող մի շարք առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների տրամադրվել են տարբեր միջազգային վճարային համակարգերին անդամակցելու թույլտվություններ, այդ թվում՝ առևտրային բանկերին՝ 12, իսկ վճարահաշվարկային կազմակերպություններին՝ 15 թույլտվություն:

Արժեթղթերով հաշվարկների իրականացման կատարելագործում և զարգացում

Արժեթղթերի շուկայի զարգացման նպատակով Կենտրոնական դեպոզիտարիայում իրականացվող գործառույթների ավտոմատացման հետ կապված՝ լրամշակվել են կորպորատիվ արժեթղթերով բորսայական գործառնությունների արարողակարգերը, այդ թվում՝ մշակվել է «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ԲԲԸ-ում կորպորատիվ արժեթղթերով կնքվող գործարքների նախնական դեպոնացման և վերջնահաշվարկի կատարման մասին» պայմանագիրը, որով կարգավորվել են դրամական միջոցների նախնական դեպոնացման, արժեթղթերով իրականացված գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի ապահովման հետ կապված ընթացակարգերը: Մշակվել է նաև «Արժեթղթերի հաշվարկային համակարգի մասին» Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կանոնակարգը:

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ԲԲԸ միջև համաձայնեցված ծրագրի՝ հաշվետու ժամանակահատվածում մշակվել են «Առանց նախնական դեպոնացման բորսայական գործարքների հաշվարկների իրականացման» ինչպես նաև «Առանց նախնական դեպոնացման բորսայական գործարքների ապահովման երաշխիքային հիմնադրամի» հայեցակարգերի նախագծերը, որոնք ներկայացվել են շահագրգիռ կողմերի քննարկմանը: Նշված աշխատանքների արդյունքում նախատեսվում է ներդնել բորսայում գործառնությունների իրականացման և վերջնահաշվարկի ապահովման հետ կապված նոր ընթացակարգ, որի համաձայն՝ մասնակիցները հնարավորություն կունենան բորսայական գործառնություններին մասնակցելու առանց միջոցների նախնական դեպոնացման:

ՀՀ վճարահաշվարկային բնագավառի հիմնական ցուցանիշները

2008թ. ընթացքում վճարահաշվարկային բնագավառում բնականոն աճը շարունակվել է, ինչը փաստում են վճարահաշվարկային բնագավառը բնութագրող ցուցանիշները:

Անկանխիկ վճարումների զարգացման տեսանկյունից կարևորվում է նաև բանկային համակարգում բնակչության ընդգրկվածությունը: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը ավելացել է 8.7%-ով և կազմել 1015 հազ. հաճախորդ, այդ թվում՝ ֆիզիկական անձանց քանակը կազմել է 964 հազ.: Բանկային համակարգում հաճախորդների հաշիվների քանակը ավելացել է՝ կազմելով 1385 հազ. բանկային հաշիվ (այդ թվում՝ 1068 հազ.՝ ընթացիկ հաշիվներ, 61 հազ.՝ ժամկետային հաշիվներ, 256 հազ.՝ վարկային հաշիվներ):


2008թ. ընթացքում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 326.4 մլրդ դրամի 6586134 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 25.8 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 2.2 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 912 մլն ՀՀ դրամ, քարտից-քարտ փոխանցումներ՝ 1.3 մլրդ ՀՀ դրամ): Տարեվերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 454357, որը 2007թ. վերջի համեմատությամբ ավելացել է 38.6% -ով (126505 քարտով): Ընդ որում՝ քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը (այդ թվում նաև ինտերնետ գործառնությունները) կազմել է քարտային գործառնությունների մոտ 8%-ը: Ընդհանուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը ավելացել է 52%-ով:

Ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները, որոնք իրականացվել են առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով, 2007թ. համեմատ ավելացել են 17%-ով և կազմել 701 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը չի փոփոխվել և կազմել է 343 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել 15135 մլրդ դրամ (քանակը՝ 5043571): 1 օրվա միջին անկանխիկ վճարումները ՀՆԱ-ում (3450 մլրդ դրամ) կազմել են 1.5%, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.32-տոկոսային կետով: Ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 9086 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 2200265: 2008թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը 2007թ. համեմատ աճել է 30% -ով (2120 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 58%-ով (806879-ով):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կազմել է մոտ 35 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 8595: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը 2007թ. համեմատ ավելացել է 8.2 մլրդ դրամով (քանակը՝ 3152-ով): Բորսայական գործառնությունների իրականացման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է 46 մլրդ դրամ (ավելացել է 6.5 անգամ):

Գծապատկեր 32. ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



2008թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) շարունակել են մեծ տեսա-

կարար կշիռ կազմել Գանձապետարանի նախածեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 38.88%-ը, քանակի՝ 50.73%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախածեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը 2007թ. համեմատ ավելացել է 8.4%-ը (275 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 73.78%-ով (473858-ով):

ՀՀ ԿԲ ՎճԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ


Էլեկտրոնային վճարումների համակարգ

2008թ. վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը կազմել է 262, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 22 առևտրային բանկեր՝ 189 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը, Միջպետական բանկը (ք.Մոսկվա), «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» բորսան և մեկ ոչ բանկ դիլեր:


ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 53.5%-ը և քանակի 95.7%-ը: 2007թ. համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալն ավելացել է 24% (944 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 57%-ով (763205-ով): Բացի այդ, բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումները կազմել են 11881 մլրդ դրամ: Առևտրային բանկերի կողմից էլեկտրոնային վճարումների համակարգով (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կատարված վճարումները կազմել են վերջիններիս փոխանցումների ծավալի մոտ 67%-ը (ավելացել են 826 մլրդ դրամով), իսկ քանակի՝ մոտ 99%-ը:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2007թ. համեմատ ավելացել է 2981-ով՝ կազմելով 8222, իսկ ծավալը՝ 3686 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 18984 մլն ՀՀ դրամ: Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված միջին օրական փոխանցումները ավելացել են 39 մլրդ դրամով և կազմել 46 մլրդ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների, 2007թ. համեմատ նվազել է մոտ 0.6 մլն դրամով և կազմել է 2.3 մլն դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգով առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը կազմել է 862 մլն դրամ, որն ավելացել է 636 մլն դրամով:

Գծապատկեր 33. Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները



Գծապատկեր 34. Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված փոխանցումները միջին օրական վճարումներում



Համախառն թղթային վճարումների համակարգ

Առևտրային բանկերի կողմից 2008թ. ընթացքում թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 38.7%-ը և քանակի 4%-ը (2007թ. համեմատ ծավալը ավելացել է 1.2 անգամ, քանակը՝ 2 անգամ):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 350 փոխանցում՝ 13.7 մլրդ ՀՀ դրամ ծավալով (2007թ. համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը ավելացել է 5 մլրդ ՀՀ դրամով), իսկ մեկ թղթային փոխանցման միջին ծավալը 2007թ. համեմատ նվազել է մոտ 10 մլն դրամով և կազմել է 39 մլն դրամ: Նշված փոխանցումները հիմնականում պայմանավորված են ավանդային և ռեպո գործառնություններով, ինչպես նաև գանձապետական փոխանցումներով: 2008թ. ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 45.9 մլրդ դրամ ծավալով 79 փոխանցում (ծավալը աճը՝ 28.9%):

Աղյուսակ 7. ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ ԿԲ վճարային համակարգերով

Ժամանակահատված	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով *		Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներ	
	էլեկտրոնային *		Թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2007										
I եռ.	3916236	1341687	2188204	44557	861365	7142	6965805	1393386	1821341	8075
տեսակարար կշիռը վճարումներում (%)	56.22	96.29	31.41	3.20	12.37	0.51	100	100		
2008										
I եռ.	1024878	389728	745062	12179	240876	1764	2010816	403671	2422627	3026
տեսակարար կշիռը վճարումներում (%)	50.97	96.54	37.05	3.02	11.98	0.44	100	100		
II եռ.	1022887	488017	691740	16625	163687	1495	1878314	506137	2886558	3236
տեսակարար կշիռը վճարումներում (%)	54.46	96.42	36.83	3.29	8.71	0.29	100	100		
III եռ.	1275574	564371	798290	22434	172482	1376	2246326	588181	3172312	3683
տեսակարար կշիռը վճարումներում (%)	56.78	95.95	35.54	3.8	7.68	0.23	100	100		
IV եռ.	1536657	662776	1281886	38309	131764	1191	2950307	702276	3399058	3837
տեսակարար կշիռը վճարումներում (%)	52.08	94.38	43.45	5.45	4.47	0.17	100	100		
Ընդամենը	4859976	2104892	3516978	89547	708809	5826	9085763	2200265	11880556	13782
տեսակարար կշիռը վճարումներում (%)	23.18	95.07	16.77	4.04	3.38	0.26	100	100		

** Առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների*

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

2008թ. վերջի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 5 գործակալ և 17 դիլեր բանկեր, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա» ֆոնդային բորսան, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների նախարարությունը (թողարկողի կարգավիճակով՝ պետական պարտատոմսերի հետ կապված), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով և թողարկողի կարգավիճակով՝ Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի հետ կապված):

Համակարգի կողմից պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 2222 հանձնարարական՝ 109.6 մլրդ դրամ ծավալով, ինչը 2007թ. համեմատ ավելացել է 7.6 մլրդ դրամով (ընդ որում՝ արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված վճարումներն ավելացել է 11.9 մլրդ դրամով, իսկ մարման հետ կապված վճարումները նվազել են 4.2 մլրդ դրամով): 2008թ. ընթացքում առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 64.5 մլրդ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 45.1 մլրդ դրամի փոխանցում: Այդ թվում՝ «Գանձապետական պահառու» համակարգի միջոցով պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 1.8 մլրդ դրամի վճարում, որտեղ՝ 1.1 մլրդ դրամը կազմել են արժեթղթերի տեղաբաշխման և 0.7 մլրդ դրամը՝ արժեթղթերի մարման դիմաց վճարումները:

ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից ձևավորվել է 626 հանձնարարական՝ 140.7 մլրդ դրամ ծավալով: Նշված արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ժամանակ առևտրային բանկերի կողմից ձեռք բերված՝ Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի դիմաց կատարվել է 52.6 մլրդ դրամի փոխանցում, որը նվազել է 61%-ով (82.2 մլրդ դրամով), իսկ Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման դիմաց փոխանցումները նվազել են 31%-ով (38.7 մլրդ դրամով), և կատարվել է 88.1 մլրդ դրամի փոխանցում:

Կենտրոնացումը վճարային համակարգերում

2008թ. տարեվերջի դրությամբ զգալիորեն նվազել է կենտրոնացման մակարդակը ՀՀ կենտրոնական բանկի համախառն թղթային համակարգով վճարումների ծավալում (մոտ 15%-ով), որը պայմանավորված է առևտրային բանկերի կողմից էլեկտրոնային եղանակով վճարումների իրականացմամբ: Նախորդ ժամանակահատվածի համեմատ համախառն էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումների քանակում կենտրոնացման մակարդակը ավելացել է 4%-ով: Նշված աճը պայմանավորված է առևտրային բանկերի կողմից հիմնականում հատային հաղորդագրությունների կիրառմամբ:

Վճարային քարտերի սպասարկման հետ կապված կենտրոնացման մակարդակը չնայած նվազել է (քանակը՝ 1-ով, և ծավալը՝ 2%-ով), այնուամենայնիվ այն բավական բարձր է (քանակը՝ 67%-ով, ծավալը՝ 69%-ով), որը բաժին է ընկնում 5 առևտրային բանկերի: Միաժամանակ, ՀՀ տարածքում գործող 7 բանկեր

ապահովել են վճարային քարտերի սպասարկման 25%-ը: Այսպիսով, 2008 թ. ընթացքում վճարային քարտերի սպասարկման գործընթացում որոշակի ակտիվություն են ցուցաբերել նշված երկու խումբ առևտրային բանկերը, որոնք տեղադրել են վճարային քարտերի սպասարկման սարքավորումներ, ընդլայնել առևտրի սպասարկման իրենց կետերի ցանկը:

Աղյուսակ 8. Կենտրոնացման մակարդակը վճարային համակարգերում (%)*

Անվանումը		2006		2007		2008	
		ծավալ	քանակ	ծավալ	քանակ	ծավալ	քանակ
Համախառն	էլեկտրոնային	42	55	31	54	31	59
	Թղթային	43	2	32	3	17	2
Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		50	48	49	42	49	42
Քարտային համակարգ	սպասարկում	-	-	71	68	69	67

** Ըստ ծավալի և ըստ քանակի առաջին 5 առևտրային բանկերի ցուցանիշներ:*

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

2008 թ. տարեվերջի դրությամբ հաճախորդներին վճարային քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 19 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու ժամանակահատվածում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 200 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2008թ. վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 538: Այդ թվում՝ «ԱրՔա» վճարային քարտերի սպասարկումը իրականացվում է 468 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրվել են նաև 252 POS-տերմինալներ, որոնց ընդհանուր քանակը կազմել է 2280 POS-տերմինալ, այդ թվում՝ 410-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել է 19:

Աղյուսակ 9. Թողարկված քարտերի սպասարկման ցուցանիշներ

Ցուցանիշ	Միջազգային չափանիշներ	2006	2007	2008
Թողարկված (շրջանառվող) քարտեր / ԱԳՄ	2600	1162	970	942
Թողարկված (շրջանառվող) քարտեր / ՊՈՍ	160	158	162	154

Աղյուսակ 10. ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող/սպասարկվող քարտերի տեսակները

Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնեսբանկ	+	+			
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+	+			
Ամերիա բանկ	+	+	+		
ՎՏԲ-Հայաստան բանկ	+		+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			
ԲՏԱ բանկ	+	+			
Զարգացման հայկական բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+		+		+
Ինեկոբանկ	+	+			
Մելլաթ բանկ	+				
Բիբլոս բանկ Արմենիա	+	+			
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	+		+		
Արցախբանկ	+	+			
Կասկադ բանկ	+	+			
Առէկսիմբանկ		+	+	+	
Յունիբանկ	+		+		
Արդշինինվեստբանկ	+	+	+		
ՊրոԿրեդիտբանկ			+		

2008 թ. վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը 2007 թ. համեմատ ավելացել է 40.5%-ով (57708 քարտով) և կազմել 200190: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 37.1%-ով (68797 քարտով), այդ թվում՝ «Visa»-ն՝ 19.1%-ով (26614 քարտով) և կազմել 165894, իսկ «Master Card»-ը՝ 102%-ով (24104 քարտով) և կազմել 47769: Մնացած մասը (18079 քարտ) բաժին է ընկնում միջազգային այլ քարտերին:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից տրամադրված (շրջանառության մեջ գտնվող) քարտերի կառուցվածքում «ԱրՔա» քարտերի տեսակարար կշիռը կազմել է 44.1%, «Visa» և «Master Card» միջազգային քարտային համակարգերի քարտերինը՝ համապատասխանաբար 36.5% և 10.5%, իսկ մնացած 8.9%-ը կազմել են միջազգային այլ քարտային համակարգերի քարտերը, որոնցում ընդգրկված են նաև «HSBC debit» քարտերը:

Քարտերով իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը 2007թ. համեմատ ավելացել է 52.8%-ով (112.7 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 48.7%-ով (2157584):

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 2915892 գործառնություն՝ 117.5 մլրդ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2007թ. համեմատ ավելացել է մոտ 57%-ով (42.6 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 40%-ով (834838-ով): «ԱրՔա» քարտերով իրականացված գործառնությունները կազմել են քարտերով ընդհանուր գործառնությունների ծավալի 36%-ը և քանակի 44%-ը:


Քարտերով կատարվող գործառնությունների ծավալում գերակշռող մասնաբաժին ունեն «Visa» միջազգային քարտերով գործառնությունները՝ 38.9%:

«Visa» քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 127 մլրդ դրամ (2090858 գործառնություն), իսկ «Master Card»-ով իրականացվել է 39 մլրդ դրամ ծավալով 653957 գործառնություն: «Visa» համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 40.9%-ով (36.8 մլրդ դրամով), իսկ «Master Card»-ով կատարված գործառնությունների ծավալը ավելացել է 96.8%-ով (19 մլրդ դրամով):

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 925427 գործառնություն՝ 42.5 մլրդ դրամ ծավալով, որը 2007թ. համեմատ ավելացել է 48.7%-ով (13.9 մլրդ դրամով):

2008 թ. ընթացքում քարտերով իրականացված միջին օրական գործառնությունների ծավալը ավելացել է 52.7%-ով և կազմել 907 մլն դրամ, իսկ միջին օրական գործառնությունների քանակը կազմել է 18295: Նշված ծավալում 39%-ը բաժին է ընկել «Visa» միջազգային քարտերին, իսկ 36%-ը՝ «ԱրՔա» քարտերին: 2007 թ. համեմատ միջին օրական գործառնությունների քանակը ավելացել է 48.7%-ով (5993-ով):

Գծապատկեր 35. ՀՀ բանկերի կողմից պլաստիկ քարտերի տրամադրման դինամիկան




Հաշվետու տարվա ընթացքում մեկ «ԱրՔա» քարտով իրականացված միջին ամսական գործառնությունների ծավալը 2007թ. համեմատ ավելացել է մոտ 3 հազ. դրամով և կազմել 53 հազ. դրամ (քանակը կազմել է 1.3)

Աղյուսակ 11. Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները (2008 թ.)

Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	քանակը	այդ թվում՝ «ԱրՔա» քարտերով	
			ծավալը (մլն դրամ)	քանակը
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	245911	5464992	90985	2411888
այդ թվում՝ անկանխիկ	3206	85215	228	35304
POS–տերմինալների/իմպրինտերների միջոցով	78676	1038957	26094	473100
այդ թվում՝ անկանխիկ	20903	553578	7509	192210
Իմպրինտերների միջոցով	1784	82185	471	30904
այդ թվում՝ անկանխիկ	326371	6586134	117550	2915892
Ընդամենը	25893	720978	8208	258418
այդ թվում՝ անկանխիկ	245911	5464992	90985	2411888

Գծապատկեր 36. ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2005 – 2008 թթ., ինչպես նաև 2008 թ. եռամսյակների ընթացքում



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, իրականացվում են՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով (տես՝ «Վճարահաշվարկային կազմակերպություններ» բաժինը):

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը հաճախորդների դրամական փոխանցումները արագ իրականացնելու նպատակով անդամակցում են՝ ընդհանուր առմամբ 17 միջազգային համակարգերի (UNISTREAM, ANELIK, CONTACT, MIGOM, BISTRAYA POCHTA և այլ համակարգերի):

Աղյուսակ 12. Դրամական փոխանցումների իրականացման համակարգերը

Համակարգեր	Մասնակից բանկերի քանակը	Մասնակից կազմակերպությունների քանակը	Մասնաբաժինը ստացումների ծավալում, %
UNISTREAM	3		51.38
ANELIK	8	3	9.51
CONTACT	4	4	8.93
MIGOM	7	4	5.86
BISTRAYA POCHTA	6	2	5.67
MONEY GRAM	10	2	2.08
LIDER	5		2.33
INTEREXPRESS	2	2	1.71
ZOLOTAYA CORONA	2		0.84
BLIZKO	2	3	1.23
PRIVAT MONEY TRANSFER	3		0.81
BTF-Souz	1		1.36
FASTER	1	1	0.38
ALLUR	3		0.13
AVERS	2		0.01
XPRESS MONEY	1		-
JIVIE DENGI	1		-
WESTERN UNION*	-	-	7.33
MONEY TUN	-	1	0.03
Travelex	-	1	0.07
STEFI	-	1	0.33

** 2008 թվականի հոկտեմբերից դադարեցվել է անդամակցությունը տվյալ համակարգում*

2008 թ. ընթացքում այս համակարգերին մասնակից բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 439.4 մլրդ դրամ (քանակը՝ 1636683), որը 11.3 անգամ գերազանցել է

արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Արդյունքում դրամական միջոցների զուտ ներհոսքը առևտրային բանկերի միջոցով կազմել է 400.5 մլրդ դրամ, որը 2007թ. համեմատ ավելացել է 15%-ով (54 մլրդ դրամով): Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը 2007թ. համեմատ ավելացել է 27%-ով (53.6 մլրդ դրամով): Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 268 հազ. դրամ. 2007թ. համեմատ ավելացել է 16 հազ. դրամով:

Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով (SWIFT-ի, տելեքսի, ֆաքսի միջոցով) Հայաստանի Հանրապետություն կատարված ընդհանուր փոխանցումների ծավալը 2008թ. ընթացքում կազմել է՝ 2295 մլրդ դրամ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 467 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 232999 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 9.8 մլն ՀՀ դրամ. նախորդ տարվա համեմատ ավելացել է 3.5 մլն ՀՀ դրամով:

Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները ավելացել են 52 մլրդ դրամով և կազմել են մոտ 255 մլրդ դրամ. մեկ վճարման միջինը ավելացել է 222 հազ. դրամով և կազմել 2.38 մլն դրամ: Միաժամանակ, առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումները արտասահման ավելացել են 0.4 մլրդ դրամով և կազմել 303 մլրդ դրամ: Արդյունքում՝ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներում դիտարկվում է դրամական միջոցների զուտ արտահոսք՝ 49 մլրդ դրամ ծավալով, որը 2007թ. համեմատ նվազել է մոտ 2 անգամ:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Վերջին 2 տարիներին աշխարհի գրեթե բոլոր երկրները իրականացնում են ընթացիկ ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման, վերջինիս ազդեցությունների մեղմման լայնածավալ աշխատանքներ: Այս դժվարին պայմաններում ֆինանսական աշխարհում վերահսկողության և կարգավորման շատ սկզբունքներ առավելապես ծառայեցվում են ամբողջական ֆինանսական համակարգի կենսունակության պահպանմանը: Վերահսկող մարմիններն առաջնայնություն են տալիս կարևորագույն, համակարգային նշանակություն ունեցող հաստատությունները ֆինանսապես առողջացնելու խնդրին՝ ամբողջական ֆինանսական համակարգի փլուզումը կանխարգելելու համար: Հայաստանի ֆինանսական համակարգում ընթացիկ ճգնաժամի ազդեցությունը դրսևորվել է միայն 2008 թվականի վերջին եռամսյակում:

ՀՀ ֆինանսական համակարգի կայուն զարգացման, իրացվելիության ապահովման, վճարահաշվարկային համակարգի կատարելագործման, ֆինանսական միջնորդության ընդլայնման և ֆինանսական համակարգի կայունության ապահովման նպատակով 2009 թվականին Կենտրոնական բանկը կշարունակի բանկային, արժեթղթերի, ապահովագրության շուկաների համահունչ զարգացման նախադրյալների ապահովմանն ուղղված բարեփոխումները:

ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման հեռանկարները

2009 թվականին Կենտրոնական բանկը շարունակելու է հակաճգնաժամային միջոցառումների մշակման, ֆինանսական համակարգի վրա ճգնաժամի բացասական ազդեցությունների մեղմման ծավալուն աշխատանքների իրականացումը:

2009 թվականին նախատեսվում է առավել հաճախակի իրականացնել ոչ միայն առանձին ֆինանսական հաստատությունների ռիսկերի ուսումնասիրություն, այլ նաև երկրի ընդհանուր ֆինանսական համակարգի զարգացումների, ռիսկերի և կայունության խոչընդոտների բացահայտման մանրամասն մոնիտորինգ, և այս գործընթացը լինելու է շարունակական: Ֆինանսական կայունության ապահովման համատեքստում կարևորվում է ինչպես ֆինանսական հատվածում, այնպես էլ մակրոտնտեսության բոլոր հատվածներում (իրական, հարկաբյուջետային, արտաքին) առաջացող ռիսկերի մանրամասն ուսումնասիրությունը[22]: Կենտրոնական բանկի կողմից մշակվել են սթրես-սցենարներ, տարաբնույթ ճգնաժամային իրավիճակներում ֆինանսական հաստատությունների ռիսկերը նույնականացնելու և դրանց գծով վնասները գնահատելու համար: Սցենարները պարբերաբար թարմացվելու են և արդիականացվելու: Մշակվել են նաև ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու ծրագրեր, որտեղ հստակ սահմանված են հակաճգնաժամային գործիքների կիրառման նախապայմանները, գործողությունների հերթականությունն ու պատասխանատու օղակների խնդիրները: Ճգնաժամային իրավիճակներում կողմնորոշվելու, հմտությունների ձեռք բերելու նպատակներով 2009 թվականին նախատեսվում է անցկացնել սիմուլյացիոն խաղեր, որոնք կօգնեն որոշումներ կայացնելու

[22] *Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս «Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2008» պարբերականում:*

իրավասություններ ունեցող անձանց գործնականում դրսևորել ճգնաժամերի կառավարման հմտություններ, պատրաստ լինել շոկային իրավիճակներում արագ որոշումների կայացմանն ու արտակարգ միջոցառումների ձեռնարկմանը:

Առևտրային բանկերի ֆինանսական կայունության պահպանման նպատակով նախատեսվում է օրենսդրական փոփոխությունների միջոցով ընդլայնել Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական միջոցների ներարկման իրավասությունները:

2009 թվականին ներդրվելու է բանկերի ռիսկայնության գնահատման նոր համակարգ, որը հնարավորության կտա ձևավորելու բանկի ռիսկայնության ամփոփ գնահատական՝ հիմնվելով առանձին բիզնես գործընթացների ռիսկերի տարանջատման, գնահատման և կառավարման մակարդակի վերլուծության արդյունքների վրա: Համակարգի ներդրումը կհանգեցնի բանկերի գործունեությունը բնութագրող ցուցանիշների, ինչպես նաև բանկերի ռիսկայնությունը, ռիսկերի կառավարման համակարգը գնահատող ցուցանիշների արդյունավետության բարձրացմանը: Նշված համակարգը հնարավորություն կտա հիմնական ուշադրությունը սևեռելու բանկերի համար էական և/կամ նշանակալի համարվող բիզնես գործընթացների վրա, որոնք առավել ռիսկային դաշտում են, ինչպես նաև համալիր գնահատելու բանկի ռիսկայնության համակարգը և ռիսկի յուրաքանչյուր տեսակի գծով ունենալու մանրամասն գնահատականներ: Բանկի ռիսկայնության գնահատման այս համակարգի առավելությունն այն է, որ բանկի ռիսկայնության վերջնական գնահատականի ձևավորման ընթացքում հաշվի են առնվում բազմաթիվ որակական ցուցանիշներ: Նշված համակարգը բանկերում արդյունավետ ներդրվելուց հետո կարող է կիրառվել նաև այլ ֆինանսական կազմակերպություններում՝ ռիսկերը գնահատելու համար:

2009 թվականին իրականացվելու են ՀՀ բանկային համակարգի հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական դաշտը ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու աշխատանքներ:

Հաշվետու տարում դարձյալ արձանագրվել է բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրած հիփոթեքային վարկերի արագատեմպ աճ՝ վկայելով տնտեսությունում երկարաժամկետ վարկերի նկատմամբ ձևավորված պահանջարկի բարձր մակարդակի մասին: ՀՀ կենտրոնական բանկը 2009 թվականին շարունակելու է ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացմանն ուղղված աշխատանքները: Արդեն մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ-ում հիփոթեքային ընկերության ստեղծման և գործունեության մասին» հայեցակարգը: Հիփոթեքային ընկերության ստեղծմամբ նախատեսվում է ներդնել արդյունավետ ենթակառուցվածք, որը կնպաստի ՀՀ-ում երկարաժամկետ փողերի ձևավորմանը, որոնք ուղղվելու են հիփոթեքային վարկավորման շուկա:

2009 թվականին նախատեսվում է արժեթղթավորման հիմնադրամների գործունեության կարգավորում և կանոնակարգում: Դա հնարավորություն կտա զարգացնելու ՀՀ-ում արժեթղթերի երկրորդային շուկան, ապահովելու բանկերի և վարկային կազմակերպությունների իրացվելիության խնդիրների լուծումը, նպաստելու բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական միջնորդության աստիճանի բարձրացմանը, մասնավորապես՝ զարգացնելու հիփոթեքային վարկավորումը, ինչպես նաև ֆինանսական շուկայում մեծացնելու «երկար փողերի» ծավալը:

Տնտեսությունում երկարաժամկետ միջոցների ձևավորմանը, հետևաբար ֆինանսական համակարգի ընդլայնմանն ու ֆինանսական միջնորդության բարձրացմանը էապես կարող է նպաստել կենսաթոշակային համակարգի արդյունավետության բարձրացումը: ՀՀ կենտրոնական բանկը 2009 թվականին կշարունակի

կենսաթոշակային համակարգի բարեփոխումների հետ կապված աշխատանքներին իր ակտիվ մասնակցությունը:

2009 թվականի մայիսի 26-ից ուժի մեջ կմտնի «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքը: Այս առումով նախատեսվում է կանոնակարգել նաև վերջիններիս գործունեության ենթաօրենսդրական դաշտը (Վարկային բյուրոների լիցենզավորումը, Վարկային բյուրոների տարածքային, տեխնիկական, անվտանգության և ծրագրային հագեցվածության պահանջները, Վարկային բյուրոների գործունեության կարգավորումը, Վարկային բյուրոների կողմից ներկայացվող հաշվետվությունները):

ՀՀ կենտրոնական բանկը նախատեսում է 2009թ. շարունակել ՀՀ վճարահաշվարկային բնագավառը կարգավորող իրավական դաշտի փոփոխությունները: Մասնավորապես՝ կարգավորվելու է «էլեկտրոնային փող» թողարկող կազմակերպությունների գործունեությունը: Նախատեսվում են նաև «մոբիլ-բանքինգ» և «ինտերնետ-բանքինգ» տեխնոլոգիաների միջոցով մատուցվող ծառայությունների կարգավորման և զարգացման աշխատանքներ: Նշված տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս հաճախորդներին իրականացնելու իրենց բանկային հաշիվների հեռահար կառավարում, ինչպես նաև նպաստում են անկանխիկ վճարումների զարգացմանը՝ հիմնականում կապված կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների, ապահովագրավճարների, բյուջետային վճարումների և այլ նմանատիպ վճարումների հետ:

2008 թվականին ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում քննարկվել է պետական կառավարման մարմինների առաջարկությունների հիման վրա մշակված **«Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին» ՀՀ օրենքի նախագիծը** և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ՀՀ օրենքների նախագծերը:

2009 թ. նախատեսվում է օրենքը ներկայացնել Ազգային ժողով: Օրենքի ընդունման նպատակն է զարգացնել անկանխիկ շրջանառությունը, պայքարել ստվերային տնտեսության դեմ: Նախագիծը սահմանում է, թե ինչպիսի գործարքներ և գործառնություններ պետք է իրականացվեն անկանխիկ, ընդ որում՝ անկանխիկ են համարվում վճարողի բանկային հաշվից կատարվող վճարումները, որոնց արդյունքում վճարման ենթակա դրամական միջոցները մուտքագրվում են շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին (այսինքն՝ անկանխիկ վճարում է համարվում բանկային հաշվից բանկային հաշիվ կատարվող վճարումը):

2009 թվականին Կենտրոնական բանկը շարունակելու է ակտիվ համագործակցությունը «ՆԱՍԴԱՔ Օ-էմ-էքս Արմենիա»-ի հետ՝ իրականացնելով կապիտալի շուկայի զարգացմանն ուղղված միջոցառումներ: Այդ միջոցառումները իրականացվելու են 3 հիմնական ուղղություններով.

1. Ներդրումային հնարավորությունների ընդլայնում. այս ուղղությամբ կարելի է առանձնացնել բաժնետոմսերի առաջնային հրապարակային առաջարկների (IPO-ների) և ցուցակումների դեպքում ժամանակավոր հարկային արտոնությունների նախաձեռնումը, նոր թողարկումների համար նպաստավոր օրենսդրական դաշտի ձևավորումը, տեղաբաշխողների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանն ուղղված քայլերը և այլն:
2. Շուկայի ենթակառուցվածքների կատարելագործում. մասնավորապես՝ առևտրի և հաշվարկային համակարգերի կատարելագործում (առանց նախնական դեպոնացման T+3 վերջնահաշվարկի համակարգի ներդրման նախաձեռնում և այլն):
3. Մարքեթինգի և շուկայի տարբեր մասնակիցների իրազեկության բարձրացման միջոցառումներ:

2009 թվականին շարունակվելու է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքից բխող բազմաթիվ իրավական ակտերի մշակումը և նախկինում մշակված իրավական ակտերի վերանայումը:

2009թ. ընթացքում Կենտրոնական բանկը նախատեսում է մշակել ներդրումային ֆոնդերի գործունեությունը կարգավորող օրենսդրությունը և ենթաօրենսդրական դաշտը: Նպատակը այնպիսի մեխանիզմների ձևավորումն է, որոնց միջոցով մանր ներդրողները հնարավորություն կստանան միավորելու իրենց միջոցները և իրականացնելու բազմազանեցված կոլեկտիվ ներդրումներ: Ներդրումային ֆոնդերի օրենսդրության ձևավորումը կստեղծի նաև անհրաժեշտ իրավական հիմքեր՝ վենչուրային հիմնադրամների, արժեթղթավորման հիմնադրամների, ինչպես նաև կենսաթոշակային ակտիվների կառավարիչների և պահառուների գործունեության համար:

Նախատեսվում է շարունակել ապահովագրական շուկայի արդյունավետ գործունեությունը ապահովող ենթակառուցվածքների ներդրումը: 2008 թվականին սկսվել են և 2009 թվականին կշարունակվեն աշխատանքները ստորև դիտարկվող նախագծերի ուղղությամբ.

1. 2008 թվականին Կենտրոնական բանկի կողմից մշակվել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը տարեվերջին հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ: Ներկայումս օրենքի նախագիծը ՀՀ Ազգային Ժողովի օրակարգում է և նախատեսվում է ընդունել 2009 թվականին:

2. Կատարվելու են նաև Հայաստանում պարտադիր ապահովագրության այլ տեսակների ներդրման հեռանկարների ուսումնասիրման աշխատանքներ: Միջազգային լավագույն փորձում կիրառվող պարտադիր ապահովագրության տեսակները ներառում են բժշկական, քաղաքացիական ընդհանուր պատասխանատվության, առանձին մասնագիտությունների գծով մասնագիտական պատասխանատվության և արտադրությունում դժբախտ պատահարների և առողջության պարտադիր ապահովագրությունը: 2009 թվականին նախատեսվում է գնահատել Հայաստանում պարտադիր ապահովագրության առանձին տեսակների ներդրման նպատակահարմարությունը, դրանց հիման վրա մշակել Հայաստանում ընտրված պարտադիր ապահովագրության տեսակների ներդրման ռազմավարություններ:

3. 2008 թվականի ընթացքում սկսել է գործել ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների հաճախորդների տեղեկատվական համակարգը (ապահովագրական ռեգիստրը), ըստ որի՝ ապահովագրական ընկերությունները հնարավորություն են ստանում պայմանագիր կնքելուց առաջ տեղեկատվություն ստանալու նախկինում կնքված նմանատիպ ապահովագրական պայմանագրերի, հավանական ապահովադիրների վերաբերյալ և իրականացնելու ապահովագրական սակագների առավել արդյունավետ հաշվարկ: 2009 թվականին այս համակարգը կկատարելագործվի:

4. ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ կշարունակվեն այս ոլորտում միասնական տեղեկատվական շտեմարանի ստեղծման աշխատանքները: Շտեմարանը հավաքագրում է հասարակության յուրաքանչյուր անդամի բժշկական պատմությունը և ապահովում դրա հասանելիությունը առողջապահական հաստատություններին, հետագայում՝ նաև ապահովագրական ընկերություններին:

ՀՀ ֆինանսական համակարգի վերահսկողության զարգացման հեռանկարները

2009 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակելու է ֆինանսական համակարգի՝ ըստ ինստիտուտների (բանկեր, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձինք և

այլն) վրա հիմնված վերահսկողությունից նոր վերահսկողական համակարգին անցման գործընթացը: Հստակ տարանջատվելու են կանխարգելիչ (prudential) և շուկայի արդարության ապահովմանն (market conduct) ու ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված կարգավորման/վերահսկողության գործառույթները:

Կարևորվելու են սպառողների շահերի պաշտպանության միջոցառումները, որոնք իրականացվելու են երեք ուղղությամբ.

1. ֆինանսական ընկերությունների գործարար վարվելակերպի օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի բարելավում, որը կապահովի սպառողների շահերի պաշտպանության համար անհրաժեշտ իրավական գործիքները:

2. ՀՀ բնակչության ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացում. նախատեսվում է իրականացնել կրթական և իրազեկմանն ուղղված միջոցառումներ հետևյալ թիրախային խմբերում՝ դպրոցականներ, ուսուցիչներ, լայն հասարակություն: Հետագա տարիներին թիրախային խմբերի թիվը կընդլայնվի:

3. Կենտրոնական բանկի վերահսկողական կարողությունների ամրապնդումը: Սպառողների շահերի պաշտպանությունը և ընկերությունների գործարար վարվելակերպի կարգավորումն ու վերահսկողությունը նոր գործառույթ է ԿԲ-ի համար: Ուստի նախատեսված է մշակել վերահսկողական նոր ձեռնարկներ՝ գործարար վարվելակերպի արդյունավետ, միասնական և ամբողջական վերահսկողություն իրականացնելու համար:

Նախատեսվում է ներկայումս իրականացվող համախմբված վերահսկողության գործընթացները առավելագույնս կանոնակարգել և այդ վերահսկողության սկզբունքները ներդնել ՀՀ ֆինանսական համակարգում: Վերջինիս նպատակը ֆինանսական խմբի կառուցվածքի վերլուծության, խմբի կապիտալի համարժեքության գնահատման, խմբային ռիսկերի ու խմբի ֆինանսական վիճակի վրա ներխմբային գործարքների ազդեցության բացահայտման ուղղությամբ վերահսկողների գործունեության ներքին կանոնակարգումն է:

2009 թվականին կկատարելագործվեն ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման վաղ ահազանգման գործիքները, կմշակվեն և կներդրվեն վերահսկողների կողմից ստուգումներ իրականացնելու գործընթացը կանոնակարգող ձեռնարկներ: Որպես վաղ ահազանգման գործիք՝ վերջնական տեսքով ներդրվելու և կիրառվելու է ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշների ամփոփ գնահատականը՝ «ՔԱՌԱՄԵԼՍ»-ը, որը թույլ է տալիս գնահատել ընկերության ֆինանսական կայունությունն ըստ հիմնական ցուցանիշների՝ կապիտալ, ակտիվներ, պահուստներ, ակտուարական հաշվարկներ, կառավարում, եկամտաբերություն, իրացվելիություն և շուկայի նկատմամբ զգայունություն:

Վերահսկողության գործընթացների կանոնակարգման նպատակով 2009 թվականին նախատեսվում է մշակել «Ներդրումային ընկերությունների հեռակա վերահսկողության» և «Ներդրումային ընկերությունների տեղերում ստուգումների իրականացման» ձեռնարկներ և «Ապահովագրական ընկերությունների հեռակա վերահսկողության ձեռնարկ»: Դրանցում մանրամասն ներկայացվելու է տեղերում ստուգումների և հեռակա վերահսկողության գործընթացը, ուսումնասիրության ոլորտները: Ապահովագրական ընկերություններում ռիսկերի կառավարման համակարգերի ձևավորման նպատակով ներքին հսկողության նվազագույն պայմանների նկատմամբ սահմանվելու են նոր պահանջներ, իրականացվելու են ապահովագրության ոլորտում Վճարունակություն 2 համակարգի ներդրման նախապայմանների ձևավորման աշխատանքներ:

Շարունակվելու են հանդիպումները ԱՊՀ անդամ երկրների արժեթղթերի շուկան կարգավորող մարմինների ղեկավարների խորհրդի շրջանակներում, ընդ որում՝ 2009 թվականին խորհրդի նիստերը անցկացվելու են ՀՀ-ում, և նիստերը նախագահելու է ՀՀ կենտրոնական բանկի նախագահը: 2009 թվականին նախատեսվում է ՌԴ և ՀՀ վերահսկողների միջև արժեթղթերի շուկայի կարգավորման ու վերահսկողության ոլորտներում փոխհամագործակցության համաձայնագրի մշակման աշխատանքներ իրականացնել: Շարունակվելու են «Խորհրդատվության, համագործակցության և տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» ԱՀՄԿ-ի (International Organization of Securities Commissions) բազմակողմանի համաձայնության հուշագրին (Multilateral Memorandum of Understanding (MOU) concerning consultation and cooperation and the exchange of information) միանալու աշխատանքները: Այս հուշագրին միանալու դեպքում հնարավորություն կստեղծի օտարերկրյա կարգավորողներից հարցման հիման վրա ստանալու արժեթղթերի շուկայի վերահսկողության համար անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև ցուցաբերելու փոխադարձ աջակցություն:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, դրանց մասնաճյուղերը

	Առևտրային բանկեր	Մասնաճյուղեր	
		31.12.2007	31.12.2008
1	ՎՏԲ - Հայաստան բանկ	89	78
2	Արդշինինվեստբանկ	53	55
3	Հայէկոնոմբանկ	45	46
4	Արցախ բանկ	14	14
5	Կոնվերսբանկ	23	25
6	ԱԿԲԱ - Կրեդիտ Ագրիկոլ բանկ	27	30
7	Յունիբանկ	29	30
8	Անելիք բանկ	8	10
9	Առէկսիմբանկ	9	12
10	Ինեկոբանկ	5	8
11	Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	7	9
12	Պրոմեթեյ բանկ	3	4
13	Ամերիա բանկ	-	1
14	Զարգացման հայկական բանկ	2	2
15	Հայբիզնեսբանկ	12	18
16	Մելլաթ բանկ	-	-
17	Կասկադ բանկ	-	2
18	Բիբլոս բանկ Արմենիա	4	3
19	ԲՏԱ բանկ	3	5
20	Արարատ բանկ	14	25
21	Արմսվիսբանկ	-	-
22	ՊրոԿրեդիտբանկ	-	4
Ընդամենը		**347**	**381**

Հավելված 2. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշներ

հազար դրամ

Ցուցանիշներ	Արժույթ	31.12.06	31.12.07	Փոփոխությունը 31.12.07-31.12.06	31.03.08	Փոփոխությունը 31.03.08-31.12.07	30.06.08	Փոփոխությունը 30.06.08-31.03.08
Կանխիկ դրամական միջոցներ	Դ	15372106	24257482	57.8%	23239487	-4.2%	22832269	-1.8%
	Ա	15198111	14834047	-2.4%	16964617	14.4%	20961044	23.6%
Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ	Դ	38169305	37055489	-2.9%	24658107	-33.5%	30087752	22.0%
	Ա	23628784	38421252	100.0%	31445077	-18.2%	39963263	27.1%
Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ	Դ	3723119	6761399	81.6%	11604765	71.6%	11639920	0.3%
	Ա	58087230	56700017	-2.4%	56361198	-0.6%	79394445	40.9%
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Դ	8714525	8059228	-7.5%	10254239	27.2%	10366371	1.1%
	Ա	1455717	1859946	27.8%	2248487	20.9%	2719711	21.0%
Պետական արժեթղթեր		93623489	112190196	19.8%	109710239	-2.2%	89447786	-18.5%
Պարտավորություններ ռեպո համաձ. ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոպով ձեռք բերված արտարժույթի գծով	Դ	-11730337	-17126389	46.0%	-16200333	-5.4%	-14314704	-11.6%
	Ա	-610680	-2458329	302.6%	-8361784	100.0%	-9081200	8.6%
Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ	238401	859588	260.6%	1040394	100.0%	182694	-82.4%
	Ա	0	675841	100.0%	346603	-	314176	-
Վարկեր իրավաբանական անձանց	Դ	54234059	79265242	46.2%	90368436	14.0%	103203465	14.2%
	Ա	60316870	113159142	87.6%	126410708	11.7%	137673786	8.9%
Վարկեր ֆիզիկական անձանց	Դ	49395335	158273388	220.4%	177563869	12.2%	212020170	19.4%
	Ա	59577126	47981879	-19.5%	53630366	11.8%	57844419	7.9%
Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	2527026	5032022	99.1%	6433898	27.9%	8369312	30.1%
	Ա	3603253	5019836	39.3%	5898447	17.5%	5295287	-10.2%
Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ		-4562064	-7701615	68.8%	-9228302	19.8%	-10128987	9.8%
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ		3106010	4577615	47.4%	5578497	21.9%	6416446	15.0%
Հիմնական միջոցներ		30684002	42534713	38.6%	42889498	0.8%	45292722	5.6%
Այլ արժեթղթեր		1225834	2705543	120.7%	2599022	-3.9%	2061174	-20.7%
Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի)		4019180	7928440	97.3%	8373983	5.6%	9442006	12.8%
